

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՐԲԵՐԸ



ՆԻԻԹԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ
«ԹՈՉՆՈՑ ԲՈՅՆ» ՈՐԲԱՆՈՑԻ
ՍՏԵՂԾՄԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ



1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՈՐԲԵՐԸ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

808114

ՆԻԹԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ
«ԹՈՂՈՑ ԲՈՅՆ» ՈՐԲԱՆՈՑԻ
ՍՏԵՂԾՄԱՆ 100 ԱՍԵԱԿԻՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ

240



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

240

Signature of Mesrob Ashjian

ԵՐԵՒԱՆ 2023



**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY**

**ARMENIAN GENOCIDE AND ORPHANS
ROUNDTABLE DISCUSSION**

**COLLECTION OF PAPERS PRESENTED DURING
ROUNDTABLE DISCUSSIONS DEDICATED TO THE 100TH
ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT OF THE
«BIRD'S NEST» ORPHANAGE**

YEREVAN 2023

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(52)g43

Հ 240

**ՏՊԱԳՐՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՍԲ**

Գլխավոր խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնեան
Բաժնագրական խորհուրդ՝ պ.գ.դ., փրոֆեսոր Գեորգ Ստեփանեան
պ.գ.դ., փրոֆեսոր Արմեն Մարուքեան
պ.գ.թ. Անի Ֆիշենկեան

Հ 240 «Հայոց ցեղասպանությանը եւ որբերը» կյոք սեղան
քննարկում (15 Նոյեմբեր 2022 թ.) նիւթեր.- Եր.: ՀՀ ԳԱԱ
պատմութեան ինստիտուտ, 2023.- 149 էջ:

Ծաղովածուն կ'ընդգրկէ 2023 թ.Նոյեմբեր 15-ին ՀՀ ԳԱԱ
պատմութեան ինստիտուտի մէջ «Թոշնոց բոյն» որբանոցի
ստեղծման 100 ամեակին նուիրուած կյոք սեղան քննարկումի
նիւթերը:

Հաստաքը կը նախատեսուի հայոց, մասնաւորապէս
սփիւտքի պատմութեան հարցերով հետաքրքրուող, ինչպէս
նաեւ քննադատող լայն շրջանակներու համար:

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(52)g43

ISBN 978-9939-892-31-3

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2023



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏՆՆՆ ԿԻԼԻԿԻԱՅ
Անթիքա, Լիբանոս

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ամբիլիասի Մայրավանքէն հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական շնորհ սիրով ու ազգային վառ աշուրմաներով կ'ողջունենք ձեզ: Մեր քարձր գնահատանքը կ'ուզենք յայտնել Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի «Կատարական Ինստիտուտին» Ճիպէլլի «Թռչնոց Բոյն»ի 100-ամեակին առիթով իր կազմակերպած «Հայ որբերը օրպէս ցեղասպանութեան զոհեր» գիտաժողովին համար:

Հայոց ցեղասպանութիւնը իր բազմազան ու ալլազան տարածքներով, արտայայտութիւններով, երեւոյթներով ու հետեւանքներով մեր ժողովուրդի հաւաքական յիշողութեան մէջ խորապէս արմատացած է: Այս ծիրէն ներս, ցեղասպանութենէն վերապրող որբերու ահաւոր տրեւոյթները յատուկ տեղ է գրաւած ցեղասպանութեան պատմութեան մէջ: Անճնական յուշեր, վաւերաբույրներ, վկայութիւններ ու նամակներ, հայ թէ օտար աղբիւրներէ քաղուած, կենդանի ու փաստացի վկայութիւններ են մեր որբերու ազրած ողիսականի մասին՝ Արեւմտեան Հայաստանէն մինչեւ Կիլիկիա եւ ապա՝ Սուրիա ու Լիբանան:

Հայոց ցեղասպանութեան ամենէն սու ու մոռալ էջը կը կազմէ որբերու պատմութիւնը: «Թռչնոց Բոյն»ի մէջ հաստատուած Հայոց Ցեղասպանութեան «Արամ Պէզինեան» Որբերու Թանգարանը պերճախօս վկայութիւն ընէ է մեր որբերու ապրած տառապալից կեանքին: Արդարեւ, մեր պատմութեան այս ճակատագրական շրջանին, փրկարար դեր կատարեցին Զուիցերիայէն, Տաիֆմառէյէն, Ֆրանսայէն, Գերմանիայէն եւ Նուրպայի այլ շրջաններէն եկած միսիոնարներ, օրոք իրենց երկիրներու խաղաղ ու հանգստաւէտ պայմանները թողած, եկան ցեղասպանութեան զոհ թացած եւ անոր հետեւանքները կրող հայ ժողովուրդին օժանդակելու: Անոնք նախ կազմակերպեցին որբահաւաք, եւ ապա ֆիզիկական կողմէն կրթական ու հոգեւոր սնունդ շարձեցին հազարաւոր որբերու:

Այնքան յուզիչ է կարդալ միսիոնարներու վկայութիւնները որբերու մասին, եւ մանաւանդ անոնց կատարած երախտարժան գործը, մեր կեանքի ամենէն տաք-նազալից պայմաններուն մէջ: Միսիոնարները, Աւետարանի բացատրութեամբ՝ Բարի Սամարացիներ դարձան մեր ժողովուրդին համար: Թուրք ջարդեց մեզ,



ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Անթիլիաս, Լիբանան

ուրիշներ լեցին մեզ. միայն ֆրիստոնէական արժէքներով լեցուն խումբ մը միսիոնարներ՝ հետեւելով աւետարանական սկզբունքներուն, սիրոյ ու օժանդակութեան ձեռք երկարեցին մեր որբերուն:

Արդ, հայոց ցեղասպանութեան պատմութեան որբահաւաքի ու որբախնամութեան այս տխուր էջը պէտք է մոռացութեան դատապարտուի: Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին առիթով, եւ զանազան առիթներով, Մեմֆ անձնապէս Մեր երախտագիտութիւնը յայտնած ենք այն կազմակերպութիւններուն, եկեղեցիներուն կամ երկիրներուն, ուրկէ միսիոնարներ եկած էին, ոմանք ճոյնիսկ հայերէն սորված էին ու երկար տարիներ ապրած որբերուն հետ, որբանոցներ հիմնած ու դարձած որբերու խմամատար մայրերը: Ճիշդ է՝ "Թռչնոց Իռլըն"ը շօշափելի օրինակ մըն է միսիոնարներու կատարած նախախնամական սրբազան գործին:

Ահա թէ ինչու որբերը, որպէս ցեղասպանութեան զոհեր, լուսարձակի տակ ընդունուին ներկայ նախաձեռնութիւնը ջերմօրէն կ'ողջունենք: Վստահ ենք, որ մեր սիրելի Դոկտ. Աշոտ Մելիքեանի գլխաւորութեամբ յատուկ ֆենարկուսներ պիտի կատարէ՝ վերաշնչելով միաժամանակ որբերու կատարած նշանակալից դերը Սփիւռքի կազմաւորման ու կազմակերպման աշխատանքներուն մէջ:

Ամզամ մը եւս Մեր ջերմ գնահատանքը ու օրհնութիւնը կը փոխանցենք ձեզի՝ մաղթելով յաջողութիւն ձեր ֆենարկուսներուն մէջ: Կաթօքենք առ Բարձրեայն Աստուծոյ, որ անսասան ու քարզաւաճ պահէ Հայաստանի եւ Արցախի Հանրապետութիւնները եւ մեր ողջ ազգը:

Հայրական ջերմ սիրով՝

Աղօթարար՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

15 Նոյեմբեր 2022
Անթիլիաս, Լիբանան

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Հայոց ողբերգական ճակատագրի անբաժան մասն են կազմում հայկական որբանոցները: Օսմանեան կայսրութիւնում սուլթան Ապտիլ Համիտ 2-րդի կողմից 1894-1896 թթ. կազմակերպուած հայերի ցեղասպանութիւնից յետոյ հայ եւ օտար բարեխնամ ու միսիոներական հաստատութիւնների հսկողութեան ներքոյ Արեւմտեան Հայաստանում, Կիլիկիայում, Կ. Պոլսում, Իզմիրում, Կէսարիայում եւ այլ վայրերում հիմնուեցին որբանոցներ, որոնք հովանաւորել ու պատասպարել են կոտորածների հետեւանքով որբացած հայ երեխաներին:

Հայ որբերի թիւը կտրուկ աւելացաւ յատկապէս 1915-1923 թթ.՝ Օսմանեան կայսրութեան հայաբնակ շրջաններում եւ Արեւմտեան Հայաստանում երիտթուրքերի պետական մակարդակով կազմակերպած հայերի ցեղասպանութեան հետեւանքով՝ հասնելով 200.000-ի: Հայ որբերը ապաստան գտան Խարբերդի, Մերաստիայի եւ Մալաթիայի գաւառների որբանոցներում, որոնք անօրինում էին շուէյցարացի միսիոներներ Յակոբ Կիւնցլերը եւ նրա տիկինը, դանիացի միսիոներներ Մարիա Եսկըսսենը, Քարէն Փիթերսոնը եւ Քարէն Եփփէն:

Հայոց ցեղասպանութիւնից յետոյ յատկապէս Մերձաւոր Արեւելքի երկրները դարձան փրկութեան ափ տարաբախտ հազարաւոր հայ որբերի համար: Դանիական, շուէյցարական, ամերիկեան եւ շուեռական մարդասիրական կազմակերպութիւնները հիմնեցին որբանոցներ ու օգնութեան կեդրոններ: Լիբանանում եւ Միքիայում առաջին հայկական որբանոցները հաստատուել են Առաջին աշխարհամարտից անմիջապէս յետոյ,

բայց որբերի թուաքանակն այնտեղ զգալիօրէն աճել է Կիլիկիայի պարպումից յետոյ՝ 1923 թուականին հասնելով շուրջ 20.000-ի: Որբանոցները տեղադրուած էին Հալէպ, Ճըպէլ, Մաամելթէյն, Ղազիր, Ճունի, Պէյրութ, Սայտա եւ Դամասկոս քաղաքներում:

Լիբանանի նշանաւոր ու առանձնայատուկ որբանոցներից էր ծովեզերեայ Ճըպէլ (Պիպլոս) քաղաքում դանիացի միսիոներուի Մարիա Եակոբսոնի կողմից 1922 թ. հիմնուած որբանոց-վարժարանը՝ «Թոչնոց բոյն»ը: Այն ամենամեծ որբանոցներից էր, որտեղ ցեղասպանութիւնից մազապործ հազարաւոր հայ որբերի կերակրել, բազմաբնոյթ խնդիրները լուծել, գործուրել ու մեծացրել է «մամա»ն՝ հայերէնին հիանալի տիրապետող Մարիա Եակոբսէնը, որի շիրիմը նաեւ ուխտավայր է Ճըպէլում: Որբանոցի սան Մանուշակ Թամպուլեանն աւելի ուշ իր յուշերում գրել է. «Շատ փոքր էի, երբ ինձ «Թոչնոց բոյն» տեղափոխեցին: Ես մենակ չէի, այլ ընկերուիւս՝ Լիւսիայի հետ: Մենք հասկանում էինք, որ որբեր ենք եւ մէկ ընդհանուր մայր ունենք՝ Եակոբսէն մայրիկը: Ամերիկայից մի քանի անգամ եկան գեղեցիկ աղջիկների որդեգրելու: Մայրիկը միշտ հարցնում էր մեզ՝ ուզո՞ւմ էք գնալ: Իսկ մենք ասում էինք՝ ոչ, երբեք: Եակոբսէն մայրիկից բացի, մենք այլ մայրեր եւս ունէինք, քոյրեր նոյնպէս, մենք մեծ ընտանիքով էինք ապրում»:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Արամ Ա.-ի նախաձեռնութեամբ «Թոչնոց բոյն» որբանոցի շէնքերից մէկն այսօր վերածուել է հեղինակաւոր թանգարանի: 2015-ի Յուլիսի 18-ին կատարուեց թանգարանի բացումը: Ինչպէս իր խօսքում նշել է Վեհափառը, «Սա սովորական թանգարան չէ այդ բառի ընդունուած իմաստով: Այս

թանգարանը յիշեցում է, որ սպանուել են մեկուկէս միլիոն հայեր: Այս թանգարանը կենդանի յիշեցում է, որ Հայոց ցեղասպանութեան հազարաւոր որբեր, հասել են այս հողը, այստեղ գուրգուրուել, կերակրուել ու կրթութիւն ստացել օտար՝ դանիացի, ամերիկացի, շուէյցարացի միսիոներների կողմից: «Թոշնոց բոյնը» սպանուեց Արեւմտեան Հայաստանում, հայերը «Թոշնոց բոյն» կառուցեցին Լիբանանի հողում:

Ի յիշատակ «Թոշնոց բոյն» որբանոցի հիմնադրման 100-ամեակի, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտը «Հայ գաղթօճախների եւ Սփիւռքի պատմութեան», «Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանութեան պատմութեան» բաժինների նախաձեռնութեամբ 2022 թ. Նոյեմբերի 15-ին կազմակերպեց «Հայ որբերը, որպէս ցեղասպանութեան զոհեր» կլոր սեղան-քննարկում:

Սոյն ժողովածուն իր տեսակի մեջ առաջինը լինելով՝ Հայոց ցեղասպանութիւնը խորհրդանշող վկայութիւններից մէկն է: Այն նաեւ իւրովի յարգանքի տուրք է նախ Հայոց Մեծ Եղեռնի անմեղ զոհերի յիշատակին, եւ, երկրորդ, յանձին Մարիա Եակոբսենի բոլոր այն յայտնի եւ անյայտ հերոսուհի միսսներուհիների, որոնց ջանադիր ու նուիրական գործունէութեան շնորհիւ փրկուել է որբացած հազարաւոր հայ երեխաների կեանք, պահպանուել է նրանց հոգածութեան ներքոյ՝ հայկական ինքնութիւնն ու մայրենի լեզուն:

Գեորգ Ստեփանեան
«Հայ գաղթօճախների եւ Սփիւռքի պատմութեան»
բաժնի վարիչ, պ.գ.դ., փրոֆէսոր

ՀԱՅ ՈՐԲԵՐՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՄՐՈՒԹԵԱՆ
ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԹԻՐԱԽՈՒՄ

Արմեն Յ. Մարութեան
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
պ.գ.դ., փրոֆեսոր

*Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն,
Օսմանեան կայսրություն, ձուլման քաղաքականություն,
հայ որբեր, մանկահասակ հայ աղջիկներ, թուրքական
որբանոցներ, մահմեդական ընտանիքներ:*

Հայերի դեմ ծրագրուած եւ հետեւողականօրէն
իրագործուած ցեղասպանական քաղաքականութեան
մէջ Օսմանեան կայսրութեան իշխանութիւններն
առեւմտեան լատինական վերաբերմունք էին դրսեւորում որբա-
ցած հայ մանուկների նկատմամբ: Ի տարբերութիւն
իրենց ծնողների, որոնք իրենց հայրենի բնակավայրերից
արտաքսուեցին ու ոչնչացուեցին, որբացած հայ երեխա-
ները հարցում թուրքական իշխանութիւնները վերջիննե-
րիս ուժացման քաղաքականութիւն էին որդեգրել: Այն, որ
Հայոց ցեղասպանութեան գլխաւոր կազմակերպիչներից
Օսմանեան կայսրութեան ներքին գործերի նախարար
Թալէաթ փաշան հայերի զանգուածային բնաջնջումը
ծրագրելիս որոշակիօրէն թիրախաւորել է հայ որբերին,
վկայում է այն փաստը, որ 2008 թ. թուրք լրագրող Մու-
րատ Պարտազադիի կողմից հրատարակուած «Թալէաթ

փաշայի օրագրի» չթուագրուած փաստաթղթերի շարքում հանդիպում է նաեւ «Հայ որբերը (մահմետականների մէջ բաշխուածների եւ այդ պահին գոյութիւն ունեցողների թրւերը /թուերը/)» վերնագրով փաստաթուղթը¹:

Օսմանեան բազմաթիւ վաւերագրերի ուսումնասիրութեան հիման վրայ թուրք պատմաբան Թ. Աքչամը եզրակացնում է, որ հայերի ցեղասպանութեան ընթացքում մանկահասակ հայ աղջիկներն ու տղաները ենթարկուում էին բռնի մահմետականացման, այնուհետեւ տեղաւորուում մահմետական որբանոցներում կամ բաշխուում մահմետական ընտանիքների վրայ, ինչն ամենեւին չէր նշանակում, որ մանկահասակ հայ երեխաներն ընդհանրապէս չէին ոչնչացւում²: Աքչամի այս եզրայանգմանը հարկ ենք համարում յաւելել, որ թուրքական իշխանութիւնների կողմից ձուլման քաղաքականութիւնն իրականացւում էր արդէն իսկ ծնողներից ու հարազատներից զրկուած կամ գաղթի ճանապարհին ու ժամանակատար կանգառներին նրանցից բռնութեամբ խլուած հայ մանուկների նկատմամբ, իսկ միւս բոլոր դէպքերում հայ երեխաները ոչնչացւում էին իրենց ծնողների հետ միասին: Յայտնի է, որ տեղահանուող հայերի քարաւանների կայանատեղիները ժանտարմների թողտուութեամբ վե-

¹ Տե՛ս Աքչամ Թ., Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դէմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ գտումները Օսմանյան կայսրությունում, Եր., 2015, էջ 298:

² Տե՛ս նոյն տեղում, էջ 384:

րաճում էին երեխաների եւ հասուն աղջիկների ստրկութեան վաճառելու շուկաների՝ թոյլատրելով նրանց գնել միայն մահմետականներին:

Որքացած հայ մանուկներին որպէս ուժացման քաղաքականութեան թիրախ ընտրելու թուրքական իշխանութիւնների գործելաոճը պայմանաւորուած էր նրանով, որ ծնողների կամ հայ ինսամակալների գոյութեան պայմաններում մանկահասակ հայ երեխաներին ձուլման ենթարկելը շատ անելի դժուար կը լինէր:

Տեղասպանութեան ընթացքում հայ որբերի ձուլման գործընթացը թուրքական իշխանութիւնների կողմից իրականացում էր պետական որբանոցների եւ մահմետական ընտանիքների միջոցով՝ հաշուի առնելով երեխանների տարիքային խմբերը: Այսպէս, տասներեք տարեկանից մեծ տղաները ենթակայ էին տեղահանութեան, իսկ նոյն տարիքի աղջիկներին ամուսնացնում էին մահմետականների հետ: Տասից մինչեւ տասներեք տարեկան երեխաները տեղաւորում էին թուրքական որբանոցներում, իսկ այդ տարիքից փոքր երեխաները որբանոցներից բացի կարող էին տեղաւորուել նաեւ մահմետականների ընտանիքներում³:

Չայ որբերի խմբերի նման բաժանումը պայմանաւորուած էր նրանով, որ մեծահասակ երեխաների մօտ արդէն իսկ քիչ թէ շատ արդէն իսկ ձեւաւորուած էր հայ-

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 401:

կական ինքնութիւնը, ուստի նրանց ձուլման գործընթացը վստահում էր կայսրութեան կրթութեան նախարարութեան կողմից բացուած պետական որբանոցներին: Ի տարբերութիւն թուրքական պետական որբանոցների, կայսրութեան տարածքում գործող օտարերկրեայ միսիոներական որբանոցներում հայ մանուկների ազգային ինքնութիւնը ինչ-որ չափով պահպանում էր, ուստի թուրքական իշխանութիւններն ամէն կերպ ձգտում էին կասեցնել հայ որբերին ձուլելու իրենց քաղաքականութեանը խոչընդոտող այդ կառոյցների գործունեութիւնը: Առաջին աշխարհամարտի սկսուելուց յետոյ միսիոներական դպրոցների մի մասը փակուեց, իսկ հետագայում սկսեցին փակուել նաեւ ամերիկեան եւ նոյնիսկ գերմանական միսիոներական դպրոցները, որոնք հայերի զանգուածային կոտորածների ժամանակ վերածուել էին որբանոցների:

Ինչ վերաբերում է մահմետական ընտանիքների կողմից «որդեգրման» միջոցով հայ որբերին ձուլելու գործընթացին, ապա պետք է նշել, որ ներքին գործերի նախարարութեան հեռագրերից մէկում կարգադրում էր, որ հայերի տեղահանութիւնից յետոյ առանց խնամակալի մնացած երեխաները պետք է վերաբաշխուէին մահմետական ընտանիքների միջեւ⁴: Յատկանշական է, որ փաստաթղթում չի նշում, որ առանց խնամակալի մնա-

⁴ Տե՛ս նոյն տեղում, էջ 391:

ցած հայ մանուկները մահմետական ընտանիքների միջեւ պետք է վերաբաշխուէին ժամանակաւորապէս, ինչից կարելի է եզրակացնել, որ ներքին գործերի նախարարութեան համար ինչպէս հայ մանուկների, այնպէս էլ նրանց խնամակալների ճակատագիրն արդէն իսկ կանխորոշուած էր:

1915 թ. Յուլիսի 1-ի հայերի կրօնափոխութեան կատեցման հրամանից չորս ամիս անց Թալէաթի անձնական թոյլտուութեամբ կրօնափոխ եւ այդպիսով տեղահանութիւնից ազատուել կարող էին լինել միայն իսլամ ընդունած հայ աղջիկները, որոնց կարգադրում էր անմիջապէս ամուսնացնել մահմետականների հետ⁵: Մահմետականների շրջանում հայ աղջիկներին կնութեան առնելու եւ հայ որբերին իրենց ընտանիքներ վերցնելու գործընթացը խրախուսելու համար «Լքեալ գոյքի» յանձնաժողովների նախագահների միջոցով լուրեր էին տարածում, որ քանի որ կտակարարներն արդէն մահացել են, ուստի այրիացած հայ կանանց, որբացած աղջիկներին եւ որբերի ժառանգութիւնը կը փոխանցուի նրանց նոր ամուսիններին կամ որդեգրողներին⁶: Այս լուրերի տարածումը գործուն խթան հանդիսացաւ մահմետականների կողմից որբացած հայ երեխաներին որդեգրելու, ինչպէս նաեւ այրիացած կանանց ու մանկահասակ հայ աղջիկների հետ ամուսնանալու գործում՝ այդ կերպ նպա-

⁵ Տե՛ս նոյն տեղում, էջ 367-368:

⁶ Տե՛ս նոյն տեղում, էջ 393:

տակ հետապնդելով տիրանալ վերջիններիս ժառանգութեանը:

Խրախուսման միջոցներին զուգահեռ թուրքական իշխանութիւնները հայ որբերին, կանանց ու աղջիկներին ձուլելու քաղաքականութեան ընթացքում գործադրում էին նաեւ ահաբեկման մեթոտներ: Այսպէս, թուրքական երրորդ բանակի հրամանատար Մահմուտ Քեամիլ փաշան զգուշացնում էր, որ եթէ մահմետականների ընտանիքներում յայտնաբերուէն թաքնուած հայեր, չորդեզրուած հայ երեխաններ կամ պաշտօնապէս չամուսնացած աղջիկներ կամ կանայք, ապա այդ մահմետականները մահապատժի կլ'ենթարկուեն⁷: Բացի այդ, մահմետականների հետ ամուսնացած հայ կանանց մանկահասակ աղջիկներին կամ որդեգրուած հայ երեխաններին արգելւում էր տեղափոխել քաղաքներ եւ յատկապէս մայրաքաղաք՝ մտավախութիւն ունենալով, որ նրանք կարող էին փախչել:

Քանի որ որբացած հայ տղաները որպէս էժան աշխատուժ գիւղատնտեսական աշխատանքներում շահագործւում էին իրենց «որդեգրած» մահմետական ընտանիքների կողմից, դրանից ելնելով Թ. Արչամը եզրակացնում է, որ հայ որբերին մահմետական ընտանիքներին «նուիրելու» միջոցով թուրքական իշխանութիւններն այդ կերպ փաստօրէն գնում էին վերջիններիս հաւատարմու-

⁷ Տե՛ս նոյն տեղում, էջ 403-404:

թիւնը: Թուրք պատմաբանը հայ երեխաներին մահմետականների կողմից որդեգրելու եւ այդ միջոցով նրանց ուժացնելու գործընթացն աւելի շուտ հակուած է համարել վերջիններիս «խնամքի տակ վերցնելու» դրսեւորում⁸:

Մանկահասակ հայ աղջիկներին թուրք պաշտօնեաների իբրեւ «նուէր մատուցելու» եւ նրանց սեռական շահագործման ենթարկելու դէպքերը Առաջին աշխարհամարտի վերջին ամիսներին հայ պատգամաւորների կողմից բարձրաձայնուեցին օսմանեան խորհրդարանում: 1918 թ. Նոյեմբերի 18-ի նիստի ընթացում Հալէպից ընտրուած Արթին Պէօշկէզենեանը որոշ թուրք պաշտօնեաներին ու պատգամաւորներին հայ գեղեցիկ կոյսերին եւ մանկահասակ աղջիկներին ապրանքի պէս իրար մէջ բաժանելու եւ նրանց թաքուն ստրկութեան մէջ պահելու բացայայտ մեղադրանք ներկայացրեց⁹: Հայ պատգամաւորի պնդմամբ, որոշ թուրք պաշտօնեաններ նոյնիսկ հասարակաց տներ էին ստեղծել, որտեղ պաշտօնեաներին եւ զինուորականներին գեղեցիկ հայ աղջիկների էին մատուցում¹⁰: Հայ աղջիկներ առեւանգելու եւ նրանց երիւթուրք առաջնորդներին նուիրաբերելու համբաւ ունեցող թուրք պաշտօնեաներից մէկը՝ Մուշի պատգամաւոր

⁸ Տե՛ս նոյն տեղում, էջ 417-419:

⁹ Տե՛ս **Աստույան Ա.**, Դարի կողպատը. Հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ. Եր., «Նաիրի», 2013, էջ 78:

¹⁰ Տե՛ս **Տատրեան Վ.**, Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներում, Ուոթրթաուն, «Պայքար», 1995, էջ 94:

Իլիաս Սամին, հայ պատգամաւորի ելոյթի պահին գտնուում էր խորհրդարանի նիստերի դահլիճում¹¹:

Տրապիզոնի Կարմիր մահիկի հիւանդանոցը վերածուել էր «հաճոյքի տան», որտեղ նահանգապետ Ճեմալ Ազմին եւ թուրք բարձրաստիճան միւս պաշտօնեաներ հայ աղջիկներին իբրեւ հարձեր էին գործածում: Այս դէպքերը քննարկուել են թուրքական ռազմական տրիբունալների Տրապիզոնի դատաւարութեան Մարտի 26-ի նիստի ընթացքում, լսուել են մեղադրեալների եւ ականատեսների վկայութիւններ¹²: Այս դէպքերը համադրելով հայերի դէմ Տրապիզոնի նահանգապետի կատարած այլ յանցանքների հետ, թուրքական ռազմական տրիբունալը Ճեմալ Ազմին դատապարտեց մահուան¹³:

Յատկանշական է, որ ցեղասպանութեան ընթացքում առեւանգուած հայ աղջիկների, կանանց ու որբացած հայ մանուկների իրաւունքների պաշտպանութեան ու վերադարձման հարցերն արծարծուել են նաեւ Օսմանեան կայսրութեան եւ Անտանտի տէրութիւնների միջեւ 1920 թ. Օգոստոսի 10-ին ստորագրուած Մերի պայմանագրում: Պայմանագրի 142-րդ յօդուածով օսմանեան կառավարութեան վրայ պարտաւորութիւն է դրուում որո-

¹¹ Տե՛ս նոյն տեղում:


¹² Տե՛ս Աքչամ Թ., նշվ. աշխ., էջ 386:

¹³ Տե՛ս Հայերի ցեղասպանութիւնը ըստ երիտթուրքերի դատաւարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանութիւնը և ծանոթագրութիւնները Ա. Հ. Փափաղյանի, Եր., 1988, էջ 171, 179:

նել եւ ազատ արձակել 1914 թ. Նոյեմբերի 1-ից յետոյ ան-
հետացած, առեւանգուած, ներկալուած եւ ազատագրկ-
ուած ամեն ռասայի եւ կրօնի անձանց¹⁴: Փաստաթղթի
տուեալ դրոյթով փաստօրէն հնարատրութիւն էր ընձեռ-
ում իրենց կամքին հակառակ գերեվարուած հայ կա-
նանց, աղջիկներին ու որբերին փրկել անխուսափելի ու-
ծացումից եւ ազատ արձակել: Հարկ է նշել, որ պատաս-
խանատու այդ գործը չէր վստահուում թուրքական իշխա-
նութիւններին, այլ նախատեսուում էր Ազգերի Լիկայի
Խորհրդի կողմից ստեղծել խառը յանձնաժողով, որը տու-
ժածների, նրանց ընտանիքի անդամների եւ մերձաւոր-
ների բողոքների հիման վրայ հետաքննութիւններ էր ի-
րականացնելու՝ նշուած խմբերի անձանց յայտնաբերելու
եւ ազատ արձակելու նպատակով: Իր հերթին՝ օսման-
եան կառավարութիւնը պարտաւորուում էր ամեն կերպ
աջակցել այդ յանձնաժողովի գործունեութեանը, ապահո-
վել նրա որոշումների կատարումը, երաշխաւորել տու-
ժածների իրաւունքների վերականգնումը եւ նրանց անվ-
տանգութիւնը¹⁵: Այս դրոյթի ներառումը վկայում է այն
մասին, որ յաղթանակած տերութիւնները հիմնաւոր
կասկածներ ունէին առ այն, որ թուրքական իշխանու-
թիւնները կարող էին փորձել արհեստական խոչընդոտ-
ներ ստեղծել տուեալ գործընթացի համար, այդ պատճա-

¹⁴ St u Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, пер. с фр., изд. Литиздата НКВД, М., 1927, с. 41.

¹⁵ St u նոյն տեղում, с. 42:



ռով էլ թուրքական կողմի վրայ նման պարտաւորութիւններ էին դրուում:

Ինչպէս յայտնի է, ցեղասպանութիւն եզրոյթը շրջանառութեան մէջ դրած միջազգային իրաւունքի մասնագետ Ռաֆայէլ Լեմկինի մասնակցութեամբ մշակուած 1948 թ. Դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի «Ցեղասպանութեան յանցագործութեան կանխարգելման եւ պատժման մասին» կոնվենցիայում այդ յանցագործութեան յանցաւոր գործողութիւնների շարքում նշուում էր ազգային, ռասայական, կրօնական կամ էթնիկ խմբի երեխաներին բռնի մէկ այլ խումբ տեղափոխելը¹⁶: Կոնվենցիայի յանցակազմի բաժնում ամրագրուած այս յանցաւոր արարքը մինչ այդ կատարուած տուեալ յանցագործութեան դէպքերից բնորոշ է եղել հայերի ցեղասպանութեանը: Ինչ վերաբերւում է կոնվենցիայի ընդունմանը նախորդած հրեաների ցեղասպանութեանը, ապա յիշեալ յանցաւոր գործողութեան մասին միանշանակ պնդել հնարաւոր չէ, քանի որ չկան բաւարար պատմական փաստեր, որոնք կ[']ապացուցեն հրեայ երեխաների զանգուածային փոխանցումը գերմանական «արիական» միջավայր¹⁷:

Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող Թ. Աքչամն անընդունելի է համարում հայ ցեղասպանագետ Վ.

¹⁶ St u Права человека. Сборник международных договоров, т. 1, ч. 2, Универсальные договоры ООН, Нью-Йорк и Женева, 2002, с. 781.

¹⁷ St u Марукян А., Проблема Геноцида армян в современной геноцидологии, Ер., 2010, с. 58.

Տատրեանի այն մօտեցումը, որ, ի տարբերութիւն նացիստների, «օսմանեան թուրքերը բաւական բարձր են գնահատել հայ երեխաների մարմնատրած գենոֆոնտի արժէքը»՝ դրա մէջ «ռասիստական մտածելակերպի խրախուսման վտանգ» տեսնելով¹⁸: Մինչդեռ Տատրեանի այս դատողութիւններում արտացոլուած է դառն իրականութիւնը, քանի որ բռնի իսլամացումը հայ որբերից, ինչպէս նաեւ գեղեցիկ հայ աղջիկների բռնի ամուսնութիւններից ծնուած յաջորդ սերունդներով ամբողջութեամբ փոխակերպուեց ժամանակակից թուրքերի գենոֆոնտը: Տուեալ դէպքում խօսքը ոչ թէ Աքչամի, այսպէս կոչուած, «սոցիալական ինժեներութեան», այլ պարզապէս «գենային ինժեներութեան» մասին է եւ պատահական չէ, որ Հայոց ցեղասպանութեան իրագործումից մէկ դար անց էլ «ինքնութեան ճգնաժամը» շարունակում է մնալ ներկայիս Թուրքիայի քաղաքական համակարգի հիմնական մարտահրաւերներից մէկը: Օսմանեան կայսրութիւնից սկսած տարբեր ժամանակաշրջաններում ուժացման ենթարկուած մարդիկ եւ նրանց սերունդները լուրջ կասկածներ ունեն իրենց էթնիկ պատկանելութեան վերաբերեալ, եւ որոշ հետազօտութիւնների համաձայն Թուրքիայի բնակչութեան 38-40 տոկոսն իրեն թուրք չի համարում¹⁹: Փաստերը ցոյց են տալիս, որ հայ պապիկ, տատիկ

¹⁸ St' u Dadrian V., *Children as Victims of Genocide: The Armenian Case*, "Journal of Genocide", Research 5, N 3, September 2003, pp. 421-427.

¹⁹ Տէ՛ւ Հայ Դատն այսօր, նիւթերի ժողովածու, Թեհրան, 2005, էջ 46:

ունեցողները բաւական մեծ թիւ են կազմում, որոնց կամ նոր է ասուել իրենց ընտանիքի մասին իրականութիւնը, կամ նրանք իմացել, բայց վախեցել են արտայայտուել: Ահա հէնց այս մարդիկ են, որ, տեղեկանալով տասնամեակներ շարունակ թաքցուած եւ գաղտնի պահուած իրենց իրական ինքնութեան մասին, ապրում են «ինքնութեան ճգնաժամ»: Այժմ եւս Թուրքիայում ծայր առած «էթնիկ ինքնութեան ճգնաժամի» քննարկման շրջանակներում ի յայտ են գալիս նոր փաստեր ցեղասպանութեան ժամանակ առեւանգուած հայ երեխաների, յատկապէս՝ աղջիկների մասին, որոնց՝ մահմետականների հետ ամուսնութեան հետեւանքով ներկայիս Թուրքիայում ձեւաւորուել է հայկական արեան որոշակի տոկոս ունեցող խառնածինների հոծ բանակ²⁰:

Ամփոփելով նշենք, որ հայ որբերին մահմետականացնելու եւ նրանց ձուլելու գործընթացը հանդիսացել է Օսմանեան իշխանութիւնների կողմից ծրագրուած ու հետեւողականօրէն իրագործուած հայերի ցեղասպանութեան յանցաւոր քաղաքականութեան գործիքներից, դրսեւորումներից մէկը: Թուրքական իշխանութիւնների կողմից ձուլման ենթակայ են համարուել մանկահասակ որբացած այն հայ երեխաները, որոնց մօտ հայկական ազգային ինքնութիւնը դեռեւս վերջնականապէս

²⁰ Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ. Թուրքիայի իսլամացված հայության խնդրի ուսումնասիրություն, Եր., 2009, էջ 20-21:

ձեւաւորուած չի եղել: Բացի այդ, ձուլման գործընթացի թիրախ են համարուել նաեւ մանկահասակ հայ աղջիկները, որոնց իրենց կամքին հակառակ ամուսնացրել են մահմետականների հետ, որպէսզի նրանցից ծնունեն մահմետական, թուրք սերունդներ:

ARMENIAN ORPHANS TARGETED BY THE GENOCIDE POLICY OF THE OTTOMAN EMPIRE

Armen Ts. Marukyan

Institute of History of NAS RA

Doctor of Science in History, Professor

Key words: Armenian Genocide, Ottoman Empire, assimilation policy, Armenian orphans, young Armenian girls, Turkish orphanages, Muslim families.

The process of converting Armenian orphans to Islam and assimilating them was one of the tools and manifestations of the criminal policy of the Armenian genocide planned and consistently implemented by the Ottoman authorities.

Armenian children who were orphaned as children and whose Armenian national identity was not definitively formed yet, were subject to assimilation by the Turkish authorities. In addition, young Armenian girls were also considered targets of the assimilation process, who were married to Muslims against their will, so that Muslim, Turkish generations would be born from them.

ՄԱՐԻԱ ԵԱԿՈԲՍԵՆ (ՃԷՅԲԸՊՍԸՆ)
«ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ» ՈՐՊԷՍ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԿՁԲՆԱՂԲԻՒՐ

Արփինէ Ռ. Բաբլումեան
ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ
պ.գ.թ.

*Բանալի բառեր՝ Եակոբսէն Մարիա, Հայոց
ցեղասպանութիւն, «Կանանց առաքելութեան աշխատող-
ներ», Խարբերդ, Մեզրէ, միսիոներներ:*

Ներածութիւն

Համիտեան կոտորածների եւ յատկապէս Հայոց
ցեղասպանութեան տարիներին կատարած մարդասի-
րական անձնուէր մեծ աշխատանքով աչքի ընկան բազ-
մաթիւ օտարերկրացի միսիոներներ: Նրանցից շատերը
պատմութեան մէջ մնացին ոչ միայն կոնկրետ իրենց աշ-
խատանքի տասնեակ հազարաւոր հայ որբերի, կանանց
սպանդից, սովից փրկելու համար, այլ նաեւ որպէս Հայոց
ցեղասպանութեան պատմութեան կարեւոր սկզբնադ-
րիւրների հեղինակներ: Դանիացի միսիոներուհի Մարիա
Եակոբսէնը այդ մարդկանց շարքում առաջիններից մէկն
էր՝ հաշուի առնելով նրա կատարած աշխատանքի,
մարդկային կարեկցանքի ու նուիրման ծաւալն ու նաեւ
միսիոներուհու հեղինակած «Օրագրութեան» կարեւորու-
թիւնը: Սոյն անդրադարձը մի փոքր ակնարկ է, յարգան-

քի տուրք Մարիա Եակոբսեն մարդուն, միսիոներուհուն եւ Հայոց ցեղասպանութեան ականատեսին:

Հայանպաստ շարժումը Սկանդինաւեան երկրներում

Համիտեան կոտորածներից սկիզբ առած հայանպաստ մարդասիրական շարժումն իր արձագանգը գտանաւ Սկանդինաւեան երկրներում, որտեղ ժամանակի մամուլից, տարբեր հրատարակութիւններից տեղեկանալով հայերի դէմ իրականացուած հալածանքների ու կոտորածների մասին՝ մի շարք առաջադէմ գործիչներ եւս միացան հայանպաստ շարժմանը: Սկանդինաւեան երկրներում մարդասիրական շարժման մէջ կարեւոր տեղ ունէր «Կանանց առաքելութեան աշխատողներ» (ԿԱԱ, դանիերէն՝ Kvindelige Missions Arbejdere կամ KMA) կազմակերպութիւնը, որը 1894 թ. հիմնուել էր Շուէտիայում²¹: Սկզբնական շրջանում կազմակերպութեան խնդիրն էր որոշակի քարոզչական սոցիալական, նպաստամատոյց աշխատանքների կազմակերպումը կանանց կողմից եւ կանանց համար²², բայց արդէն համիտեան կոտորածներից յետոյ կազմակերպութիւնը սկսում է օժանդակութիւն ցուցաբերել նաեւ Խարբերդի, Մարաշի, Վանի, Սուշի գերմանական որբանոցներում

²¹ Matthias Bjørnlund, Danish Missionaries in Kharpert Province: A Brief Introduction, October 2015 in www.hetq.am.

²² Karekin Dickran, *The Danish Peace Academy: Maria Jacobsen and the Genocide in Armenia*, 2004, in <http://www.fredsakademiet.dk/library/karekin/ukmaria.htm>

ապաստանած հայ որբերին: Ինչպես պատմաբան Մաթ-
իաս Բեռնլունտն է որակում, կոտորածները այն հիմնա-
կան խթանը դարձան, որ այս կազմակերպութիւնը Աստ-
ուածաշնչային ընկերութիւնից վերածուէր միսիոներա-
կան կազմակերպութեան²³:

1900 թ. կազմակերպութեան մասնաճիւղ հիմնուեց
նաեւ Դանիայում: Նոյն թուականին դանիական կազմա-
կերպութեան կողմից առաջինը Խարբերդ ուղարկուեց
միսիոներուի Բրիստա Համերը, ում ջանքերով արդէն
1903 թ. Մեզրեում հիմնուում է «Էմմաուս» անուանմամբ
դանիական որբանոցը: 1909 թ.-ից որբանոցը գլխաւորում
էր դանիացի Քարէն Մարիա Պետերսէնը: Որբանոցը
յայտնի էր որպէս Սկանդինավեան որբանոց, քանի որ
աշխատակիցներ ունէր եւ օժանդակութիւն էր ստանում
նաեւ սկանդինաւեան միւս երկրներից: Մասնաւորապէս,
մինչեւ Մուշ գնալը Էմմաուսում էր աշխատում նաեւ
Շուէտ միսիոներուի Ալմա Եռհանսսոնը, որի նոթերը
Մուշում հայերի կոտորածների վերաբերեալ եւս Հայոց
ցեղասպանութեան կարեւոր աղբիւրներից է²⁴: Այսպէս,
1901-1920 թթ. «Կանանց առաքելութեան աշխատողներ»
կազմակերպութեան կողմից վեցից աւել միսիոներներ
ուղարկուեցին ծառայութեան Մեզրէ, Պիթլիս, Վան, Մա-

²³ Matthias Bjørnlund, Danish Missionaries in Kharpert Province: A Brief Introduction, October 2015, in www.hetq.am.

²⁴ Տե՛ս՝ Զուհանսոն Ա., Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատ-
մութիւնից, 2008, Երևան:

լաթիա, Խարբերդ²⁵:

Սկանդինավական երկրների միսիոներների գործունեութանը մասնակցութիւն եւ մեծ ներդրում ունեցանաւ դանիացի միսիոներուհի Սարիա Եակոբսենը: Դեռեւս 1898 թ. նա մասնակցում է Բարոնուհի Սիգրիդ Քուրքի կազմակերպած քրիստոնէական միաբանութեան ժողովին, որտեղ խօսւում էր հայերի կրած տառապանքների մասին²⁶: Տասնհինգամեայ Մարիային խորապէս յուզում է այս հանդիպումը, եւ նա, թերեւս, այդ պահից սկսած մտադրւում է հնարաւորութեան դէպքում աջակցել հայ ժողովրդին: 1906 թ. աւարտելով հիւանդապահուհիների դասընթացները՝ Եակոբսենը անդամագրւում է «Կանանց առաքելութեան աշխատողներ» կազմակերպութեանը, եւ ի տարբերութիւն սկանդինավական միւս միսիոներուհիների, որոնք ծառայութեան էին անցնում գերմանական առաքելութեան հովանու ներքո, նա 1907 թ. ուղարկւում է Խարբերդ «Ամերիկեան նպաստամատոյց կազմակերպութեան» կողմից եւ աշխատանքի է անցնում հիւանդանոցում: Եակոբսենը «Կանանց առաքելութեան աշխատողներ» կազմակերպութեան կողմից Օսմանեան տէրութիւն ուղարկուած հինգերորդ միսիոներուհին էր²⁷:

²⁵ Karekin Dickran, *The Danish Peace Academy: Maria Jacobsen and the Genocide in Armenia*, 2004, in <http://www.fredsakademiet.dk/library/karekin/ukmaria.htm>

²⁶ Նոյն տեղում:

²⁷ Նոյն տեղում:

«Օրագրութիւն»ը որպէս սկզբնաղբիւր

Կարճ ժամանակաւատուածում Եակոբսէնը տիրապետում է հայերէնին՝ տեղացիների հետ հաղորդակցուելու համար: Միեւնոյն ժամանակ Մարիա Եակոբսէնը սկսում է գրառումներ կատարել իր օրագրում, որը հետագայում դառնում է Հայոց ցեղասպանութեան ականատեսի արժէքատր վկայութիւն: Օրագրի գրառումները միսիոներուիին սկսում է 1907 թ. եւ աւարտում 1919 թ., երբ առողջական խնդիրներից դրդուած ստիպուած է լինում հեռանալ Դանիա: Երկար տարիներ միսիոներուիին իր օրագիրը գաղտնի էր պահում բոլորից, քանի որ մեծ դժուարութեամբ էր այն դուրս բերել Օսմանեան կայսրութեան սահմաններից: Մարիա Եակոբսէնի «Օրագրութիւնը» թարգմանուել է հայերէն, ապա առաջին անգամ հրատարակուել Պէյրութում՝ նրա մահից տարիներ անց՝ 1979 թ.²⁸: Հետագայում գիրքը թարգմանուեց եւ հրատարակուեց նաեւ անգլերէն²⁹:

Եակոբսէնը 1907 Սեպտեմբերի 7-ին սկսում է օրագիրը չափազանց յուզիչ տողերով. «Այս օրը պիտի չմոռնամ: Այս օրը թէ ուրախութեան, թէ տրտմութեան օր էր: Իմ սիրտը սակայն, ալ անելի ուրախութիւնով լեցուած էր: Ուրախ էի որովհետեւ երկար աշխատանքէ ու փայփայ-

²⁸ Ճէքքապսըն Մ., Օրագրութիւն: 1907-1919. Խարբերդ, Անթիլիաս 1979:

²⁹ Maria Jacobsen, *Diaries of a Danish Missionary: Harpoot, 1907-1919*, Gomidas Books, 2001, USA.

ուած փափաքէ ետք, նպատակիս հասած էի»³⁰: 1907 թ. Հոկտեմբերին արուած հետեւեալ գրառումը մէկ անգամ եւս վկայում է այն մասին, թէ որքան սպասուած էր այս աշխատանքը միսիոներուիոս համար. «Հիմա ճամբայ ելած էի երթալու այն երկիրը ուր Աստուած ինծի համար պատրաստած էր իր գործին համար: Աստուած ինձ շատ զօրաւոր ոյժ մը շնորհած էր որուն համար միայն շնորհակալութիւն կրնայի յայտնել: Ուրեմն, Երեքշաբթի 29 Հոկտեմբերին հասայ Խարբերդ: Բոլոր սրտովս կրնայի ըսել թէ Տէրը բարի է ու իր բարիքը աննկարագրելի է: Եւ վերջապէս հասայ այն վայրը, որ այնքան փափաքած էի գալու»³¹:

Միսիոներուիին, ոգեւորուած իր կոչմամբ ու անեկիքներով, չէր էլ պատկերացնում, որ իր աշխատանքն ու հետագայ ամբողջ կեանքն արդէն լինելու էր ոչ միայն Աստծոյ խօսքի քարոզում, բարեգործութիւն, այլ աւելին՝ նա ներկայացնելու էր Աստծոյ խօսքը գործով, դառնալու էր փրկօղակ շատ ու շատ հայերի համար, նաեւ կարելորակաւնատես մի ամբողջ ժողովրդի ողբերգութեան:

Ստուարածաւալ օրագիրը հարուստ նիւթ, փաստական տուեալներ է պարունակում 1915-1919 թթ. Խարբերդի գաւառակի հայութեան տեղահանութեան, կոտորածների վերաբերեալ, արժէքաւոր տուեալներ միւս գաւառների՝ Ակն, Արաբկիր, Չմշկածագ, ու նաեւ յարակից

³⁰ Ճեքըպարն Մ., նշվ. աշխ., էջ 1:

³¹ Նոյն տեղում, էջ 7:

նահանգների՝ մասնաւորապէս Տիարպէթիի, Հալէպի նահանգի Ուրֆա, Հալէպ բնակավայրերի, Պիթլիսի հայութեան ճակատագրի վերաբերեալ:

Օրագրում գրառուած տեղեկութիւնները Եակոբսէնը մեջբերում է տարբեր աղբիւրներից, որոնք կարելի է խմբաւորել հետեւեալ կերպ

1. սեփական դիտարկումներն ու փաստագրութիւնը. մինչեւ 1915 թ. եւ նաեւ ցեղասպանութեան տարիներին Եակոբսէնը յաճախ է ճամբորդել, գնացել է Խարբերդի դաշտի գիւղեր, Արաբկիր, Մալաթիա, այլ բնակավայրեր, հետեւաբար ներկայացուող հիմնական ինֆորմացիան հեղինակի՝ որպէս ականատեսի վկայութիւնն է:

2. հայ տարագիրներից ստացուած տեղեկութիւնները. խօսքն այլ գաւառներից, նահանգներից տեղահանութեան ենթարկուած եւ Խարբերդ հասած մարդկանց մասին է:

3. ամերիկացի, դանիացի, շուէտ, գերմանացի միսիոներների, դիւանագիտական աշխատողների հետ իր եւ միւս միսիոներների ունեցած նամակագրութիւնից, շփումներից ստացուած տեղեկութիւններ:

4. հիւանդանոցում բուժուող կամ այլ վայրերում հանդիպած թուրքերից, քրտերից լսած տեղեկութիւններ:

Նախ նշենք, որ Խարբերդում եւ Մեզրեում իր ամբողջ գործունէութեան ընթացքում, Եակոբսէնը փորձել է օգտակար լինել գրեթէ բոլոր կարիքաւորներին՝ անկախ ազգութիւնից, բայց ակնյայտ էր նաեւ նրա մեծ սերն ու

կարեկցանքը հայերի նկատմամբ: Օրագրութեան բացառապէս բոլոր էջերում Եակոբսէնը մեծ ջերմութեամբ, կարեկցանքով, սիրով է խօսում հայերի մասին: 1914 թ. իրադարձութիւնները միսիոներուհին ներկայացնում է որպէս պատերազմական իրավիճակի հետեւանք՝ զինուորագրում, հիւանդութիւններ, վիրաւորներ, զինուորագրուից փախուստ, հետապնդումներ են: Սակայն իրավիճակի արագ փոփոխութիւնը, նաեւ հայերի թիրախատրումը չէր կարող աննկատ մնալ միսիոներուհու աչքից: Արդէն 1914 թ. Օգոստոսի 3-ին Եակոբսէնը գրում է. «Հայերուն եւ թուրքերուն յարաբերութիւնները քանդուած են: Մեր սրտերը կը ցաւին երբ հայերը բանտ կը տանին: Մտաբերեցէք, մաքուր, երիտասարդ, քրիստոնեայ մարդ մը պիտի ապրի հազարաւոր անտաշ, վայրի մարդոց մէջ որոնց կէանքը անասուններու կէանքի մակարդակէն ցած եղած է»³²: Նոյն գրութեան մէջ Եակոբսէնը աւելացնում է. «Երանի թէ զացող հայերուն տեղ մեզի տարած ըլլային: Այս դժուարին ժամանակներուն մէջ կը զգայինք թէ որքան մօտ էինք հայ եղբայրներուն ու քոյրերուն»³³:

1915 թ. սկսած միսիոներուհու գրառումները աւելի յաճախակի են դառնում: Նա մանրամասնօրէն գրում է 1915-1916 թթ. իրադարձութիւնների վերաբերեալ՝ երբեմն ամէն օր կամ առնուազն շաբաթը կրկու-կրէք անգամ: Ապրիլի 1-ին Եակոբսէնը գրում է, որ յստակօրէն գիտակ-

³² Նոյն տեղում, էջ 56:

³³ Նոյն տեղում:

ցում են, որ կառավարութիւնը թշնամական դիրք է ընդունել բոլոր քրիստոնեաների ու միսիոներների նկատմամբ, իսկ հետագայ օրերին արդէն իսկ խօսւում էր մօտալուտ ջարդի մասին³⁴:

Հայերի ընդհանուր տեղահանութեան մասին Խարբերդում, ըստ Եակոբսենի յայտարարուել է Յուլիսի 26-ին: Նշւում էր, որ նրանց տանելու են Ուրֆայի ուղղութեամբ: Եակոբսենը գրում է. «Եթէ այս իրական էր, շատ լստակ էր որ այս մեկնումը հայ ժողովուրդին մաքրագործումը կը նշանակէր»³⁵: Ամառուայ ընթացքում Խարբերդում, նաեւ ամբողջ Արեւմտեան Հայաստանում արձանագրուած դէպքերը իրականութիւն դարձրին Եակոբսենի կանխատեսումը: Յուլիսի 18-ի դրութեամբ արդէն, ըստ միսիոներուիւ, Խարբերդում մնացել էին սակաւաթիւ հայեր, որոնց մի մասը թաքնուած էին, ոմանք փրկագին էին վճարել, ոմանք էլ կրօնափոխ էին եղել: Ասորիներն ու յոյները այս օրերին դեռ տեղահանուած չէին³⁶:

Եթէ ամերիկացի հիւպատոս Լեսլի Դեվիսը Խարբերդի նահանգը անուանում էր «Սպանդի նահանգ»³⁷, ապա Եակոբսենը 1915 թ. Յուլիսի 28-ին գրում է. «Մեր

³⁴ Նոյն տեղում, էջ 87:

³⁵ Նոյն տեղում, էջ 107:

³⁶ Նոյն տեղում, էջ 117:

³⁷ Դեիս Լ., Սպանդի երկիրը. ամերիկյան դիվանագետի գեկուցագիրը հայկական ցեղապանության մասին, 1915-1917, Երևան, 2001, էջ 161:

վկայեթը փոս մըն էր: Եթէ երկրին այլ գիւղերէն ու վայրերէն ողջ մնացողները հոս հասնէին, անոնք կը սպանուէին: Շատ քիչերը Աստուծոյ հրաշքով կ'ազատէին ու մեր քով կու գային»³⁸:

Այս ընթացքում Եակոբսէնը բազմաթիւ անգամներ յիշատակում է Խարբերդի նահանգի միւս բնակավայրերի տեղահանութեան, կոտորածների մասին, նաեւ տեղեկութիւններ հաղորդում այլ նահանգներում հայերի ցեղասպանութեան դրուագներից: Դեռեւս 1914 թ. Օգոստոսի 23-ին վերաբերող գրութեան մէջ Եակոբսէնը յիշատակում է Տիարպէթիի հրդեհի մասին, որի հետեւանքով 1600 խանութներ էին այրուել, որոնց մեծամասնութիւնը հայերին էր պատկանում: Եակոբսէնը վստահեցնում է, որ հրդեհը դիտաւորեալ է կազմակերպուել³⁹, թուրքական պաշտօնական աղբիւրները սովորութեան համաձայն փորձում էին սքողել հրդեհի դիտաւորեալ կազմակերպուած լինելու հանգամանքը:

1915 թ. Մէպսեմբերի 1-ին Եակոբսէնը գրում է, որ ամերիկացիներ Ռիզզին ու Ֆուլերսին գայմագամը պատմել է, որ Վանն ու Պիթլիսը բնաջնջւած են⁴⁰: Պիթլիսի ու Վանի վերաբերեալ տեղեկութիւնը հաստատում էր նաև Օգոստոսի 29-ին Մուշից Մեգրէ հասած շուէտ Բալիոնէրուհի Ալմա Եոհանսոնի ու նորվեգուհի Բոտիլ Բեդլսի

³⁸ Ճէյքքայսըն Մ., նշվ. աշխ., էջ 123:

³⁹ Նոյն տեղում, էջ 62:

⁴⁰ Նոյն տեղում, էջ 135:

պատմաճներով: 1915 թ. Հոկտեմբերին Մեզրէ են գալիս նաեւ Մարտինից աքսորուած ամերիկացի միսիոներ-բժիշկներ Ա. Անտերսը, Դ. Թոմը եւ միսիոներուհի Ա. Ֆրանսգան⁴¹, որոնք պատմում են Մարտինում եւ Տիար-պէքիրում տեղի ունեցած ձերբակալութիւնների, կոտորածների մասին:

1915 թ. ամրանն արդէն միսիոներների համար պարզ էր, թէ իրականում ինչ դիտաւորութեամբ էր կազմակերպուել հայերի տեղահանութիւնը, Եակոբսէնը Նոյեմբերի 22-ին, երբ Խարբերդում ու Մեզրէում այլեւս հատուկէնս թաքնուած հայեր էին մնացել, մէկ անգամ եւս շեշտում է այն միտքը, թէ որն է թուրքերի նպատակը, այն է «բնաջնջել հայ ազգը. շատ ծանր չարչարանքներով որքան որ կրնային, ջարդել»⁴²: Սրա մասին է վկայում նաեւ թուրքական որբանոցների գործունէութեան վերաբերեալ անդրադարձը: Եակոբսէնը շեշտում է այն հանգամանքը, որ այդ որբանոցներում երեխաները սովամահ էին լինում, «այդ խեղճերը ճանճերու նման կը մեռնէին»⁴³: Մէկ այլ հատուածում Եակոբսէնը նշում է, որ թուրքական որբանոցի հայ փոքրիկներին սայլերով տարել էին ու գետը նետել⁴⁴:

⁴¹ Մկրտիչեան Թ., Տիարանակերտի նահանգի ջարդերը եւ քիւրսերու գազանութիւնները, Գահիրէ, 1919, էջ 67:

⁴² Ճէյքըպսըն Մ., նշվ. աշխ., էջ 168:

⁴³ Նոյն տեղում, էջ 121:

⁴⁴ Նոյն տեղում, էջ 151:

Հայոց ցեղասպանութեան տարիներին արձանագրուած մէկ այլ իրողութեան՝ եկուոր մուսուլման գաղթականների մասին եւս անդրադարձել է միսիոներուհին. նա գրում է որ այդ թուրքերը գալիս են Պիթլիսի ու Վանի շրջակայքից, թէեւ գաղթականների մէջ կան նաեւ այնպիսիք, որոնք եկել էին Ռուսաստանից, խօսքը չէրքէզների մասին է: Բոլոր այդ գաղթականները օգտուում էին յօգուտ կառավարութեան գրաւուած հայերի ունեցուածքից: Նրանք արտեր, անասուններ էին ստանում⁴⁵:

Մէկ այլ կարեւոր հանգամանք նշենք՝ Եակոբսենը ոչ մի կերպ չէր արդարացնում կրօնափոխութիւնը, նոյնիսկ, երբ երիտասարդ աղջկայ կրօնափոխութիւնը կարող էր նրա հարազատներին փրկել մահից⁴⁶:

Եակոբսենը գրառումներում նկարագրում է ոչ միայն իրադարձութիւնները, այլ նաեւ այն փրկութեան, հովանաւորութեան, որբախնամ աշխատանքը, որը կատարում էին միսիոներները տուեալ ժամանակահատուածում: Բացի առօրեայ հիւանդանոցային աշխատանքը, միսիոներուհին այցելում էր յարակից բնակավայրեր, տներ, կապ պահում միւս աշխատակիցների հետ, խնամում ապաստան տուած որբերին, վիրաւորներին. հազուստ ու սնունդ բաժանում կարիքաւորներին: 1915 թ. վերջերին, երբ խօսքը գնում էր միսիոներների պաշտպանութեան, հոգաւորութեան տակ գտնուող հայերի

⁴⁵ Նոյն տեղում., էջ 150-152:

⁴⁶ Նոյն տեղում., էջ 126:

թուաքանակի մասին, ապա նրանց թիւը հաշոււում էր հարիւրներով, մինչդեռ հետագայ տարիներին նրանց թիւը գնալով աւելացաւ, քանի որ յարակից տարածքներից Խարբերդում եւ Մեզրէում էին հաւաքւում կոտորածներից փրկուած հայեր: Այսպէս, 1917 թ. Յունուարի 7-ի օրագրութեան մէջ Եակոբսէնը նշում է, որ Խարբերդում եւ Մեզրէում նրանք կերակրում ու հագցնում են արդէն 5000-ից աւել հայերի: Նաեւ օգնութիւն է ուղարկւում Մալաթիա, Արաբկիր ու Տիարպէիք⁴⁷: Նոյն 5000 թուաքանակը միսիոներուհին շեշտում է մի քանի այլ հատուածներում, նաեւ նշում, որ աշխատանքը կատարող միսիոներները թուով 6-ն էին⁴⁸: 1917 թ. սկզբներին արդէն համատարած սովի պայմաններում խիստ հրատապ դարձաւ ցորեն հայթայթելու խնդիրը: Միսիոներուհին ցաւով գրում է, որ այլեւս պէտք է դադարէին 5000 հոգու հաց բաժանել⁴⁹:

Ամերիկացի միսիոներների մեկնումից յետոյ Ամերիկեան Նպաստամատոյց կազմակերպութեան միակ աշխատակիցը Խարբերդում Եակոբսէնն էր⁵⁰: Սա միսիոներուհու համար խիստ պատասխանատու, նաեւ առաւել լարուած ժամանակաշրջանն էր, քանի որ նա դարձաւ կոտորածներից փրկուած ու նպաստամատոյց կազմա-

⁴⁷ Նոյն տեղում, էջ 257:

⁴⁸ Նոյն տեղում, էջ 267:

⁴⁹ Նոյն տեղում, էջ 289:

⁵⁰ *The Missionary Herald*, 1917, October, p. 467.

կերպութիւնների շնորհիւ դեռեւս գոյատեւող որբերի, կանանց համար միակ ապաւենն ու փրկութեան յոյսը: 1917 թ. սկզբներից եւ յատկապէս Մայիս ամսից Եակոբսենի գրառումների պարբերականութիւնը դառնում է անւլի ուշ-ուշ: Նա նոթատետրում գրում է արդէն ամիսը մէկ-երկու անգամ. սա անկասկած կապուած էր Եակոբսենի աշխատանքի ծաւալի անհամեմատ մեծացման եւ ժամանակի սղութեան հետ: Այսպէս, 1917 թ. Մայիսի 22-ի գրառմանը, որը վերաբերում էր ամերիկացի միսիոներների եւ հիւպատոսի Խարբերդից եւ Մեզրէից հեռանալուն, յաջորդում է Յուլիսի 12-ի ծաւալուն գրառումը, որտեղ միսիոներուհին փորձել է վերյիշել անցած մէկ ամսուայ իրադարձութիւնները: Այստեղ ի թիւս այլ դէպքերի եւ կատարած աշխատանքների միսիոներուհին յիշատակում է նաեւ իր որբախնամ գործունէութեանը վերաբերող շատ կարեւոր դրուագներ եւս: Այսպէս, Եակոբսենը գրում է, որ փողոցներից հաւաքել է 420 փոքրիկների, որոնց համար կառավարութիւնից վարձել է 11 տներ, նրանց համար նշանակել մայրիկներ եւ ապահովել օրական հացով միայն⁵¹: Յաջորդ՝ Օգոստոսի 29-ի գրառման մէջ Եակոբսենը յիշատակում է արդէն իր կողմից խնամուող 600 փոքրիկների մասին, որոնք գնաւով տկարանում են, քանի որ հաց հայթայթելն էլ էր դարձել սեփական⁵²:

Չնայած աշխատանքի ամբողջ ծանրութեանն ու

⁵¹ Ճէքըպսըն Մ., նշվ. աշխ., էջ 292:

⁵² Նոյն տեղում, էջ 300:

այն հանգամանքին, որ Եակոբսենը մենակ էր կրում այն, Խարբերդից ԱՄՆ հեռացած ամերիկացի միսիոներները, նամակներում նկարագրելով որբերի ծանր վիճակը, նշում էին, որ «միսս Եակոբսենը հերոսաբար է կրում իրենց թողած բեռը»⁵³:

Ցաօք, Եակոբսենի 1917 թ. Օգոստոսի 29-ի գրառմանը յաջորդող գրառումը վերաբերում է արդեն 1918 թ. Յունուարի 30-ին: Այստեղ, ի թիւս այլ իրադարձութիւնների, միսիոներուհին գրում է 1917 թ. Նոյեմբերին մր. Էհմանի⁵⁴ հետ Մալաթիա այցելութեան մասին, որտեղ ըստ նրա տեսածի, ասլլում էին միայն 30 հայ բողոքական կանայք ու երեխաներ, իսկ ողջ մնացած ու Մալաթիայում ասլլող լուսաւորչականներից գրեթէ բոլորը մահմետականացուած էին: Նրանք վախից խօսում էին միայն թուրքերէն⁵⁵:

1918 թ. Փետրուարի 8-ին Եակոբսենը կրկին գրում է, որ իրենից բացի Խարբերդում միսիոներ չկայ, մինչդեռ իր խնամքի տակ են մօտ 500 որբեր, նաեւ շատ աղքատներ ու եղած ամբողջ հայ բնակչութիւնը⁵⁶: Թերեւս, այստեղ նա նկատի ունէր Խարբերդ քաղաքը, նաեւ այն, որ միակ ներկայացուցիչն է ամերիկեան նպաստամատոյց առաքելութեան: Նշենք, որ Եակոբսենը միակ դանիացի

⁵³ The Missionary Herald, 1917, October, p. 468.

⁵⁴ Էհմանը Մեզրէում գերմանական առաքելութեան ղեկավարն էր:

⁵⁵ Ճէքքլասըն Մ., նշվ. աշխ., էջ 302:

⁵⁶ Նոյն տեղում, էջ 311:

միսիոներուին չէր, որ ցեղասպանութեան տարիներին մնաց ու գործեց Խարբերդում եւ շրջակայքում: Նշուած տարածքում՝ խօսքը յատկապէս Մեզրէ քաղաքի մասին է, գործում էին նաեւ միսիոներուիններ Հանսինա Մարչերը, Ժեննի Ժենսենը եւ Քարէն Մարիա Պետերսէնը: Վերջինս Մեզրէի դանիական Էմմաուս մանկատան տնօրէնն էր 1909 թ.-ից եւ Մեզրէից հեռացաւ Եակոբսէնի հետ 1919 թ.: Օրագրից կարելի է ենթադրել, որ թէեւ Եակոբսէնը բարեկամական յարաբերութիւններ ունէր Մեզրէում եւ Խարբերդում, շրջակայ այլ տարածքներում աշխատող ամերիկացի, գերմանացի, շուէտ, դանիացի միսիոներների հետ, սակայն նրա ամենամտերիմ անձնաւորութիւնը այս տարիներին հենց Քարէն Պետերսէնն էր: Միսիոներները փորձում էին իրար հանդիպել ամէն հնարաւորութեան դէպքում, ինի մասին յիշատակում է Եակոբսէնը իր նոթերում: Ինչ վերաբերում է Պետերսոնի՝ այս տարիների գործունէութեան վերաբերեալ հնարաւոր գրառումների մասին, ապա պատմաբան Սաթիաս Բեորնլունդը իր յօդուածներից մէկում նշում է, որ դանիական «Կանանց առաքելութեան աշխատողներ» կազմակերպութեան արխիւում յայտնաբերուած տետրի ու մի քանի այլ ձեռագիր թերթերի հեղինակը հենց Պետերսոնն է, թէեւ դրանցից որեւէ մէկում չկայ նրա ստորագրութիւնը: Պատմաբանը վստահեցնում է, որ ձեռագրերից մի քանիսը Հայոց ցե-

ղասպանութեան ակաւատեւների յուշագրութիւններ են՝
գրի առնուած Քարէն Մարիայի կողմից⁵⁷:

Խիստ ուշագրաւ է Եակոբսենի նամակը՝ գրուած
ամերիկացի միսիոներուհի Ռութ Փարմէլիին 1919 թ., երբ
վերջինս պատրաստուում էր վերադառնալ Խարբերդ
շարունակելու միսիոներական գործունէութիւնը: Եա-
կոբսենը գրում է. «Վերադարձիր շուտ, օ, դա այնքան
ծանր է՝ երկու տարի՝ լի վախով, անհանգստութեամբ,
մեծ պատասխանատւութեամբ: Կարող ես պատկերաց-
նել՝ ինչ է նշանակում պատասխանատու լինել աւելի
քան հազար մարդու, ամբողջ աշխատանքի ու աշխա-
տողների համար: Ես պէտք է լինեմ մայր, ուսուցիչ, բժիշկ
եւ ամեն ինչ: Այստեղ բաւական աշխատանք կայ բոլոր
նրանց համար ուլքեր կգան»⁵⁸: Նամակի բովանդակութիւ-
նը խիստ զգացմունքային է, ինչը այդքան էլ յատուկ չէր
Եակոբսենի օրագրութեանը: Կարծում ենք, որ գործընկե-
րուհուն ուղղուած նամակում միսիոներուհին ի ցոյց է
դրել իր զգացմունքները, լարուածութիւնը, ինչու չէ
յոգնածութիւնը, մինչդեռ օրագրութեան մէջ նա բաւական
զուսպ է, փորձելով չխօսել իր իրական ապրումների,
դրանց խորութեան մասին:

Եակոբսենը օրագրում համառօտ գրառումներ է

⁵⁷ Bjornlund M., Recording Death and Survival: Karen Marie Petersen, Missionary Witness to Genocide, 2012 January, <https://www.academia.edu/13352756/>.

⁵⁸ The Missionary Herald, 1919, July, p. 303-304.

կատարել նաեւ 1918 թ. Յուլիս-Օգոստոս ամիսներին, ապա՝ Հոկտեմբեր - Նոյեմբեր ամիսներին:

Այսպիսով, Մարիա Եակոբսենի հեղինակած «Օրագրութիւնը» Հայոց ցեղասպանութեան կարեւոր աղբիւրներից մէկն է՝ ճշգրտուած տեղեկատւութեամբ, հարուստ փաստագրական հենքով, բազմաթիւ կարեւոր իրադարձութիւնների արձանագրմամբ: Նաեւ գիրքը խիստ կարեւոր է օտարերկրեայ մարդասիրական առաքելութիւնների կատարած աշխատանքը, հազարաւոր հայ որբերի, կանանց փրկութեան գործը վեր հանելու առումով:

MARIA JACOBSEN'S "DIARIES" AS A SOURCE FOR THE HISTORY OF THE ARMENIAN GENOCIDE

Arpine R. Bablunian
Institute of History of NAS RA
PhD in History

Key words: Jacobsen Maria, The Armenian Genocide, Women Missionary Workers, Kharberd, Mezre, missionaries.

Many foreign missionaries stood out for their humanitarian work during the Hamidian massacres and especially during the Armenian Genocide. Many of them left their trace in the history not only for their humanism and dedicated efforts of saving tens of thousands of Armenian orphans and women from slaughter and starvation. but also as the authors of memoirs on the Armenian Genocide. Danish missionary Maria Jacobsen was one of them. This reference is a

small overview and a tribute to Maria Jacobsen, a missionary and a witness of the Armenian Genocide.

Jacobsen came to Kharberd in Western Armenia in 1907 and started to work as a nurse in the hospital. She began to take notes in her diary, which later was deemed to be a valuable testimony of an eyewitness to the Armenian Genocide. The missionary began her diary from 1907 and continued to 1919, when she was forced to leave for Denmark due to health problems. For many years, Jacobsen hid her diary from everyone. It was translated into Armenian and published first in Beirut years after her death in 1979. The voluminous diary contains rich material and important information about the deportation and massacres of Armenians in Kharberd province, as well as information about the fate of Armenians in other provinces.

The diary of Maria Jacobsen is one of the important sources about the history of the Armenian Genocide, with detailed information and rich documentary support. The book also serves as a major and important source of information regarding the rescue efforts of thousands of Armenian orphans and women by foreign humanitarian missions.

Սուսաննա Գ. Յովհաննիսեան
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան
գրականութեան ինստիտուտ
Բ.Գ.Դ.

*Բանալի բառեր՝ Յովհաննէս Թումանեան, որբեր,
որբանոցներ, Էջմիածին, Ալեքսանդրապոլի որբանոց,
միսիոներներ, որդեգիրներ, «Հայ որբերի եւ գաղթա-
կանների օգնութեան հանգանակիչ կոմիտէ»:*

Նախաբան

Հայոց ցեղասպանութեան տարիներին հայ որբե-
րին օգնութեան ձեռք մեկնեցին հայ եւ այլազգի գործիչ-
ներ, տասնեակ միսիոներներ՝ իւրաքանչիւրն իր ֆիզիքա-
կան ու նախ եւ առաջ հոգեկան ուժի սահմաններում: Հայ
որբերի բազմաթիւ կեանքեր փռկեցին շուէյցարացի միս-
իոներներ Յակոբ Կիւնցլերը եւ նրա կինը, դանիացի միս-
իոներներ Մարիա Եակոբսենը, Քարէն Պետերսենը, Քա-
րէն Եփփէն, շուէտ Ալմա Եոհանսոնը, Հեդվիգ Պիւլը, Կա-
տարինէ Բեորնը եւ այլք: Նրանցից ոմանց որբերը մայրիկ
կանչեցին: Էստոնացի Հեդվիգ Պիւլը «Պիւ մայրիկն» էր:
Հայ մանուկները ոգեղեն այնպիսի ուժ ունեին, որ երբեմն
հայացնում էին իրենց խնամակալներին: Կեանքի վեր-

ջում Հեղվիգ Պիլը գրեց. «Իմ սիրտը հայ է»⁵⁹: Էստոնուհին 94 տարեկանում մոռացել էր իր իմացած բոլոր լեզուները եւ ծերանոցում հաղորդակցում էր միայն հայերեն: Նորվեգացի Բոդիլ Կատարինե Բեորնը «Կատարինե մայրիկ» դարձաւ ոչ միայն իր որդեգրի՝ Ֆրիտոֆ – Ռաֆայելի, այլեւ 1922-ին Ալեքսանդրապոլում իր հիմնած «Լուսադբիր» մանկատան 30 որբուկների համար: Միսիոներուհիներից նա միակը չէր, որ երեխայ որդեգրեց: 27-ամեայ Քարեն Եփփեն բացի իր տանը որբերին ապաստան տալուց, հայ մանուկների կեանքեր փրկելուց որդեգրեց Սիսակ Մելքոնեանին եւ դարձաւ նրա մայրիկը⁶⁰: «Թոչնոց բոյնի» որբերի համար մայրիկ էր դանիացի Մարիա Եակոբսենը («Մամա Եակոբսեն»): Հալէպում մայրիկ են ասել նաեւ օր. Պիաթրիս Բոհներին⁶¹: Ամերիկացի միսիոներուհի օր. Մերի Լ. Կրաֆամը Սվազի որբանոցի մայրիկն էր: Նա տարբերում էր շատ օտարազգի միսիոներուհիներից՝ ազգայինը երեխաների մէջ վառ պահելու իջ ջանքերով: Մերին Արամեան որբանոց՝ վարժարանում ֆանուկներին կրկնել էր տալիս. «Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես սուրբ Մեսրոպի թոռն եմ ես»⁶²:

Հայուհիներից իշխանուհի Մարիամ Թումանեանը

⁵⁹ Ագատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, գիրք երրորդ, Լոս Անճելես, 2002, տպ. Ապրիլ, 263 էջ, էջ 98:

⁶⁰ Չոլաքեան Յ., Քարեն Եփփե, Հայ Գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալէպ, 2001, էջ 151:

⁶¹ Ագատեան Լ., նշվ. աշխ., էջ 94:

⁶² Նոյն տեղում, էջ 102:

որբերի կողմից արժանացաւ մայրիկ անուանը: Որբերի փրկութեան համար գործունէութիւն են ծաւալել նաեւ հայ տղամարդիկ (Մ. Եփրեմեան, Կ. Սեֆերեան, Ա. Գենճեան, Ռ. Հերեան, Լ. Եօթնդարեան, Գ. Գալըմբերեան, Սեւ. Գրիգոր, Գ. Բաբենց, Փ. Շիշիկեան, Մ. Տեմիրճեան, Գ. Քէշիշեան, Ս. Սելեան, Հ. Պազալեան, Ս. Չաքմաքճեան, Յովհ. Էսքիճեան (հայերի որբախոյզներ), Ա. Չաքըրեան, Մ. արք. Սերոբեան, Լ. Աճեմեան, Մ. Միհրանեան, Պ. Թաշճեան եւ այլք)⁶³: Նրանցից շատերը «փրկութեան հրեշտակներ» էին, մեծ մասամբ գործում էին զաղտնի, վտանգաւոր պայմաններում, մէկ կամ մի քանի ոսկով ազատում որբերին, Յովհ. Էսքիճեանի պէս հայրական հոգատարութիւն դրսեւորում եւ երեխաներից վարակուե-

⁶³ Որբախոյզների եւ որբահաւաք գործունէութեան մասին տե՛ս Crows of the Desert, Memoirs of Levon Yotnakhparian, California, 2012, p. 32, 52, 113 եւ այլն; «Միութիւն», Յունուար-Փետրուար, 1919, Ը. տարի, թիւ 67, էջ 6; «Որբունի» Տեղեկատու հայ որբախնամ ընկերութեան, Ալեքսանդրիա, 1920, Բ. Տարի, թիւ 9, էջ 156-157; Գումկան Սեբաստիոյ Կ. Գաբիկեան, Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն, 1924, Անթիլիաս, 2006; Գէորգեան Կ., Ամէնուն տարեգիրքը, Դ. Տարի, Պէյրութ, 1957, էջ 428; Վարդանեան Ե., Անապատէ անապատ, Սուրբ Ղազար-Վենետիկ, 1923, էջ 104; Ազատեան Լ., նշվ. աշխատ., էջ 148; Նարինէ Մարգարեան, «Միջազետրի անապատների հայ որբախոյզները (1918-1923 թթ.)»; Հայագիտության հարցեր, հանդես, թիւ 1 (13), Ե. 2018, ԵՊՀ հրատ., էջ 39-57:

լով կնքում իրենց մահկանացուն⁶⁴, սակայն նրանցից մի-միայն Յովհաննէս Թումանեանն արժանացաւ «Հայրիկ» անուանը:

Ցեղասպանութիւն վերապրած Բանաստեղծը

1914թ. (15.11-16.12) եւ 1915թ. (06.06-30.06) Թումանեանը Արեւմտեան Հայաստանում էր: Բանաստեղծն իր աչքերով տեսաւ եղեռնագործութեան հետքերը եւ դարձաւ Հայոց ցեղասպանութեան ականատեսն ու վաւերագիրը: Իր տեսած զարհուրանքները նկարագրեց «Աւերակների ու դիակների աշխարհում» յօդուածում, սեւագիր Բազմաթիւ գրառումներում: Երկու անգամ նրա կեանքը փրկուեց հրաշքով. 1914 թ. Նոյեմբերի 30-ին նա Զէյթեքանում էր: Այնտեղից դուրս գալուց յետոյ օրեր անց գիւղից չէր փրկուել ոչ ոք, բոլորը նախ խոշտանգուել, ապա սպանուել էին: Բանաստեղծը վերադարձել ու ականատես էր եղել ցնցող պատկերների: 1915թ. Վանում 18 օր աւել մնալու դէպքում նա կը լինէր փախուստի զարհուրելի ճանապարհիլ բռնած հարիւր հազարաւոր գաղթականների հետ: Եղեռնի վաւերագիր Թումանեանն արձանագրեց. «Թուրքերն ու քրտերը հայ գիւղերում կոտորելիս ամէն մի տեղ մի ձեւ են մտածել - մի տեղ խաչել են ու խփել կամ խորովել - ինչպէս Գործոթ ու Տիրա-

⁶⁴ Hilmar Kaiser (Author), Luther Eskijian (Author), Nancy Eskijian (Author), At the Crossroads of Der Zor: Death, Survival, and Humanitarian Resistance in Aleppo, 1915-1917 Paperback -2017, 118 p.

մեքիկ, մի տեղ փոքերը ճղել են ու աղիքներով զանազան խաղեր յօյինել - վզներով ոտներով փաթաթել են - մի տեղ մորթոտել են, մի այլ տեղ գետն են ածել կապած (Աբաղա, Բերկրու կամուրջը), մի այլ տեղ (Խնձորկեն) (100 տնից ավելի) բոլորին՝ երեխաներին ու կանանց կախել են իրենց տներում օձորքների գերաններից (տղամարդկանց ձորումն են կոտորել)»⁶⁵: Բանաստեղծը գրի է առել նաեւ, թէ ինչպէս են Պիթիսում 7 տարեկանից բարձր բոլոր տղաներին («200-ական») ամէն օր տարել են քաղաքից դուրս, ստիպել են իրենց իսկ գերեզմանները փորել եւ բոլորին կենդանի թաղել⁶⁶... Նոյն կերպ վարուել են Դատվանում ու նրա շրջակայքում. «Ցորենի հորերը դատարկել են, ժողովրդին ածել մէջը, ծածկել»⁶⁷:

Ալաշկերտի հովտում, Աբաղայի դաշտում, Վանում եւ այլուր ականատես լինելով նահանջի, գաղթի զարհուրելի դէպքերի՝ բանաստեղծը վերադարձել էր վրդովուած, ուժասպառ ու հիւանդ: Ընդամենը մէկ-երկու օր էր, ինչ ամառանոցում բանաստեղծը բուժում էր ու փորձում ուշքի գալ ուղեւորութեան ծանր տպաւորութիւններից, երբ տարածում է 1915 թ. նոր կոտորածների եւ յուլիսեան գաղթի գոյժը: Նա մի վայրկեան անգամ չի

⁶⁵ Թումանյան Հովհ., ԵԼԺ 10 հատորով, հ. 8, Եր., 1999, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 401 (այսուհետեւ նոյն հրատարակութիւնից մեջբերումները կը յղուեն՝ Թումանեան, հատորն ու էջը):

⁶⁶ Նոյն տեղում, էջ 402:

⁶⁷ Նոյն տեղում, էջ 403:

յապադում եւ շտապում է Էջմիածին՝ մինչ այդ տպագրելով «Հանգիստ ու լիքը հաւատով» յօդուածը, որտեղ նա «միշտ արիւնոտ ու յաւիտեան նգովուած ձեռք» ունեցող թուրքի երկիրը՝ Տաճկաստանը, բնորոշում է «միայն սպանդանոց», ուր մէկը «միշտ մորթուել է ու յօշոտուել, իսկ միւսն սպասել է իր հերթին, հաստատ իմանալով ..., որ եղ հերթը պիտի գայ մի օր»⁶⁸։ Զայրոյթի, նգովքի խօսքն ուղեկցում էր չվհատուելու, մի բռունցք դառնալու կոչով. «Ոչ ոք յուսահատի ու վհատի խօսքեր չպէտք է անի... փորձութիւնը... պէտք է տանենք արիւրթեամբ ու վեր կենանք միասին, միահամուտ ուժերով դիմագրաւելու մեր վատթար թշնամիներին»⁶⁹ :

Էջմիածնի որբանոցում

1915 թ. ամառը Էջմիածին էին շտապում Ալաշկերտի, Էրզրումի, Մուշի եւ Վանի կոտորածներից փրկուած հայութեան վերջին բեկորները։ Սովից ու համաճարակից ամէն օր մահանում էին 700-ից 1000 հոգի⁷⁰։ 1915 թ. Յուլիսի 29-ի գիշերը բանաստեղծը Էջմիածնում էր։ «Եղբայրական օգնութեան» գլխաւոր կոմիտէն հսկայական աշխատանք էր կատարում, որը, սակայն, բաւարար չէր. «օգնող ձեռքերը շատ քիչ են»⁷¹։ Վ. Թորոպենցի խօսքերով Էջ-

⁶⁸ Նոյն տեղում, հ. 7, էջ 194։

⁶⁹ Նոյն տեղում, էջ 176-177։

⁷⁰ Լեռ, Անցեալից, Թիֆլիս, 1925, էջ 322։

⁷¹ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, № 174, Օգոստոսի 5։

միաձնում. «Մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ...»⁷² :

Երբ գրողը հասաւ Էջմիածին, շուրջ 500 որբ երեխաներ էին ապաստանել ճեմարանի շէնքում. Երկու շաբաթուայ ընթացքում՝ Օգոստոսի 14-ին, Էջմիածնում ապաստանած 500 որբերի թիւը անցել էր երեք հազարից եւ «նոր որբանոց էր բացւում բաց օդում»⁷³: Բանաստեղծը կոչով դիմում է հայ կանանց ու աղջիկներին դառնալ գթութեան քոյրեր⁷⁴: Առաջին արձագանգողներից էր գրողի բուստը՝ 23-ամեայ Նուարդը: Թումանեանը դստերը շտապեցնում էր, որ ժամ առաջ հասնի Էջմիածին, թէեւ իր իսկ վկայութեամբ որբանոցի 200-ից աւելի ծառայողներից 20-30-ը հազիւ էին խուսափել մահացու վարակից⁷⁵: Այդ շրջանում հայ որբերի խնամքով զբաղուող իւրաքանչիւր անձ պատրաստ էր զոհողութիւնների, սակայն Թումանեանի զոհաբերութիւնը շատ աւելի մեծ էր. նա պատրաստ էր զոհել ոչ միայն իր, այլեւ հարազատ դստեր կեանքը:

Բանաստեղծը ստանձնել էր Էջմիածնի որբանոցի տնօրինութիւնը: Այն սովորական որբանոց չէր: Մանուկների այդ ապաստարանը ընդունում էր անխտիր Հայաստան մտած բոլոր որբերին, ապա բաշխում այլ որբանոց-

⁷² Թումանյանը ժամանակակիցների հուշերում երկու հատորով, հ. 1, Ե., 2019, էջ 133 (այսուհետ՝ ԹԺՀ, հատորն ու էջը):

⁷³ Թումանյան, հ. 10, էջ 229:

⁷⁴ Նոյն տեղում, էջ 229:

⁷⁵ Նոյն տեղում, հ. 7, էջ 178:

ների, հետեւաբար բանաստեղծի գործառոյթները չէին սահմանափակուում միայն որբերի խնամքով: Օգոստոսի 8-ին Թումանեանը գրում է. «Երեխանե՛ր, երեխանե՛ր, երեխանե՛ր... անտէր, սոված, հիւանդ... Այժմ էլ ինձ է վիճակուել էդ երեխաների խնամատարութեան գործը»⁷⁶:

Նա որբեր էր ընդունում ու խնամում, կազմակերպում նրանց փոխադրումը մի վայրից մի ուրիշ վայր, մի որբանոցից մէկ այլ որբանոց, զբաղւում էր նրանց ուսման ու դաստիարակութեան, մօտ ու հեռու ապագայի, նրանց ողջ ու առողջ «Երկիր» վերադարձնելու, տիֆ, սեւ ծաղիկ, դիզենտերիա եւ այլ հիւանդութիւններին դիմագրաւելու, դրանց դէմ պայքարի գործը կազմակերպելու, երեխաներին եռացրած ջրով, հացով ապահովելու, նրանց թաղման հարցերով: Թումանեանը բանակցութիւններ էր վարում Պաքուի հայոց գաղթականական յանձնաժողովի եւ Հայոց մարդասիրական ընկերութեան վարչութեան հետ, համաձայնութեան գալիս էջմիածնից 350 որբեր Պաքու տեղափոխելու եւ այնտեղ որբանոց բացելու հարցի շուրջ⁷⁷: Նա միջնորդ էր Ազգային Բիւրոյի եւ Վեհափառի միջեւ հանգանակութիւններ կազմակերպելու, այդ նպատակով Հնդկաստան գործուղումներ կազմակերպելու գործում⁷⁸: Ազգային բիւրոյին ուղղուած Թումանեանի հեռագրում ասւում էր. «7 հազար մարդ է մեռել, կուրերը ին-

⁷⁶ Նոյն տեղում, հ. 10, էջ 228:

⁷⁷ «Արեւ», Պաքու, 1915, Սեպտեմբերի 1, Չորեքշաբթի, № 137:

⁷⁸ ԳԱԹ, ԹՖ, № 1454 (368):

յո՞ւ չեն վառում գոնե այժմ - փետ չկայ: Առաջին՝ գլխաւորը՝ չթողնել կոտորումն... 99 երեխայ էսօր գերեզման ենք դնում»⁷⁹: Այսպէս՝ մի օրում մանկագիրը թաղում է 99 երեխայ: Երբեմն զգացմունքները պոռթկում էին: Գթութեան քոյրերից Նուսրդ Եգիբեանը, անցնելով դիակների սայլի կողքով, նկատում է Թումանեանին՝ աչքերում արցունքներ⁸⁰: Սակայն բանաստեղծը շարունակում էր նոյն եռանդով հոգալ որբերի կարիքները, հոգում էր անթաղ դիակների «միայն մի արշին» փոսը աւելի խորացնելու, դիակներ հաւաքող ու թաղող բանուորների եւ նոյնիսկ պատգարակների թիւը աւելացնելու մասին: Նա էր կազմում կամ հաւաքում առողջ երեխաների ցուցակները, մտահոգում վարակը կանխելու խնդրով, որոշում էր, թե երեխաներին ինչ միջոցներով պիտի թաղէին, տուեալ որբանոցի պաշտօնէութեան, թե՞ որբերի ընդհանուր միութեան... Նա էր կազմակերպում գաղթականներին հաց, սպիտակեղէն, կերակուր, ամաններ ու գդալներ բաժանելու գործը, անհրաժեշտ մթերքը ձեռք բերելու եւ պահեստաւորելու խնդիրը: Իր սեփական միջոցներից էր վճարում այն սայլապանին (ֆուրգունչի), որը հրաժարւում էր դիակները թաղել, քանի որ քիչ են վճարում: Նա անձամբ էր զբաղւում մանուկներին կերակրելու, լողացնելու, հագցնելու, եռացրած ջուրն ապահովելու, նրանց մազերը խուզելու հարցերով: Աղջիկներից շատերը բանաստեղ-

⁷⁹ ԹԹ, Նոր նիւթեր, թղթ. 32:

⁸⁰ ԹԺՀ, հ. 2, Ե., 2020, էջ 259:

ծին թոյլ չէին տալիս մագերը խուզել կամ նոյնիսկ կտրել. «Ես կ'երթամ, հալաւս ալ կը թողնիմ, ծամերս ի չեմ տար»⁸¹: Ամենից սարսափելին անթաղ դիակներն էին: Թումանեանը վկայում է, որ Յուլիսի 28-ից մինչեւ Սեպտեմբեր Էջմիածնում մտնացել են 7000 գաղթական, որոնցից 3000-ը երեխայ: Բանաստեղծի Էջմիածնում եղած ժամանակահատուածում մօտ մէկ ու կէս ամսուայ ընթացքում «մինչեւ տասը հազար երեխայ մտաւ որբանոցն ու դուրս եկաւ Էնտերից, իսկ մէջը մնացողների թիւը եղաւ 3500»⁸²:

Էջմիածնում է Թումանեանը իրեն հռչակել Ամենայն Հայոց Բանաստեղծ քանավե՛հի մէջ մտնելով Հայոց Հայրապետ Գեորգ 5-րդի հետ՝ հակառակ նրա հրահանգի՝ Օգոստոսի 19-ին գաղթականներին ու որբերին անձրեւի հեղեղից ապաստանելով նորակառոյց վեհարանի շէնքում⁸³: Էջմիածնում էր նաեւ Անդրանիկը: Թումանեանը Օգոստոսի 8-ին կատարում է հետեւեալ գրառումը. «Անդրանիկը - դուրսը իր խմբի մնացորդը - ինքը ներսը խորտակուած ու յուսահատուած»⁸⁴: Արուեստագետներից այդ պահին Էջմիածնում էին անուանի նկարիչներ Վարդգէս Սուրենեանցը, Եղիշէ Թադէոսեանը, Մարտի-

⁸¹ Թումանյան, հ. 8, էջ 409:

⁸² Նոյն տեղում, հ. 7, էջ 179:

⁸³ Այդ մասին կան բազմաթիւ վկայութիւններ (Նուարդ Թումանեան, Վահան Թոթովենց, Աշոտ Պատմագրեան, Վ. Ահարոնեան, Ստ. Զօրեան եւ այլք):

⁸⁴ Թումանյան, հ. 8, էջ 406:

րոս Սարեանը: Վերջինս հոգեկան մեծ ցնցումից ուշագնաց է լինում: Իսկ Թումանեանը, ինչպես գրում է Լեոն. «Այդ դժոխքի մէջ էր, գործում էր, բարեփախտաբար չէր գժւում»⁸⁵:

Բանաստեղծին յաջողում է Էջմիածնից հեռացնել եւ անխուսափելի մահից փրկել աւելի քան 100 որբերի կեանք: Օգոստոսի վերջին օրերից արգելւում էր Էջմիածնից դուրս գալ՝ վարակը չտարածելու համար: Սակայն նոյն օրերին (Օգոստոսի 29) բանաստեղծը դատեր՝ Նուարդի հետ համաճարակից ամենափոքրիկներին փրկելու նպատակով կառքերով Երեւան է տեղափոխում 125 որբերի, այդ թւում 43 նորածին «ծծկեր երեխայ», որոնց նաև «պահող չկար»⁸⁶: Ըստ Մ. Կիրակոսեանի՝ այդ երեխաները ըստ ամենայնի եղել են 1-2 տարեկան 80 որդեգրուած երեխաների մէջ⁸⁷:

Որբերի Հայրիկը

Թիֆլիս վերադառնալուց յետոյ Թումանեանը երեք ամիս անկողնային հիւանդ էր: 1915 թ. Հոկտեմբերի 10-ին

⁸⁵ Լեո, «Անցեալից», էջ 322:

⁸⁶ Թումանեանի ընտանիքի նամակաւին, Ե., 2009, Էդիթ Պրինտ, 220 էջ, էջ 71:

⁸⁷ Այդ մասին հանգամանօրէն տե՛ս Կիրակոսյան Մարիամ, Որբախնամ գործի սկզբնաւորումն Արեւելյան Հայաստանում եւ Անդրկովկասում (1915-1917թթ.), Հայոց ցեղասպանության պատմության եւ պատմագրության հարցեր, Ե., 2006, թիւ 12, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, էջ 104:

արձանագրում է. «Ես էլ էս բոլոր վշտերից ու նեղութիւններից համարեա ծերացել եմ»⁸⁸: Էջմիածնից դուրս գալուց յետոյ էլ մղձաւանջային պատկերները չէին լքում նրան: 1915 թ. Հոկտեմբերի 21-ին նա այդ մասին գրում էր. «Սաստիկ, սաստիկ ծանր էր նրանց հետ խօսելն ու խօսեցնելը... Եթէ խօսել ու խօսեցրել եմ՝ էն էլ շատ քիչ, պատահումնքով... Սակայն շարունակ աչքիս առաջն է նրանց բազմութիւնը, նրանց վտիտ, քաղցած ու մերկ բազմութիւնը... Ահա հազարաւոր մայրերի ոսկրացած բազուկների ու ձեռների անտառը... ամէն կողմից առաջ են հրում անթիւ կմախքներ, կմախքներ, որ դեռ շնչում էին...»⁸⁹: Սակայն մղձաւանջները նրան չէին խանգարում անդադար գործել: Հոկտեմբերի առաջին օրերին Թումանեանը որբեր էր որոնում տարբեր քաղաքների որբանոցներում, փորձում էր աշխատանք գտնել գաղթականների համար, գրում էր «Թանկ մարդու յիշատակին» յօդուածը⁹⁰՝ նուիրուած Էջմիածնում համաճարակին զոհ դարձած Սաթենիկ Օհանջանեանի յիշատակին, տարբեր կազմակերպութիւնների հանգանակած գումարները տրամադրում էր որբանոցների կառավարիչներին:

Հոկտեմբերի 21-ին «Լույս» լրագրում տպագրում է «Յիշողութիւններ Էջմիածնի որբանոցից» ակնարկը, որում նկարագրում է որբերի առօրեան. «էն մանկական

⁸⁸ Թումանյան, հ. 10, էջ 232:

⁸⁹ Նոյն տեղում, հ. 7, էջ 180:

⁹⁰ «Հորիզոն», Թիֆլիս, 1915, Հոկտեմբերի 4:

կմախքների խիտ-խիտ ու երկար շարքերը... յուր նստած՝ իրենց բազմաւիագար աչքերը անթարթ սեւեռում էին դէպի դռները, որտեղից ներս էին բերելու թէյի, սուրճի կամ կերակուրի վետրոները... Օրուայ մեծ մասը թափուած էին յատակներին ... չէին կարողանում ոտի վրայ մնալ, ցաւում էին նրանց նիւար սրունքներն ու մանկական ոտները, մի քանի հարիւր վերստ փախած..ոտները... Յիշում եմ եւ էն լաւ օրը, երբ առաջին անգամ վերահսկողները գանգատուեցին, թէ արդէն չարաճճի են դարձել ... Ու ամենքիս աչքերն էլ լցուեցին ուրախութեան արտասուքներով... մինչ, դեռ մեռելատար սելերը «մեռե՛լ, մեռե՛լ...» ոռնալով, հաւաքում էին նրանց սովամահ եղած մայրերի չորացած դիակները»⁹¹:

Պոէտը նաեւ բազմաթիւ գրառումներ էր արել նոթատետրերում, որոնցում Էջմիածնի առօրեականութիւնն էր՝ եւ՝ մեռած ու անթաղ երեխաները, եւ՝ կեանք աղերսող որբերը, եւ՝ հայրիկ դարձած բանաստեղծի ապրումները: Մի կողմից նա տեսնում էր. «Գանգի ներքեւից մինչեւ ծնոտը (ռսկրը) դատարկ երեխան- որդը մէջը լիքը», միւս կողմից լսում էր այդ դիակների հարեւանութեամբ անվերջ հնչող որբերի ձայները. «Քեռի՛, մածուն տու՛ւ, քեռի՛, ջուր տուր...»⁹²: «Երեխաներից ոմանք այնպէս են սովորել, - գրում է Թումանեանը, - որ ճաշից յետոյ էլ փեշերս բռնում են - հայրի՛կ, ես որբ եմ, խեղճ եմ,

⁹¹ Թումանյան, հ. 7, էջ 180-181:

⁹² Նոյն տեղում, հ. 8, էջ 409:

նա հեր ունի, նա մեր... ինչպես էստեղից - էնտեղից գլուխ էին բարձրացնում- Հայրի կ, ինձ համար կարմիր հալա կարեցեք»⁹³: Որբերի խոստովանութեամբ իրենց Հայրիկը լուսաւոր տեսիլք»⁹⁴ էր, միակը, որի հետ հանդիպումները «գունեղ» էին, «երազային քաղցրութեամբ» էին համակում իրենց մանկական էութիւնը:

Որդեգիրները

Թումանեանը 10 տարի շարունակ (1912-1922) Թիֆլիսի Հայ գրողների կովկասեան ընկերութեան անփոփոխ նախագահն էր: Նա կազմակերպեց դասախօսութիւններ նուիրում օրբերին: Ընկերութեան ամպիոնից հնչեցին օրբերի բանաստեղծութիւնները, որոնց նիւթ էին դարձել դիակներ ու հեռում մնացած շիրիմներ: Թումանեանի առաջարկով որոշում է կայացում որդեգրել շնորհալի օրբերին: Դրանով նա նպատակ ուներ փրկել ազգի մշակոյթի ծառը, տաղանդաւոր երեխաներին: Որդեգրուեցին 13-ամեայ Վաղարշակ Երիցեանը (Նորենց), 15-ամեայ Միհրան Թիւթիւնճեանը եւ 11- ամեայ Նորայր Տապաղեանը: Ընկերութեան որդեգիրները իրականում դառնում են բազմազաւակ բանաստեղծի որդեգիրները: Նրա տասը երեխաներին աւելանում են եւս երեքը, որոնց համար նա «մարմնաւորում երազ» էր⁹⁵:

⁹³ Նոյն տեղում, էջ 408- 409:

⁹⁴ ԹԺՀ, հ. 2, էջ 455:

⁹⁵ ԹԺՀ, հ. 2, էջ 457:

Որդեգիրները, ինչի կարիք որ ունենային, դիմում էին անձամբ Թումանեանին, լինում էին նրա տանը, ճաշում այնտեղ եւ ամէն անգամ գտնում ջերմ ընդունելութիւն: Գրողն անձամբ էր հոգում որդեգիրների թէ՛ ուսման, թէ՛ հագուստի ու ապրուստի վարձը: Հայ բազմաթիւ որբերի տխուր ճակատագրից չխուսափեց նաեւ երեք որդեգիրներից մէկը՝ 18-ամեայ Միհրան Թիւթիւնճեանը: 1920 թ. գարնանը նա վախճանուեց թոքախտից: Թաղման թափոքում հարիւրաւոր որբեր էին, մի քանի զթութեան քոյր եւ մի տղամարդ՝ բանաստեղծը: Վ. Նորենցը գրում է. «Թաղման թափոքի մէջ առանձնակի բարձրանում էր մի հստակ, ինչպէս մատղաշ անտառի մէջ մի վեհ կաղնի: Դա «որբաշխարհից» դուրս եկող հայ հասարակութեան ամենաճանաչուած եւ սիրուած մարդն էր, նրա միակ ներկայացուցիչը մեր մէջ, որբերի մէջ, որոնք տանում էին թաղելու իրենց ննջեցեալ ընկերոջը: Այդ մարդը մեր «Հայրիկն էր», մեծ Թումանեանը»⁹⁶:

Որբերի օրկան «Փարոս» թերթի մանուկ խմբագիրները Թումանեանին նուիրուած առաջնորդողում գրում են. «Որբերի, փոքրիկ բախտահալած որբերի պաշտպանն է և գուրգուրացողը Յ. Թումանեանը, ահա թէ ինչու համար մենք՝ որբերս, նրան անուանում ենք «մեր բանաստեղծ հայրիկը» եւ նրան մեր սեփականութիւնն ենք դարձնում»⁹⁷: Երբ «Ծիրանաւոր» որբանոցի երեխաներին

⁹⁶ Նոյն տեղում, էջ 466:

⁹⁷ «Փարոս», շաբաթաթերթ, 1919, Ապրիլի 6, № 2, էջ 1:

Թիֆլիսից տեղափոխում էին Կարս, բանաստեղծը որդեգիրներին տեղափոխեց Թիֆլիսի Բարեգործական ընկերությանն կազմատան արհեստանոցը եւ փրկեց նրանց նոր աղէտից, որ սպասում էր Կարսում: Մօտ 4 տասնամեակ անց «Հայրիկին» խորագրով բանաստեղծությունը պոէտին է ձօնում նրա որդեգիրներից Վաղարշակը.

Ես տեսել եմ նրան, իմ մանկութեան վրայ

Շողացել է նրա ժպիտն արեգական:

Ես տեսել եմ նրան, լսել խօսքը նրա,

Որ հեքիաթի պէս է եւ կեանք է իրական...⁹⁸

13-ամեայ Նորայր Տապաղեանը գրում է. «Նա է եղել մեր ազգի յոյսն ու ապաւենը:

Թումանեանը կանգնել է տառապանքի ճամբուն վրայ, որբերի, անյոյս խորտակուածների մէջտեղը. լացել է նրանց հետ, սրբել է նրանց հոգու արցունքները եւ ապագայ արշալոյսի ոսկի յոյսերով լցրել է նրանց հոգին»⁹⁹: Որբերից Յովհաննէսն իր յուշալպումը վերնագրել է՝ «Ինձ համբուրել է Ամենայն Հայոց Բանաստեղծը» եւ դրանով արտայայտել իր կեանքի ողբերգական ու տխուր տարիների ամենամեծ երջանկությունը: Թումանեանին դիմում էին ոչ միայն ընկերության որդեգիրները, այլեւ բազմաթիւ այլ որբ երեխաներ, որոնք ցանկանում էին դառնալ նրա որդեգիրները, կամ էլ խնդրում էին ստանձնել իրենց հետագայ կրթու-

⁹⁸ Վաղարշակ Նորենց, «Հովհաննէս Թումանյան», Բանաստեղծություններ, հտ. 1, Եր., 1963, էջ 151-152:

⁹⁹ Նոյն տեղում. էջ 2:

թեան գործը: Գրողի աջակցութեանն էին դիմում յատկապէս «Ծիրանաւոր» որբանոցի մանուկները:

Ալեքսանդրապոլի որբանոցում

Թումանեանը քաջատեղեակ էր Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնուող միւս որբանոցների կեանքին ու հոգսերին, նրան անվերջ դիմում էին որբանոցների կառավարիչներն ու շարքային աշխատակիցները, յայտնում իրենց արածի ու անելիքների, կարիքների ու սլտքերի մասին: Եւ բանաստեղծը ուժերի գերլարումով ձգտում էր օգտակար լինել որբան կարող էր: Էջմիածնից յետոյ գրողի ուշադրութեան կեդրոնում էր ինչպէս Թիֆլիսի, այնպէս էլ Ալեքսանդրապոլի որբանոցը: Հենց այդտեղից էլ նա ընտրեց մի քանի երեխայ եւ տարաւ իր տուն պահելու: Նրանց մէջ էր պետական քաղաքական գործիչ Կարէն Սերոբի Տէմիրճեանի մայրը՝ վանեցի Լիւսիա (Լուսնթագ) Կարախանեանը¹⁰⁰: Լուսնթագը, ապրելով գրողի ընտանիքի հետ մի ամբողջ տարի, վկայում է, որ Թումանեանը դարձել է շատ որբերի, այդ թւում եւ իր կնքահայրը, ինչը հետագայում մեծ հպարտութիւն էր պոէտի տանն ապրած իւրաքանչիւր որբի համար:

Թումանեանի առնչութիւնները աւելի սերտ էին Թիֆլիսի որբանոցների հետ՝ անմիջական մասնակցութեան եւ ֆիզիքական ներկայութեան առումով: Թիֆլիսի որբանոցներից ամենից շատ բանաստեղծի ուշադրու-

¹⁰⁰ Դեմիրճյան Ռ., Հիշատակ, Ե., 2012:

թեան կեդրոնում էր Բարեգործական միութեան որբանոցը, որը գտնուում էր քաղաքից մի փոքր դուրս՝ Օիրանատր եկեղեցու բակում. որին յաճախ նաեւ Կրծանիսի որբանոց անունն էին տալիս՝ նոյնանուն վայրի անունով։ Այն շրջապատուած էր այգեստաններով ու պարտէզներով։ Որբանոցն ուներ իր մանկապարտէզը, իսկ դպրոցը հնգամեայ էր։ Թումանեանը որբերին վերաբերող հարցերով համագործակցում էր «Տաճկահայերի հայրենակցական միութեան» հետ, հովանաւորում էր «Որբ» աշակերտական միութեան «Փարոս» շաբաթաթերթը՝ յատկացնելով 2000 ռուբլի¹⁰¹։ «Օիրանատրից» բացի, Թումանեանը յաճախ էր լինում նաեւ Թիֆլիսի այլ որբանոցներում։ Նա դասախօսութիւններ էր կարդում, խաղեր նուիրում, երբեմն որբերին տանում էր զբօսանքի։ Յայտնի է 1919 թ. Յուլիսի 13-ին Թիֆլիսի Յուրինեան որբանոցում բանաստեղծի «Մեր անելիքը» խորագրով դասախօսութիւնը, որի մասին որբերը գրում են. «Թումանեանի ամէն մի խօսքը մեզ համար պատուիրան էր ու պատգամ, ապագայացոյց լուսարձակ»¹⁰²։ Բանաստեղծը խրախուսում էր ոչ միայն ստեղծագործող որբերին, այլեւ լաւ սովորելու ցանկութիւն ունեցողներին։ Որբանոցներից մէկում հերթական այցելութեան ժամանակ բանաստեղծը խոստանում է մէկ

¹⁰¹ «Գարուն» ամսագիր, Ե., 1984, № 4, էջ 14։ Տե՛ս նաեւ Թումանյան, հ. 10, էջ 331։

¹⁰² «Փարոս», 1919, Թիֆլիս. Օգոստոսի 3, № 19։ Տե՛ս նաեւ ԹԺՀ, հ. 2, էջ 465։

շաբաթ անց՝ յաջորդ այցին, բոլոր նրանց, ովքեր բարձր գնահատականներ կ'ունենան, տասնել իր տուն, ծանոթացնել Անդրանիկի հետ: Յաջորդ այցին իր տուն է բերում մեկ տասնեակից ավելի երեխաների, որոնց մեջ էր նաև արգենտինահայ բանաստեղծուհի Ալիսա Կիրակոսեանի հայրը՝ Գուրգենը: Ամեն անգամ, երբ Անդրանիկը հիւրընկալում էր Թումանեանի տանը, բանաստեղծը արիթմ քաց չէր թողնում որբերին ծանոթացնելու նրա հետ: Բանաստեղծի 50-ամեակի օրերին որբերի շնորհատրական բազմաթիւ նամակները սկսում էին «Մեր սիրելի հայրիկ»¹⁰³ դիմումով: Որբերը մեծ բազմությամբ այցելեցին Թումանեանի բնակարան, վողեիլ բեմադրեցին, երեկոյթներ կազմակերպեցին նրա համար:

Կոստանդնուպոլսի որբանոցում

ՀՕԿ- ի նախագահի պաշտօնում ծայր աստիճան վատատրոջ բանաստեղծը 1921 թ. վերջին գործուղում է Պուլիս՝ սփյուռքի հետ կապ հաստատելու, հայ գաղթականությանն ու որբերին օգնելու, հանգանակություն կազմակերպելու նպատակով: Թումանեանը, ինչպիսի առաքելություն էլ իրականացնելիս լինէր, նա պարտադիր այցելում էր որբանոցներ: Պուլիսը բացառություն չէր: «Միրուած քերթողի» ներկայությունը վայելելու նպատակով 1921 թ. Նոյեմբերի 14-ին Դպրոցասէր Տիկնանց Գատը գիւղի որբանոց- վարժարանի սանուհիները եւ վարժու-

¹⁰³ ԳԱԹ, ԹՖ № 1514, (1688):

հիները ի պատիւ բանաստեղծի նախաձեռնում եւ Էպո-
մակերպում են գեղարուեստական հանդէս: Հրաժեշտի
պահին Թումանեանը տպաւորութիւնների մատնանում
գրում է, որ Տիկնանց վարժարանն ու որբանոցները. «ա-
ւելի շատ պիտի պաշտպանեն մեր դատը, քան բոլոր դի-
ւանագէտները միասին առած»¹⁰⁴: Բանաստեղծը հրաւեր-
ներ էր ստանում նաեւ այլ որբանոցներից, որոնց թւում էր
Գուելիի որբանոցը, ուր ապաստանել էին 1000-ից ավելի
որբեր: Ուշագրաւ ու խորհրդանշական է, որ Թումանեա-
նի որբախնամ գործունեութեան վերջին ակորդը եղաւ
Պոլսի որբանոցում, այնտեղ, որտեղ սկիզբ առան ցեղաս-
պանութեան հրէշաւոր ծրագրերը եւ դրուեցին Հայաս-
տանը համատարած որբաշխարհի վերածելու հիմքերը:

Բարոյական անցաթուղթ

1920 թ. Փետրուարին ամերիկացի ռազմական, քա-
ղաքական գործիչ, գնդապետ Ուիլիամ Հասկելի նախա-
ձեռնութեամբ Վրաստանի Հայոց ազգային խորհրդին կից
կազմուեց «Հայ որբերի եւ գաղթականների օգնութեան
հանգանակիչ կոմիտէ», որի նախագահ ընտրուեց Թու-
մանեանը¹⁰⁵: Կոմիտէի խորհրդակցութիւնները տեղի էին
ունենում հէնց բանաստեղծի բնակարանում: Դիմելով ժո-
ղովրդին՝ բանաստեղծը հանգանակութեան կոչ է անում.
«Էս գործը ինչքան նիւթական՝ եւս առաւել բարոյական

¹⁰⁴ «Հայ կիւն», 1921, № 2, էջ 812:

¹⁰⁵ «Слово», 1920, № 48, Փետրուարի 29:

արժէք ունի, հետեւաբար սա հարուստների գործ չի, այլ ամէնքիս... Ով ինչքանով որ կւարող է՝ օգնութեան պիտի գայ մեր որբերին եւ գաղթականներին եւ իր գրպանում ունենայ յանձնաժողովիս անդորրագիրը: Էս անդորրագիրը¹⁰⁶ բարոյական անցաթուղթ է ամէն մի հայի համար, եւ էս բարոյական անցաթուղթը ձեռք պիտի բերի ամէն մի հայ, մեծ, թէ փոքր, որ մարդկային սիրտ ունի իր կրծքում եւ ազգային զգացմունք ունի իր սրտում»¹⁰⁷: «Ընդհանուր կամաւոր տուրք» կոչ-յօդուածում Թումանեանը յաւելում է. «Եւ մեղաւոր են ոչ միայն մեր հարուստները, այլեւ մենք՝ ամէնքս ... Թէ ով ինչքան կարող էր տալ, դա ջոկ խնդիր է, բայց որ ամէնքս կարող էինք տալ, շատ ունեցողը՝ շատ, քիչ ունեցողը՝ քիչ... Ամէն մի հայի տուն պէտք է իր վրայ կամաւոր ամսական տուրք վերցնի, ինչքան կարող է... Ո՛չ ուրիշ ելք կայ եւ ո՛չ էլ արդարանալու որեւէ ճանապարհ»¹⁰⁸:

Դեռ հանգանակիչ կոմիտէի ստեղծումից ամիսներ առաջ Թումանեանը կամովին տուրք էր վերցրել եւ իր ընտանիքի անունից ամսական որբերի ու գաղթականների ֆոնտին վճարում էր 300 ռուբլի¹⁰⁹: Իր անձնական օրինակով փորձում է հայութեան մէջ մտցնել կամաւոր ընդ-

¹⁰⁶ Այդ անդորրագրերի օրինակները տե՛ս ԳԱԹ, ԿԸՖ, № 241:

¹⁰⁷ Կոչի սեւագիրը պահւում է ԳԱԹ, ԿԸ Ֆ., № 107/3:

¹⁰⁸ «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, № 16, Յունուարի 22: Տե՛ս նաեւ՝ Թումանյան, հ. 7, էջ 397:

¹⁰⁹ «Նոր աշխատաւոր», Թիֆլիս, 1919, № 135, Յուլիսի 6, էջ 4:

հանուր տուրք:

1920 թ. Մարտի 9-ին բանաստեղծը գրքերի հրատարակութեան իր իրաւունքը վաճառելով 30 000 ռուբլով, ստացած գումարից 10 000 ռուբլի յատկացրել է հայ որբերին, 10 000 ռ. Վրաստանի (Գորիի) երկրաշարժից տուժածներին, 10 000 ռ. էլ՝ հայ գաղթականներին¹¹⁰: 1920 թ. Ապրիլի 24 -ին՝ լրագրերում տպագրւում են մի շարք նուիրատուների անուններ եւ տրամադրած գումարի չափը: Թումանեանը ամենաշոայն էր՝ ընտանիքի անունից նուիրել էր 1000 ռ.¹¹¹: Ուշագրաւ է, որ ցուցակում կային ոչ միայն Թումանեանի բոլոր զաւակների, այլ նոյնիսկ երկու թոռնիկների՝ Յովիկի եւ Անահիտի անունները: Բայց զարմանալի էր, որ ցուցակում կար նաեւ 1918 թ. Մարտին Եղեռնի զոհ դարձած որդու՝ Վանի վերջին հայ պարետ, Եղեռնի զոհ դարձած Արտաւազդի անունը¹¹²: Բանաստեղծն ուզում էր երեք տարի շարունակ Արեւմտեան Հայաստանում որբեր խնամող զաւակի անունը տեսնել հայ որբերի բարերարների ցանկում:

Հանգանակութիւն կազմակերպելու բանաստեղծի ջանքերը միանշանակ չընդունուեցին: Նա մեղադրուեց համաշխարհային իմպերիալիստներին ծառայելու մէջ: Մէյրին (Գուլոյեան Ա.) «Հերիք է մուրալ» յօդուածում դժգոհում է. «Թումանեանը մի կողմից մասնակցելով Լո-

¹¹⁰ «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, № 55, Մարտի 9, էջ 3:

¹¹¹ «Աշխատաւոր», Թիֆլիս, 1920, № 17, Ապրիլի 24:

¹¹² Նոյն տեղում:

ռու, Բորչալուի, Ախալքալաքի վեճերին, պաշտպանելով Հայաստանի տերիտորիալ շահերը, իսկ միւս կողմից ... տեսակցութիւններ անելով վրաց մեծամեծերի հետ-
երեւան է հանում բուրժուազիայի երկու երեսը... .. ինչո՞ւ
պիտի լինէին այդ որբերը, եւ ինչու ամերիկացի Հասկելը
ողորմութիւն պիտի անէր նրանց ... այդ որբերը նոյն Հաս-
կելի գործն են... Մեծափառ աղան պրիկաշչիկին աթոռ է
տալիս իր կողքին նստելու... Թումանեանը նստում է
Հասկելի հետ»¹¹³:

Իսկ բանաստեղծը պատրաստ էր ընդունել ցան-
կացած օգնութիւն, որը կը փրկէր թէկուզ մի որբի կեանք:
Որբախնամ գործունէութեան ոլորտում Թումանեանի
համագործակցութիւնը Հասկելի հետ ունի նաեւ իր
պատմական նշանակութիւնը: Նա դրանով դարձաւ այն
հայ գործիչը, որը միացաւ Ամերիկայի այդ նախաձեռնու-
թեանը:

Մանկական խաղերի ստեղծողը

Ժամանակակից ցեղասպանագիտութիւնը կարեւո-
րում է նաեւ բռնութիւնների բարոյական ու հոգեբանական
հետեւանքների վերականգնման ուղիների ու միջոցների
ուսումնասիրութիւնը: Այդ խնդիրներին, ինչպէս նաեւ
satisfaction տարողունակ եզրոյթին անդրադարձել է ցե-

¹¹³ Սկրիբի, «Չէրիք է մուրալ». «Կոմունիստ» օրաթերթ, Բարսու, № 42,
1920, Յուլիսի 7:

դասպանագետ Ա. Մարութեանը¹¹⁴: Այս խնդիրը մտահոգել է նաև բանաստեղծին: Նա խաղի միջոցով է փորձում կանխել բռնությունների բացասական ազդեցությունը թե՛ այդ օրերին, թե՛ հետագայ սերունդների հոգեբանության վրայ: Առաջին հերթին որբերի կեանքը բնականոն հունի մեջ դնելու նպատակով ամենաբազմազբաղ բանաստեղծը 1915թ. խաղեր է ստեղծում՝ վստահ, որ նաև այդ ճանապարհով կարելի է երեխաներին ազատագրել կոտորածների պատկերների ահամոկեցուցիչ տեսարանների մղձաւանջներից, հայրենազրկութեան հետեւանքով առաջացած բարդոյթների ու վախի զգացողութիւնից: Ընդորում, մանկագիրը հայրենազրկութեան օրերին ստեղծում է հայրենագիտական խաղեր, որոնք նպատակ ունեն երեխաների մեջ վառ պահել հայրենիքի բնութիւնն ու աշխարհագրութիւնը, նրա պատմութիւնը. «Մտքումս դրել եմ, էնպէս անեմ, որ մի երկու տարում բոլոր հայ երեխաներին սովորեցնեմ հայոց գետերի, քաղաքների, լեռների, լճերի եւ այլն - գոնէ անունները»¹¹⁵: 1915թ. աշնանը Թումանեանն անձամբ այցելում է Օրթաճալայի որբանոցները եւ երեխաներին նուիրում՝ «Հայոց գետերը», «Հայկական առածներ» եւ այլ խաղեր:

¹¹⁴ Մարության Ա., Հայոց ցեղասպանության հետեւանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Եր., 2014, ՀՀ ԳԱԱ Պատմ. ինստիտուտ, 332 էջ:

¹¹⁵ Թումանյան, հ. 10, էջ 223:

Եզրակացութիւն

Թումանեանը հայ որբախնամ գործունէութեան կարեւոր դերակատարներից է: Նա միայն Էջմիածնում 10 000-ից անէլի որբերի խնամքով է զբաղուել, եռանդուն գործունէութիւն է ծաւալել Թիֆլիսի տարբեր, մասնաւորապէս «Ծիրանաւոր» որբանոցում, Ալեքսանդրապոլի որբանոցից երեխաներ է տարել իր տուն եւ մէկ տարի շարունակ պահել: Բանաստեղծը Հայ գրողների կովկասեան ընկերութեան անունից որդեգրել է որբեր, որոնք դարձել են իր որդեգիրները: Համագործակցել է ԱՄՆ ներկայացուցիչ Հասկելի հետ եւ նախագահել «Հայ որբերի եւ գաղթականների օգնութեան հանգանակիչ կոմիտէն», կազմակերպել է հանգանակութիւն որբերի օգտին, հայրենագիտական մանկական խաղեր է ստեղծել ու հրատարակրել, խրախուսել է յատկապէս շնորհալի, ստեղծագործող որբերին:

Թումանեանը ջանում էր ոչ միայն որբերի ֆիզիքական փրկութեան, այլեւ նրանց ազգային ինքնութեան պահպանման համար: Որբախնամ գործունէութիւն ծաւալած հայ եւ այլազգի բոլոր գործիչների շարքում Ամենայն Հայոց Բանաստեղծը միակն էր, որ 1915թ. Օգոստոսից Արեւելեան Հայաստանում ապաստանած հազարաւոր որբերի համար դարձաւ Որբերի Ամենայն Հայոց Հայրիկ, որին որբերը ձօնեցին բանաստեղծութիւններ ու յօդուածներ հէնց Եղեռնի տարիներին եւ նրան յաջորդած տասնամեակներում:

FATHER OF ORPHANS

Susanna Hovhannisyan

Institute of Literature named after M. Abeghyan of NAS RA

Doctor of Science in Literature

Key words: Hovhannes Tumanyan, orphans, refugees, genocide, orphanages, Etchmiadzin, Alexandropol, missionaries, adoptive parents, "Committee for Assistance to Armenian Orphans and Refugees".

Hovhannes Tumanyan plays an important role in the history of the functioning of Armenian orphanages. Only in Etchmiadzin, the poet took care of more than ten thousand orphans. He launched active work in various Tiflis orphanages, in particular the "Tsiranavor" orphanage. He took dozens of orphans from the Alexandropol orphanage to his home and kept them there for a year. On behalf of the Caucasian Society of Armenian Writers, the poet adopted orphans who became his adopted children. He collaborated with US representative Colonel Haskell and became the chairman of the "Committee for Assistance to Armenian Orphans and Refugees" which was created on his initiative. Tumanyan organized a fundraiser for orphans in Armenia and the Armenian diaspora abroad. The poet created and published patriotic children's games, emphasized patriotic education in the form of a hero commander, and encouraged especially gifted orphans who were prone to creativity. He strove not only for the physical salvation of the orphans, but also for the preservation of their national identity.

Among all the Armenian and foreign figures who cared for Armenian orphans, the Poet of all Armenians was the only one who, during the Genocide, received the national title of Father of all Armenian orphans.

ՃԸՊԷՅԼԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ «ՏՈՒՆ»
ԱՄՍԱԳԻՐԸ.
ԱԶԴԱԿ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ¹¹⁶

Նարինե Վ. Մարգարեան
«Հայոց ցեղասպանութեան
թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ
պ.գ.թ.

*Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանութիւն, որբեր,
ազգային ինքնագիտակցութիւն, Լիբանան, Ճըպէյլի
որբանոց, աշակերտական թերթ, որբանոցային մամուլ,
կրթութիւն, ազգային վերակերտում:*

Հայոց ցեղասպանութեան տարիներին որբաշ-
խարհի առջեւ ծառացած խնդիրները բարդ էին, դժուար
էր լուծել վերապրելու, սովը յաղթահարելու, համաճա-
րակներից փրկուելու հարցերը, ինչպէս նաեւ ծնողերի
կորստին ականատես լինելուց յետոյ վերապրումները
յաղթահարելու եւ կեանքը շարունակելու խնդիրը: Մի-
ջազետքի անապատներից, մուսուլմանաբնակ վայրերից
իրականացուող որբահաւաք աշխատանքների արդիւն-
քում բազմահազար որբեր ապաստան էին գտնում հայ-
կական եւ օտարերկրեայ տարբեր որբանոցներում: Վեր-

¹¹⁶ Յօդուածի ամբողջական տարբերակը տպագրուել է Ցեղասպա-
նագիտական հանդէս 8, no. 2 (2020), 42-75, տե՛ս <https://agmi-publications.asnet.am/wp-content/uploads/2021/02/2020.242-75.pdf>

ջիններս իրենց գործունեության բնոյթով տարբեր էին՝ մաքուր հայկականից մինչեւ խիստ օտարամոլ, իսկ մինչեւ 1918 թ. Մուղրոսի զինադադարը գործում էին նաեւ թուրքական որբանոցներ:

Ստեղծուած իրավիճակում հայ երեխաները յայտնուել էին բարդ իրավիճակում. թուրքական կողմից նրանք կանգնած էին ազգաստեղծման, իսկ հայկական կողմից ազգապահպանման դիրքերում: Ազգային ուժերը յստակ գիտակցում էին իւրաքանչիւր որբի փրկութեան, նրան հայկական ինքնութեան վերադարձելու արժէքը, ինչպէս նաեւ ցեղասպանութեան տրաւման յաղթահարելու կարելոյութիւնը, որի կարելոյ մասնաբաժինը վերապահուած էր որբանոցներում աշխատող անձնակազմին: Յաղթահարման փուլի համար որբանոցային առօրեան անհրաժեշտ էր յազեցած կազմակերպել, երեխաներին զբաղուածութիւն ապահովել, ինչի կարելոյ բաղադրիչներն էին ուսումնական, մարզական կեանքը, որին զուգահեռ որբանոցային միջավայրում ձեւաւորւում է նաեւ իւրայատուկ մի ուղղութիւն եւս՝ որբանոցային մամուլը: Այն բնորոշ էր աւելի երկար գործող, աւելի կազմակերպուած որբանոցներին, բայց հարկ է փաստել, որ որեւէ պարբերական հրատարակելու գաղափարն իրականութեան վերածելու համար կարելոյ էր որբանոցում տիրող մթնոլորտը: Ձեռագիր թերթեր ունեցել են Հալէպի հայկական որբանոցը, Այնթապի որբանոցն ունեցել է «Այգ»

անունով թերթ¹¹⁷: 1918-1919 թթ. Թիֆլիսում տպագրել է «Փարոս»ը, որը եղել է Ամերիկեան կոմիտեի որբանոցների որբ աշակերտական միութեան օրկանը: 1925-1931 թթ. Պշրութում տպագրուել է «Ռբաշխարհի սասող» ամսագիրը, որը Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կազմակերպութեան որբերի դաշնակցութեան /լիկայի/ համատեղ օրկանն էր:

Որբանոցային մամուլի դասական օրինակ է Լիբանանի Ճըպէլի¹¹⁸ որբանոցի¹¹⁹ «Տուն»¹²⁰ աշակերտական

¹¹⁷ Տե՛ս Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն եւ բառամեայ պատմութեան վրայ (1919 Օգոստոսէ 1923 Յունիս), Հայ որբախնամ ընկերութեան Այնթապի որբանոց, Ճինիէ-Լիբանան, Աղերսանդրիա, 1923, էջ 21:

¹¹⁸ Ճըպէլը գտնուում է Միջերկրական ծովի ափին, Պէյրութից 40 կմ հեռաւորութեան վրայ: Հնագոյն քաղաքն ունի մօտ եօթ հազար տարուան պատմութիւն: Ճըպէլ անունը սեմական արմատներով բառ է, որը նշանակում է «Փոքր լեռ», իսկ Պիպլոսը՝ վերջինիս յունահռոմէական անուանումն է: Մանրամասն տե՛ս Յուշամատեան Ճէպէլի ամերիկեան որբանոցի 1920-1925 (Պէյրութ, Համագային, հրատ. նախկին սաներու, 1969), էջ 19-27:

¹¹⁹ Ճըպէլի որբանոցը բացուել է 1920 թ. Հոկտեմբերին՝ 1.200 որբերով՝ Ռէյ Թրէվիսի ղեկավարութեամբ: Վերջինս որբերի հիմնական մասի հետ այստեղ է տեղափոխուել Այնթապի որբանոցից: Այնուհետեւ որբանոցը համալրուել է Սիրիայի եւ Թուրքիայի տարբեր շրջաններից եկող որբերով: 1923 թ. Նահր Բաբահիմի որբանոցում, որտեղ ապաստանել էին հիմնականում Գոնիայի եւ Կեսարիայի որբերը, համաճարակի պատճառով փակուելուց յետոյ նոյնպէս տեղափոխուել են Ճըպէլ: Որբերի առաւելագոյն թիւը հասել է 1.500-ի, որից 400-ը՝ մանկապարտէզում, 150-200՝ արհեստանոցում, մնացած 900-ը՝ նախակրթարանում եւ բարձրագոյն բաժիններում: Որբա-

ամսագիրը: Որքանոցը Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կազմակերպութեան որքանոցային ցանցում գործող որքանոցներից մէկն էր: Նշենք, որ ցեղասպանութեան տարիներին այս կազմակերպութիւնը ստանձնել էր Սիրիայում, Լիբանանում ապաստան գտած մօտ յաւանքը հազար որբերի խնամքը¹²¹:

Յօդուածում փորձ է արուել ուսումնասիրել ամսագրի շուրջ երեք տարուան ընթացքում գրուած 34 համարները ընդհանուր մօտ 850 էջերը: Ընդ որում, նշենք, որ «Տուն» ամսագիրն իր բովանդակային տեսանկիւնից մինչ այժմ չի ուսումնասիրուել, թէւ «Յուշամատեան Ճիւղի ամերիկեան որքանոցի 1920-1925» ժողովածուում անդրադարձ կատարուել է ամսագրին, ներկայացուել է ամսագրի էջերից հակիրճ ծաղկաքաղ¹²²:

Ճըպէլի որքանոցի մասին մանրամասն տեղեկութիւններ են ամփոփուած որքանոցի սաների կողմից հաւաքուած ու խմբագրուած «Յուշամատեան»ում, որտեղ մի քանի բաժիններով ներկայացուած է որքանոցի գործունէութիւնը: Այն հրապարակուել է որքանոցի փակուելուց

նոցում ապաստան են գտել 4-16 տարեկան տղայ որբեր: Տե՛ս Յուշամատեան, էջ 55:

¹²⁰ Ամսագրի ամբողջական թուային տարբերակը մեզ է տրամադրել ՀՅԺԻ Էիմանադրամի խորհրդական, աղբիւրագէտ Միհրան Մինասեանը, ինչի համար մեր շնորհակալութիւնն ենք յայտնում նրան:

¹²¹ «Հայ որբեր. տեղեկագիր հայ որբերի կացութեան, որքանոցներու, հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ» ձեռագիր տեղեկագիր (Փարիզ), 1923:

¹²² «Փունջ մը «Տուն»էն», Յուշամատեան, էջ 167-194:

40 տարի անց, եւ խմբագրական խորհրդի անդամները, որոնք որբանոցի նախկին սաներն են եղել, հետամուտ են եղել, որ հրատարակուեն առաւել ամբողջական նիւթեր, փաստաթղթեր, յուշագրութիւններ: Յուշամատեանի խմբագրական անձնակազմը յաւելուածի տեսքով կարողացել է մեծ դժուարութեամբ տոմարներից ու մարդասիւմարի տուեալներից դուրս բերել ու հրապարակել որբանոցում ապաստանած 1500 որբերից 550 անուն-ազգանունները:

Որբանոցային ամսագիրը համախմբել է Հայոց ցեղասպանութիւնը վերապրած որբերի կամ *որբանոցային սերնդի* առաջին տպաւորութիւններն ու պատկերացումները, որը պիտի իր ազդեցութիւնն ունենար յաջորդ սերունդներին վրայ:

Հիմնելով «Տուն» ամսագիրը

Ամսագիր ունենալու ուսուցիչների ու աշակերտների ցանկութիւնը միայն իրենց առօրեայում հետաքրքրութիւն կամ զբաղուածութիւն մտցնելը չէր, այն յստակ առաքելութիւն ունէր՝ վերականգնել ազգային ինքնութիւնը, որք աշակերտներին իրենց ազգային ինքնութեան մասին գիտելիքներ փոխանցել, իսկ ովքեր աւելի փոքր տարիքում էին եղել ու քիչ բան գիտէին, կամ առհասարակ տեղեակ չէին իրենց ազգային պատկանելութեան մասին գիտելիքներ փոխանցել: Որբանոցի ուսուցիչներից Սարգիս Տարտունին խորապէս զգում է, որ տղանե-

րին պէտք է յոյս, հաւատ ներշնչել դէպի իրենց ժողովուրդը, դէպի հայ ժողովրդի ապագան: Այս առաքելութեամբ է սկսուում ամսագրի հրատարակումը: Որբանոցը, մինչեւ «Տուն» ամսագրի հրատարակումը, Սարգիս Տարտունու նախաձեռնութեամբ եւ որբանոցի աւարտական դասարանների մասնակցութեամբ հեղինակել են «Հոսանք» անունը կրող խմորատիպ ամսագիրը: Սակայն Տարտունին՝ որպէս խոռվարար եւ յեղափոխութիւն սերմանող է որակւում եւ որբանոցից հեռացւում է, ամսագիրը փակւում: Որոշ ժամանակ անց հասունանում է նոր ամսագիր յոյս ընծայելու գաղափարը, որն արդէն կոչւում է «Տուն»: Որբանոցի սան, բազմաթիւ յօդուածների հեղինակ Յովհաննէս Մեղրունին յիշում է, որ մօտաւորապէս չորս տարի առաջ, իրենք որբանոցի մի քանի ընկերներով որոշել են ամսագիր հրատարակել եւ անգամ անուն են որոշել՝ «Հոսանք», որը խմորատիպ թերթի կարգավիճակով ամիսը երկու անգամ պիտի լոյս տեսներ: «Կարճ եղաւ «Հոսանք»-ին կեանքը, ան կարգ մը անհաճոյ դէպքերու պատճառով գոյութենէն դադրեցաւ, բայց այն եղաւ հիմնաքարը ներկայ Տուն-ին»¹²³:

Մեղրունին յիշում էր, որ մի կիրակի հաւաքուած են եղել, երբ ուսուցիչներից մէկն ամսագիր ստեղծելու գաղափարն է տուել, անգամ անուն է առաջարկել՝ «Տուն»: Ու այս անունով ամսագիրն «իր կոչումին համաձայն,

¹²³ Մեղրունի Յովհաննէս, ««Հոսանք»-էն, Տուն», «Տուն», Ճրպկլ, 1924, Սեպտեմբեր, թիւ 25, էջ 12-13:

ճշմարիտ տուն մը եղաւ, տուն մը, որուն մէջ որբանոցի գրողները (եթէ կարելի է այսպէս անուանել) շուտով ապաստան գտան»¹²⁴։ Մեղրունին նշում է նաեւ, որ ամսագրի աշխատող թիւն ուժեղացաւ յատկապէս Նահր Իպրահիմի որբերի¹²⁵ ճըպել տեղափոխուելուց յետոյ¹²⁶։

Ամսագրի առաջին համարը լոյս է տեսել 1922 թ. Սեպտեմբերին, ունեցել է կանոնաւոր հրատարակութիւն, չնայած որոշ համարներ միասին են տպագրուել։ Այն տպագրուել է մօտ 40-50 օրինակներով¹²⁷։ Ամսագիրն ունեցել է նաեւ օգտակար խորհուրդների բաժին, թելաւոր խօսքերի, զուարճալիքների կամ մանրապատումներ-

¹²⁴ Նոյն տեղում։

¹²⁵ 1923 թ. մալարիայի տարածման պատճառով Նահր Իպրահիմի որբանոցի սաները տեղափոխուել են ճըպելի որբանոց։

¹²⁶ Մեղրունի Յովհաննէս, «Հոսանք»-էն, Տուն, Տուն. Սեպտեմբեր. 1924, թիւ 25, էջ 12-13։

¹²⁷ Խմորատիպ ամսագիրն ունեցել է նաեւ անգլերէն, արեւելի քիչ ֆրանսերէն յօդուածներ, երբեմն հանդիպում ենք օտար հեղինակների յայտնի գործերից թարգմանութիւններ։ Ամսագրի առաջին 12 համարները՝ 20-ական էջ են, № 13-14, № 15-16, № 17-18 համատեղ համարները՝ 32 էջ, № 19 եւ № 20՝ 36 էջ, № 21 եւ № 22՝ 60, № 23՝ 72 էջ, № 24՝ 52 էջ, № 25՝ 60 էջ, № 26-27-28՝ 64 էջ, № 29-33՝ 40 էջ, № 34՝ 32 էջ։ Ամսագրի էջերում ներառուել են շուրջ 60 յայտնի քաղաքական ու գրական գործիչների դիմանկարներ, ինչպէս նաեւ բազմաթիւ նկարազարդումներ։ Գլխաւոր գծանկարիչն է եղել Յարութիւն Ղազարեանը, նրան օգնել են նաեւ Ռ. Ղուկասեանը, Գ. Գիրգորեանը եւ Գ. Խաչերեսեանը։ Ամսագրի օրինակներ են ուղարկուել Մերձասոր Արեւելի Պէրոյի եւ կեդրոնական գրասենեակներ, տարբեր պաշտօնեաներին, հայկական ազգային մարմիններին, թերթերի խմբագրատներին, միւս որբանոցներին, Կիլիկիոյ կաթողիկոսին իր շուրջ ստեղծելով համակրանքի ջերմ մթնոլորտ։

րի բաժին, որոնք հիմնականում իրական, որքանոցային դեպքեր են եղել:

Սկզբնական շրջանում ամսագրի խմբագրութեան աշխատանքներն ուղղորդել են հայերենի ուսուցիչներ Կոստան Պանտիկեանը, Հայկ Պալեանը, սակայն հիմնական պատասխանատուները եղել են երեխաները: Որքանոցում մշտապես սերտ են եղել ուսուցիչ-աշակերտ յարաբերությունները եւ այդ մասին հետաքրքիր դիտարկումներով է կիսում Միհրան Ղազարեանը՝ գրելով. «Աշխարհի ամենաազնիւ ու մաքուր զգացմունքները կրնանք գտնել ուսուցիչներու անձնուէր սրտերու մէջ դէպի իրենց աշակերտները ... ուսուցչին յոյսը աշակերտին ապագային վրայ է ու աշակերտին ապագան ուսուցիչին ներկայէն կախեալ է»¹²⁸:

«Տուն» ամսագիրը իր «Տուն, քաղցրիկ տուն» կարգախօսին համաձայն փորձել է իր էջերում որբերի համար ընտանեկան մթնոլորտ ապահովել: Ամսագրի տարբեր համարներում ակնյայտօրէն նկատուում է գաղութարական տունը ստեղծելու աշակերտների ջանքերը:

Ամսագրի առաջին համարում խօսուում է *Տուն*՝ որպէս որքանոց հաւաքական գաղափարի մասին, ուր բոլորը հաւաքուել են որոշակի հանգամանքներից ելնելով եւ հեղինակը Զաքար Տարազճեանը գրում է. «Տուն կը կոչենք այն վայրը ուր հաւաքականութիւն մը ընտանիք մը

¹²⁸ Ղազարեան Միհրան, «Ուսուցիչը եւ Աշակերտը», «Տուն», Ճրպել, 1923, Սեպտեմբեր-Նոյեմբեր, թիւ 13-14, էջ 5:

ապաստանած է ... իբր մարդ անհատներու հաւաքականութիւն մը որ ունի իր յատուկ կենցաղն ու ապրելակերպը»¹²⁹։ Ընտանիքի գաղափարների մասին խօսելիս հեղինակն եզրակացնում է. «...տունը այն միջավայրն է, ուր մարդ անհատը կը վարժուի ընկերական փոխադարձ պարտականութիւններու եւ իրաւունքներու, այն տեղն է, որ մարդու մէջ կը մշակուի գործակցութեան եւ գոհունակութեան ոգին»¹³⁰։

1922-1923 թթ. իրենց գործունէութեան յաջող ընթացքի համար նրանք առանձնացնում են իրենց խմբագիրներին՝ 60 հոգու՝ անուն առ անուն, ցուցակին յաջորդում է «Մտքի աշխատանք» նիւթը, որտեղ կարդում ենք «Խորիկ՝, կարդա՛, գրե՛, պատմե՛, դատե՛, գլուխդ ուղղո՛ւր. «մտքի աշխատանք» անուն տուած են ասոնց։ Դու պիտի ցուցանես, թէ որքան խորիկի գիտես, այսինքն թէ որքան մարդ ես։ Դու պիտի ցուցանես, թէ որքան ազնիւ են քու գաղափարները, որքան բարձր են քու դատողութիւնները, որքան ճիշտ»¹³¹։

Որբերը յիշում են, թէ ինչ ճանապարհ են անցել, մինչեւ հասել են ճըպէյլ։ Դեռեւս 1919 թ. Ապրիլ ամսին Հալէպում վրաններից բաղկացած հաստատութիւնում, որտեղ բոլորը խօսում էին տարբեր լեզուներով, տարբեր

¹²⁹ Տարագճեան Զաքար, «Տունը», «Տուն», Ճըպէյլ, 1922, Սեպտեմբեր, թիւ 1, էջ 2։

¹³⁰ Նոյն տեղում, էջ 3-4։

¹³¹ «Մտքի աշխատանք», «Տուն», Ճըպէյլ, 1923, Օգոստոս, թիւ 12, էջ 20։

գաւառաբարբառներով, վաղուց զրկուած ծնողական խնամքից, իրար անծանօթ, գիտակցել են, որ բոլորը եղբայրներ են, միմեանց արինակից ու հայրենակից: Ուրախ էին, որ թափառական կեանքը վերջ պիտի գտնէր¹³²: Չնայած նրանց ճշգլեյլում տեղաւորել էին մետաքսի հին գործարանում, բայց իրենք ոգեւորուած էին, քանի որ տան մէջ էին, իրենց համար գործ կար. ծանր, բայց նուիրական:

Հետեւելով «Առողջ մարմնում առողջ հոգի» էւարգախօսին

Երեխաները, անցնելով ցեղասպանութեան միջով, բնական էր, որ նրանց մօտ հոգեկան ապրումներն ուղեկցւում էին առողջական խնդիրներով, որը նոյնպէս որբանոցի դեկավարութեան ուշադրութեան կեդրոնում էր, սպորտային կեանք, մարզանքներ, լող, ինչի անբարդարձը տեսնում ենք ամսագրի համարներում: Առաջին համարներում յատուկ ուշադրութիւն է դարձւում մարզական կեանքին: Յատկանշական է, որ մարմնամարզական կեանքում առաջնորդւում էին Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան գաղափարախօսութեամբ եւ գործելաոճով, որի հիմքում կրկին ազգայինն էր՝ «կերտել հայրենիքի զաւակ՝ տոկուն մարդ»՝ հաւատարիմ մնալով իրենց գաղափարին՝ «Առողջ սերունդ պաւորաստել նոր

¹³² Նոյն տեղում, էջ 10:

հայրենիքի համար»¹³³։

«Ընտիր Խոհեր» բաժնում ներկայացում է Հայ սկսուտի բնութագիրը եւ «Բարձրացի՛ր, բարձրացո՛ւր» կարգախօսի նշանակութիւնը, որը մարդասիրական գաղափարախօսութիւնից զատ որբանոցում առաւել կարեւոր էր իր հայրենակից-ընկերոջն օգնելու տեսանկիւնից եւ թիմային-հաւաքական մտածելակերպ ձեւաւորելու համար։

Յատկանշական է, որ «Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան» գրքոյկից վերցուած ու թերթի համարներում է շարադրուած նաեւ սկսուտի երգը, նրանց կարգախօսը, 12 կանտոները, որոնց պէտք է հետեւի սկսուտը, «Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան» յայտագիր-ծրագիրը¹³⁴։ Ամսագրի երկրորդ, երրորդ, չորրորդ համարներում անդրադարձ կայ սկսուտի կերպարին, որտեղ ընդգծւում էր բարոյական բարձր արժէքներով օժտուած մարդու կերպարը։ Նշենք նաեւ, որ որբերի առողջ լինելուն նպաստել են նաեւ որբանոցի աշխտահագրական եւ կլիմայական պայմանները, ծովափին տեղակայուած լինելու հանգամանքը։

Ամսագրի հինգերորդ համարի բովանդակութիւ-

¹³³ Խճագրական, Մեր գաղափարականը, Հայ Սկսուտ, կիսամեայ հանդէս, «Տուն», Ճըպէյ, 1919, 25 Հոկտեմբեր։

¹³⁴ Քաղուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան (Հ.Մ.Ը.Մ.) գրքոյկէն, «Տուն», Ճըպէյ, Մեպտեմբեր, 1922, թիւ 1, էջ 15-17։

նից պարզ է դառնում, որ որբերը ծանօթանում էին ՀՍՀՄ պատմությանը, հիմնադիրներին ու նրանց այս ոլորտում ունեցած ներդրմանը: Դրա ապացույցն է 1911-1914 թթ. Կ. Պոլսում հրատարակուող «Հայ մարմնամարզ» թերթի հիմնադիր, Հայոց ցեղասպանության զոհ, բազմաթիվ մրցանակների արժանացած Շաւարշ Քրիսեանի գործունեությունը: Ամսագրի այս համարում հանդիպում ենք նաեւ վերջինիս գծանկարին՝ մակագրուած՝ ՀՍՀՄ հիմնադիր¹³⁵:

Որբանոցում կարեւորում էր նաեւ սպորտային մրցումների դերը, ինչպէս նաեւ մարզական արշաւները: Աշակերտների համար պարբերաբար արշաւներ էին կազմակերպում դէպի Նաիր Իպրահիմ եւ որբանոցի յարակից շրջաններ, անգամ մեկնել են Պիպլուսի հին բերդի տարածքում պեղումների:

Որբանոցում յատուկ ուշադրութիւն է դարձուել նաեւ առողջութեանը, հիգիենային, ողջունուել է առողջ ապրելակերպը, հիգիենայի պահպանման կանոնները, ինչի անդրադարձը տեսնում ենք ամսագրի էջերում:

Որբանոցային կեանքում հետաքրքիր իրարանցում էր ստեղծում առողջ ատամներ ունենալու քարոզարշաւը: Բժիշկ Սրապեանը պատմում է, որ որբերին ոգևորելու համար անգամ ամենամեայ միջորբանոցային մրցոյթներ են կազմակերպուել «առողջ ատամներ» ան-

¹³⁵ «Քրիսեան Շաւարշ. Դիմանկար», «Տուն», Ճրպկյլ, 1924, Հոկտ.-Նոյմ.- Դեկտ., թիւ 26-27-28, էջ 31:

ուանակարգով եւ միայն երկար, պարբերաբար տարուող աշխատանքի արդիւնքում են Ճըպէյլի տղաները յաջողութիւն գրանցում եւ յաղթանակը խորհրդանշող փոխանցիկ գորգ-դրօշը ձեռք բերում¹³⁶:

Ամսագրում պարբերաբար հանդիպում ենք տարբեր առողջապահական խորհուրդների, որոնք ընթերցողին բերում են այն մտքին, որ առողջութեան առաջին պայմանը մաքրութիւնն է, առողջութիւնը պարկեշտութեան վկայագիրն է եւ այլն¹³⁷:

Կարելի է նկատել, որ սկզբնական շրջանում աշակերտական ամսագրի խմբագրութիւնը դեռեւս թեմատիկ որոնումների մէջ էր՝ փորձում էին կողմնորոշուել, ինչ շեշտադրումներ անել, որն աւելի յստակ է դառնում աւելի ուշ գրուած համարներում:

Կարելութեով հոգեւոր կեանքը

Հոգեբանական տրաման, որն արտայայտուում էր ընկճուածութեան, կեանքի իմաստի կորստի, յուսահատութեան, անտարբերութեան տեսքով, երեխաները յաղթահարում են նաեւ որբանոցի հոգեւոր կեանքի միջոցով: Որբերը միշտ ունեցել են հոգեւոր դասաժամեր, քննարկել են աստուածաշնչեան թեմաներ ու քրիստոնէութեանն առնչուող հարցեր: Իհարկէ, որոշ տարբերութիւն-

¹³⁶ Յուշամատեն, էջ 294-295:

¹³⁷ «Առողջապահական խրատներ», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունիս, թիւ 34, էջ 29:

ներ ու տարածայնություններ եղել են առաքելական եւ բողոքական եկեղեցիների արարողակարգերի միջեւ, բայց դասելով որբերի յուշագրություններից ու ամսագրի յօդուածներից որբերը տարբերակել են վերջիններս: Ճաշից առաջ միշտ աղօթել են «Հայր Մեր»ը կամ «Փառք ու պատիւ Քեզ»ը: Նշենք, նաեւ, որ որբերն իրենք էին խոստովանում, որ միշտ չէ, որ որբանոցում բոլոր երգերը նոյն խանդավառութեամբ էին կատարում: Նրանց երգացանկի «Բամբ Որոտան», «Մայր Արաքսի», «Ի գէն հայեր, ի սուր», «Կոուեցէք տղերք» երգերը աւելի լիաթոք էին երգւում, իսկ այդ թափն ընկնում էր, դժգունում էր եւ այլակերպւում, երբ բողոքական քարոզչական բնոյթի երգեր էին երգում: Որբերը ճնշող մեծամասնութեամբ հայ ազգային եկեղեցու զաւակներն էին, հետեւաբար զարմանալի չէր, որ որբերը դժգոհում էին, երբ պարտադրւում էր աչքերը փակել ու գլուխները խոնարհել աղօթելու կամ երգելու ժամանակ, մինչդեռ նոյն հարկադրանքը չկար շարականներ երգելու պարագայում¹³⁸:

Քրիստոնէական թեմաներով աշակերտական մտորումների հանդիպում ենք գրեթէ բոլոր համայններում: Այս ուղղութիւնը նոյնպէս կարեւոր էր աշակերտների մօտ հանդուրժողականութիւն ձեւաւորելու համար: «Կիրակնօրեայ խորհրդածութիւն» խորագրի տակ կարդում ենք. «...մարդու բերանից ելածն է, որ մարդս կը սյդծէ

¹³⁸ Յուշամատեն, էջ 117:

... Մեր բերանը մեր հոգու մտածումին եւ զգացումին թալփմանն է»¹³⁹, ուստի խորհուրդ է տրուում այդ սկզբունքով առաջնորդուել:

Խրատական տողերը շարունակում են. «Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ հոգեկան սնունդով: Նպատակը միջոցը չ'արդարօցներ եւ պէտք է փառասէր չըլլալ այլ անձնուէր»¹⁴⁰ կամ «մարդ նաեւ պէտք կ'ունենայ շատ մը քաներու որ իր նկարագիրը կը կազմեն, ինչպէս պէտք ունի նիւթական սնունդի պէտք ունի նոյնպէս բարոյականութեան»¹⁴¹:

Ամսագրում կան բարոյական ու հոգեբանական թեմաներով յօդուածներ, որոնցից կարելի է առանձնացնել Ասատուր Արուշեանի «Խաչն է իր պարծանքը»¹⁴², Մարտիրոս Մարգիսեանի հեղինակած «Քրիստոսի կեանքը կառավարող սկզբունքները»¹⁴³, Վահան Աղաճանեանի, «Աղօթէ»¹⁴⁴ գրուածքները եւ այլն:

1923 թ. Յուլիսի համարում կարդում ենք Ա. Ներսէսեանի հեղինակած «Դժբախտութեան պատճառը» յօդո-

¹³⁹ Վ. Ա., «Կիրակնօրեայ խորհրդածութիւն», «Տուն», Ճըպէյ, 1922, Դեկտեմբեր թիւ 4, էջ 2:

¹⁴⁰ Նոյն տեղում:

¹⁴¹ Նոյն տեղում, էջ 3-4:

¹⁴² Արուշեան Ասատուր, «Խաչն է իմ պարծանքը», «Տուն», Ճըպէյ, 1922, Հոկտեմբեր, թիւ 2, էջ 16:

¹⁴³ Մարգիսեան Մարտիրոս, «Քրիստոսի կեանքը կառավարող սկզբունքները», «Տուն», Ճըպէյ, 1923, Յունիս, թիւ 10, էջ 16-17:

¹⁴⁴ Աղաճանեան Վահան, «Աղօթէ», «Տուն», Ճըպէյ, 1922, Դեկտեմբեր, թիւ 4, էջ 3:

ւածր, որտեղ նշում է, որ մարդիկ միշտ իրենց դժբախտութեան պատճառը ուրիշի մէջ են փնտռում, թէ ինչու Մատուած իրենց դժբախտ է թողել այս աշխարհի վրայ ու իրենց միլիոնատէր կամ խելացի մարդու գաւակ չի դարձրել: Հեղինակը եզրակացնում է, որ նման մտածումները վնասում են մարդու առողջութեանը եւ դրանով մարդն ինքն իր նկատմամբ մեղք է գործում եւ իր հասակակիցներին նա կոչ է անում. «Ո վ բարեկամ, բախտը քու մէջդ է եւ դուն քու բախտդ որոնողը: Երբեք ուրիշներու մէջ մի փնտռեր քու դժբախտութեանդ պատճառը, այլ ուղղէ՝ քու թերութիւններդ եւ յաղթէ՝ մոլութիւններդ կամ մէկ խօսքով տիրէ դուն քու վրայ»¹⁴⁵:

«Յարութեան տօն» յօդուածը նոյնպէս քրիստոնեա-հայրենասիրական ուղղուածութիւն ունի, որտեղ հեղինակ Հրանդ Լամպաճեանը, խօսելով Քրիստոսի Յարութեան տօնի խորհրդաբանութեան մասին, շարունակում է միտքը եւ գրում. «...հորիզոններուն խորքերէն մեր անգին նահատակները արդար վրէժի պարտականութիւններով կը ծանրաբեռնեն մեզ: Անոնց կորուստովն մեր ազգը ողբալի համրութեան մատնուեցաւ ... Բայց անոնք կ'ապրին եւ պիտի ապրին ...»¹⁴⁶:

Հոգեբանական տեսանկիւնից որբերի՝ նման թե-

¹⁴⁵ Ներսէսեան Ա., «Դժբախտութեան պատճառը», «Տուն», Ճըպլյ, 1923, Յուլիս, թիւ 11, էջ 2:

¹⁴⁶ Լամպաճեան Հրանդ, «Յարութեան տօն», «Տուն», Ճըպլյ, 1924, Ապրիլ, թիւ 20, էջ 25:

մաներին անդրադառնալը նոյնպես օրինաչափ է, քանի որ Ցեղասպանության հոգեցնցումը որքանոցի սասները փարձել են յաղթահարել կրօնի, եկեղեցու, հաւատի միջոցով¹⁷:

Այսպիսով, նմանատիպ քրիստոնէական, կրօնական ուղղութեան յօդուածները պետք է դիտարկել որբերի տրաման յաղթահարելու ձեւ եւ պետք է հաշուի առնել այն հանգամանքը, որ ամսագրի նիւթերը ոչ միայն տուեալ երեխայի յոյզերն էին ու պաշտպանական մեխանիզմները, այլ միւս որբերի համար դրանք ուսուցողական էին, քանի որ հեղինակել էին իրենց հասակակիցները, եւ նմանատիպ յօդուածներում տեղ գտած խորհուրդների ընկալումը կարող էր օրինակելի լինել որքանոցի երեխաների մեծ մասի համար, քանի որ ամսագրի ընթերցումն ընդունուած երեւոյթ էր որքանոցում:

Պահպանելով հայկական ինքնութիւնը

Ամսագրի գերակշռող համարներում Խմբական ջաղափարը հայկականութեան պահպանումն էր, մայրենի լեզուի, մշակոյթի արժեւորումը: Այս առումով ամսագիրը յատուկ ուշադրութիւն էր դարձնում մեծն հայ տուցիչներին եւ հոգեւոր հայրերին: Տարբեր դրուագներով ներկայացուած են հայ գրերի գիւտի հեղինակ Մեսրոպ Մաշտոցի, կաթողիկոս Գրիգոր Լուսաւորչի, Սահակ

¹⁷ Գարաջաշեան Մելինէ, Ցեղասպանութեան հոգեցնցումն ու ազգային ինքնութիւնը (Երեւան, Դալլ, 2006), էջ 91:

Պարթևի գործունեությունը, տրվում գնահատականներ:

Ստեփան Քեչիշեանի «Մեծ գիտը» յօդուածում, որտեղ մանրամասն անդրադարձ կայ հայ գրերի գիտին, կարդում ենք. «Հայ ժողովուրդը գտած է այն ճշգրիտ հայելին որմէ պիտի ցոլանար իր սզնիւ զգացումներուն ինքնայատուկ յղացումները»¹⁴⁸, որին նոյն համարում յաջորդում է «Հայ գրականութիւնը» յօդուածաշարի հերթական յօդուածը, որտեղ կրկին ընդգծելով գրերի գիտի կարեւորութիւնը¹⁴⁹: Յօդուածագիր Հ. Մարգարեանը ներկայացնում է հայոց լեզուի անցած ողջ ճանապարհը գրերի գիտից, Ոսկեդարից նոր ժամանակներ¹⁵⁰ եւ եզրափակում է յօդուածը. «Աւա դ, Մեծ Եղեռնը հայ գրականութենէն շատ լաւ առաջնորդներ խլեց, բայց հայ լեզուն, հայ միտքը, աւելի քան երբեք յոյսով կը նայի ապագային»¹⁵¹:

Նշենք, որ գրերի գիտի, քրիստոնէութեան ընդունման մասին յօդուածները հարուստ տեղեկատուական նիւթ ունեն, հայրենասիրական ոգով: Անգամ որոշ նմանատիպ յօդուածներ կարող են նաեւ դասագրքային ձեռնարկի յաջող յօդուածներ դառնալ: Բացի բուն քրիստոնէութեանը վերաբերող յօդուածներից, ամսագրի տար-

¹⁴⁸ Քեչիշեան Ստեփան. «Մեծ գիտը», «Տուն», Ճըպէյլ 1924, Յունիս թիւ 22, էջ 5:

¹⁴⁹ Տէր Յակոբեան Համբարձում, Հայ լեզուն, «Տուն», Ճըպէյլ, 1924, Յունիս, թիւ 22, էջ 25:

¹⁵⁰ Մարգարեան Հ., «Հայոց լեզու», «Տուն», Ճըպէյլ, 1924, Յունիս, թիւ 22, էջ 26-30:

¹⁵¹ Նոյն տեղում, էջ 30:

բեր համարներում անդրադարձ կայ նաեւ. Հայաստանում քրիստոնէութեան ընդունմանը, նրա տարածողներին, ինչպէս նաեւ մանրամասն ներկայացում են պատմական իրողութիւնները, ինչպէս նաեւ հաւատի համար պայքարող Վարդանանց պատերազմին¹⁵²:

Հայ մեծերի, գրականութեան, հայոց պատմութեան վերաբերեալ ամսագրում տեղ գտած յօդուածների հիմնական գաղափարախօսութիւնը կարելի է ամփոփել հետեւեալ պարբերութեամբ. «Անտեսել նիւթականը, պայքարիլ գաղափարի համար, ասոնք տեսլապաշտ ժողովորդի մը մեծագոյն յատկանիշներէն են, բայց եւ այնպէս ազգի մը, ժողովուրդի մը եւ համայնքի մը գոյութեան յարատեւ պահպանման մեծագոյն ազդակներն են»¹⁵³:

Ինչ վերաբերում է դպրութեանն ու քրիստոնէութեանը, ապա յօդուածագիր Զաքարի կարծիքով, վերջիններս այն գոյգ ազդակներն են, որ պետականութեան անկումից յետոյ սատար եղան հայ ժողովրդի յարատեւ գոյութեանը, նրանք պահպանեցին եւ զարգացրին մեր ազգային առանձնայատկութիւնները եւ ձիրքերը¹⁵⁴:

Հարկ է նշել, որ հայ գրականութեան մեծերի մասին յօդուածներով, ամսագիրն իր որակի մեջ անգերազանցելի է: Այս ուղղութեամբ տարուող աշխատանքների

¹⁵² Զաքար, «Վարդանանք. 15 դարերու մեջէն», «Տուն», Ճրպէլ, 1923, Փետրուար, թիւ 6, էջ 2:

¹⁵³ Նոյն տեղում:

¹⁵⁴ Նոյն տեղում, էջ 2-3:

մէջ նկատուում է նաեւ որբանոցում գործող «Գրական ակումբ»ի դերը, որը որոշակի ազդեցութիւն է ունեցել յօդուածների հարուստ բովանդակութեան վրայ: Նշենք, որ ամսագիրն անդրադարձել է հայ ազգի պատմութեան յայտնի գրողներին ու բանաստեղծներին, հայ գրականութեան դարաշրջաններին, անգամ սփիւոքում հիմնուած հայկական կեդրոնների գործունեութեանը:

Յատուկ անդրադարձ կայ նաեւ ցեղասպանութեան զոհ հայ մտաւորականներին: Պէտք է նշել, որ վերջիններս ժամանակակից գրողներ էին, բայց անգամ նրանց գործունեութեան մասին որբերն ունեին պատկերացումներ ու ծանօթ էին նրանց ստեղծագործութիւններին: Օրինակ՝ Սարգիս Փիլիկեանի բանաստեղծութիւնը նուիրուած բանաստեղծ Սիամանթոյին կամ ամսագրի էջերում զետեղուած է Գրիգոր Զոհրապի նկարը՝ մակագրուած. «Հայ գրականութեան առաջին վարպետը իրապաշտ, գրականութեան եւ իշխանը նորավեպի արուեստին, եւ միանգամայն իր պետական բարձր դիրքին շնորհիւ եղած է թրքահայերու միակ պաշտպանն ու տէրը»¹⁵⁵, Ռուբէն Զարդարեանի նկարը՝ մակագրուած «Հայ գրական շքեղ փաղանգին սմենէն կարկառուն դէմքերէն մէկը»¹⁵⁶:

«Եօթը նահատակներուն» յօդուածի հեղինակը, դի-

¹⁵⁵ Մանուկեան Ժիրայր, «Եօթը նահատակներուն», «Տուն», Ճրպէյլ, 1924, Ապրիլ, թիւ 20, էջ 7:

¹⁵⁶ Նոյն տեղում, էջ 4:

մելով ՄձԵ Եղեռնի եօթ նահատակներին, որոնց անունները չի նշում, գրում է. «Ո՛վ դուք հայկական ազատության հսկայ հաւատքը դարբնող վեհ իտեալի աստուածացած եօթը կոթողներ ... Դուք մեռաք ազատութեան լայն ճամբուն վրայ, մինչ ձեր մահը միշտ որոնելով բարձր նպատակը»¹⁵⁷: Վերջում, խօսքն ուղղելով Միամանթոյին, գրում է. «Եկո՛ւր եւ տ'նս, քեզի հետ եւ Գողգոթայի գագաթը բարձրացուցին թշուառ ազգդ, եկո՛ւր անգամ մըն ալ օրհնէ ցեղիդ թափուած արիւնը ... եկուր անգամ մըն ալ զարկ արդարութեան դռները ...»¹⁵⁸:

Որբանոցային ամսագրում հայկական ինքնութեան, ազգային արժէքների պսիւպանման, հայրենիքի վերադարձի մասին նոյնպէս բազմաթիւ աշակերտական մտորումներ կան, որի հետաքրքիր եւ դիպուկ ձեւակերպումը տուել է Հ. Եափուճեանը. «Հայը հաստատուն է թէ իր լեզուին, թէ իր գրականութեանը եւ թէ կրօնքին վրայ, ո՛չ բաղդը, ո՛չ սուրը, եւ ո՛չ ալ հուրը կրնայ գիրենք փոխել: ... Մենք որք եղած ենք այս կրօնքին ու գրականութեան համար, հաւատքին համար»¹⁵⁹:

Հայութեան պահպանմանն ուղերձ է յղում Ճըպէլլի որբանոցի սանը 16 տարին լրացրած ու որբանոցային կեանքին հրաժեշտ տուող իր ընկերներին. «Անէ՛ծք,

¹⁵⁷ Նոյն տեղում, էջ 8:

¹⁵⁸ Նոյն տեղում, էջ 10:

¹⁵⁹ Եափուճեան Հ., «Բաղդը», «Տուն», Ճըպէլլի, 1923, Սեպտ.-Հոկտ., թիւ 13-14, էջ 21-22:

անէ՛ծք, եւ վայ անոր, այն հայուն, որ կը մոռնայ իր տա-
ռապեալ ցեղը եւ հայրենիքը, ուր իր պապերուն աճիւննե-
րը ցիրուցան միայն իրենցմով կ'սփոփուի (կը սփոփուի):
Հազար օրհներգ ու համբոյր ... այն հայուն, որ հայ կ'ապ-
րի ու հայ կը մեռնի մայր երկրի սրտին հանգստաւէտ
խորքը»¹⁶⁰:

Նշենք, որ բազմաթիւ են բանաստեղծութիւնները
հայրենի բնակավայրի, հայրական օճախի, խաղաղ
կեանքի, ծնողական սիրոյ վերաբերեալ: Բայց դրան զու-
գահեռ մշտապէս առկայ է հայրենիք վերադառնալու,
Մայր Հայաստանի, Արարատ լեռան մասին բանաստեղ-
ծութիւններն ու պատմութիւնները, որտեղ մշտապէս
նկատելի է համեմատական գիծը Մայր Հայրենիքի եւ
սասների ճակատագրերի միջեւ:

Որբերն առանձնայատուկ ձեւով են բացատրում
սէրն առ հայրենիք. «հայրենիք ունենալ կ'ուզենք ...
որպէսզի ազատ կեանք մը վայելենք թէ զիտութեան ու-
ժով, թէ ալ ֆիզիքապէս զօրանանք: *Հայրենաբաղձներ*
ենք, որովհետեւ վեց հարիւր տարիներէ ի վեր բռնակալ-
ներու եւ անգութներուն կողմանէ հալածուելով եւ արքո-
րուելով զուրկ մնացած ենք մեր հայրենիքէն»¹⁶¹:

1924-1925 թթ. համարներում նկատում ենք, որ որ-

¹⁶⁰ Արիստակէսեան Գրիգոր, «Երթաք բարով», «Տուն», Ճըպէլ, 1924, Սայրիլ, թիւ 20, էջ 18-19:

¹⁶¹ Քէչէճեան Յովհաննէս, «Ինչո՞ւ համար հայրենիք ունենալ կ'ու-
զենք», «Տուն», 1923, Օգոստոս, թիւ 12, էջ 3-4:

բերը հետամուտ էին լինում նաեւ ընթացող քաղաքական դեպքերին՝ 1918 թ. Հայաստանի Հանրապետութեան ստեղծում, հայ-թուրքական պատերազմ: Նրանք տեղեակ էին նաեւ միջազգային ատեաններում ընթացող բանակցութիւններին¹⁶²:

Հայ ազգային գործիչների, հոգեւոր այրերի այցելութիւնները նոյնպէս կարեւոր էին որբերի հայեցի դաստիարակման համար: Նման այցելութիւնների մասին տեղեկանում ենք ամսագրի «Ներքին կեանք» բաժնից կամ յօդուածներից: Յիշարժան է եղել հայ յայտնի գրող, հրապարակախօս, ցեղասպանութիւնը վերապրած Երուանդ Օտեանի այցը, ով ինչպէս նշում է «խիստ կրթիչ նիւթի շուրջ բանախօսեց լսարանի մէջ»¹⁶³:

1924 թ. Սեպտեմբերի 26-ին որբանոց է այցելել Հայաստանի Հանրապետութեան լուսաւորութեան նախկին նախարար Նիկոլ Աղբալեանը: Նա աշակերտների ու պաշտօնեաների ներկայութեամբ «կուռ եւ շինիչ» բանախօսութեամբ ոգեւորել է ներկաներին¹⁶⁴:

Նշենք նաեւ, որ Պէյրութում լոյս տեսնող «Փիւնիկ» թերթի խմբագրապետերը՝ Արշակ Յովհաննիսեանը, Խոսրով Թիւրինճևանը նոյնպէս այցելել են որբանոց եւ բանախօսել: Բանախօսներն իրենց հայրենասիրական

¹⁶² Իսիբեան Յակոբ, «Յուսախար ժողովուրդը», «Տուն», Ճըպէյլ, 1924, Օգոստոս, թիւ 24, էջ 11-12:

¹⁶³ «Այցելութիւններ», «Տուն», Ճըպէյլ, 1924, Մարտ, թիւ 19, էջ 37:

¹⁶⁴ «Ներքին լուրեր», «Տուն», Ճըպէյլ, 1924, Սեպտեմբեր, թիւ 25, էջ 56:

զգացումներով եւ հռետորական կարողութիւններով մեծ ոգեւորութիւն են պատճառել երեխաներին»¹⁶⁵ խօսելով «օգտակար եւ կրթիչ նիւթերու շուրջ»¹⁶⁶։ Որբանոցի ճակատագրին պարբերաբար հետամուտ է եղել նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան կաթողիկոսը, ով մի քանի անգամ տարբեր միջոցառումներին մասնակցելու կապակցութեամբ այցելել է որբանոց։

1924 թ. Սեպտեմբերի 15-ին Սահակ Կաթողիկոսը նամակ է ուղղել որբանոցի ամսագրին՝ այն վերնագրելով՝ «Սիրելի Հարտարապետներ Աշակերտական «Տուն»ի Ճիպէլի Ամերիկեան որբանոցին», որտեղ նա նշել է, որ աշակերտներն էլ նման են Հարտարապետների ու մառախլապատ ժամանակներում են սկսել «Տուն»ի վերսկսեցման աշխատանքները. «... անվիատ շարունակեցէք շինութիւնը, այսօր ալ, վաղն ալ պէտք ունի հայ Տուներու։ Հայրենի հողի վրայ շինելը աւելի դիրին ու ապահով է, որովհետեւ հայի յատկութիւնը, ուժը, տարողութիւնը եւ տոկունութիւնը ծանօթ են, իսկ օտար հողը անծանօթ ըլլալուն մանրակրկիտ ուսումնասիրութեան պէտք կայ։ Քարը քարի վրայ դնելով գործը չի վերջանար, բարոյական տան մը շինութեան գլխաւոր ատաղձն է լիզուի, գաղափարի, զգացման եւ սկզբունքի համերաշխու։

¹⁶⁵ «Լերքին լուրեր», «Տուն», 1924, Ճըպէլ, Յուլիս, թիւ 23, էջ 68։

¹⁶⁶ Նոյն տեղում, էջ 69։

թինը»¹⁶⁷: Վերջում նա պատգամ է ուղղում աշակերտերին. «Աշխատեցե՛ք լաւ Հայեր ըլլալ»¹⁶⁸:

Յաջորդ համարում կարդում ենք Սահակ կաթողիկոսի միւս նամակը՝ ուղղուած «Հայաստանի աւերակ տուները շինելու պատրաստուող սիրելի ճարտարապետներ Պիպլոսի որբանոցին», Կաթողիկոսն իր խօսքն աւարտում է օրհնանք-կոչով. «Ապրեցե՛ք մեր հայրենիքի կենդանի հաւատով, Ապագան Ձերն է»¹⁶⁹:

Հայ եկեղեցու հոգեւոր հովիւները հետամուտ էին լինում որբանոցում տիրող իրավիճակին, մասնակցում էին տարբեր միջոցառումների, կազմակերպում հանդիպումներ, բանախօսութիւններ «Ինչպէս պէտք է հայ ապրիլ» եւ նման այլ թեմաներով, որոնք ուղղուած էին հայապահպան արաքելութեանը¹⁷⁰: Որբանոցում հայկականութեան պահպանման վկայութիւններից է նաեւ այն փաստը, որ նշել են անկախութեան օրը՝ Մայիսի 28-ը: Ամսագրից տեղեկանում ենք, որ անգամ հրավառութիւն են կազմակերպել որբանոցում: «Ձօն Մայիսի 28-ի անկախութեան դարբիններուն» յօդուածը խօսում է անկախ

¹⁶⁷ Աշակերտական «Տուն»ի Ճիպլիյի Ամբիկեան որբանոցին, «Տուն», Ճըպլիյ, 1924, Մեպտեմբեր, թիւ 25, էջ 4-5:

¹⁶⁸ Նոյն տեղում:

¹⁶⁹ Սահակ Կաթողիկոս, «Հայաստանի աւերակ տուները շինելու պատրաստող սիրելի ճարտարապետներ Պիպլոսի որբանոցին», «Տուն», Ճըպլիյ, 1924, Հոկտ.-Նոյմ.-Դեկտ, թիւ 26-27-28, էջ 3:

¹⁷⁰ «Տ. Դիոնիս Ա. Քինյ. Տրեգեան», «Տուն», Ճըպլիյ, 1924, Հոկտ.-Նոյմ.-Դեկտ, թիւ 26-27-28, էջ 62:

Հայաստանի վերակերտման մասին¹⁷¹:

Վերապրելով և վերյիշելով ցեղասպանությունը

Վերապրել ու վերյիշել անցեալը. սա թերևս որբերի ամենացաւոտ կողմն էր: Նշենք, որ ցեղասպանության, կոտորածների, գաղթի ճանապարհի մասին յօդուածներն ամսագրում աւելի քիչ են. այս հանգամանքը, միգուցէ, բնական է՝ հաշուի առնելով, որ որբերը չէին կարողանում խօսել իրենց տառապանքների մասին կամ, ամէն դէպքում, փորձում էին ամսագիրն աւելի դրական ու յուսադրող յօդուածներով ներկայացնել: Բայցեւայնպէս, ինչքան էլ նրանց ցանկութիւնը մեծ լինէր ու ուսուցիչների կողմից միջամտութիւնն այդ ուղղորդմամբ տարուէր, միեւնոյնն է՝ տխրութիւնը, կարօտը շօշափելիօրէն զգացւում են ամսագրի էջերում. թէկուզ բանաստեղծութեան մէկ արտայայտութիւն՝ «Մոռնա՛նք»¹⁷² կամ հայրենի բնակավայրի մի դրուագի նկարագրութիւն, որոնք բաւականին շատ են ամսագրում, կամ էլ այն զգացողութիւնը, որ երեխաներ կան, ովքեր ծնողներ ունեն: Իր այդ ապրումներով է կիսւում Արամ Ա. ֆաբեանը, երբ որբանոցի նուագախմբի անդամների հետ մեկնում է Պէյրութ՝ միջոցաւան մասնակցելու համար: Պէյրութի Ազգային վարժա-

¹⁷¹ Ճըլճըլեան Գրիգոր, «Ձօն Մայիսի 28ի անկախութեան դարբիններուն», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունուար-Մայիս, թիւ 29-33, էջ 6:

¹⁷² Թազուրեան Շաւարշ, «Մոռնա՛նք», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունուար-Մայիս, թիւ 29-33, էջ 61-62:

րանի շէնքի մօտ, նա իր համար տարօրինակ, վաղուց չապրած զգացողութիւն է ունենում. «...ո՛հ, ինչ զարմանալի բան, հայրիկի ու մայրիկի սէր վայելող հայ տղաքներ կան ... ասոնք ինծի պէս որք չեն, ինչ ուրախութեամբ կը խայտան ...»¹⁷³:

«Իրիկուն» պատմուածքում կրկին տխուր յուշեր են, երբ հեղինակը գրում է, որ որբերը երեկոները, նստելով իրար դիմաց, պատմում էին իրենց կարմիր յուշերի մասին. «... մենք կը պատմենք մեր ուղիէն կրած մանկական զրկանքները ... Ու կը պատմենք, թէ ինչպէս հրէշ թուրքեր ըրին ծնողագուրկ հայ որբերը»¹⁷⁴:

Բաւականին ազդեցիկ է Ս. Մկրտիչեանի՝ «Ջուրի արժէքը» (Յիշողութիւն) պատումը՝ ցեղասպանութեան եւ գաղթի մասին: Նա նկարագրում է գաղթի ճանապարհի իրենց կրած դժուարութիւնները, երբ դժուար էր առանց ջրի քայլելը, երբ ընտանիքի հայրը մտատանջութիւնից չգիտէր՝ ինչ անել: Երկար փնտռտուքից յետոյ հայրն էլ իրենց հետ լաց է լինում: «Տեսնէիք թէ ինչպէս, իր պէխերուն մէջէն կաթիլ-կաթիլ արցունք կու գար»¹⁷⁵: Այդ պահին ինքնաբերաբար սկսում են ողջ ընտանիքով աղօթել: Առաջին անգամ երեխաները հօրն աղօթելիս են տես-

¹⁷³ Աֆարեան Արամ, «Դէպի Պէրու» «Տուն», Ճըպէյլ, Յուլիս, թիւ 23, էջ 57:

¹⁷⁴ «Իրիկուն», «Տուն», Ճըպէյլ, 1924, Հոկտեմբեր, 1922, թիւ 2, էջ 15:

¹⁷⁵ Մկրտիչեան Ս., «Ջուրի արժէքը» (Յիշողութիւն), «Տուն», Ճըպէյլ, 1922, Դեկտեմբեր, թիւ 2, էջ 16-17:

նում: Երեկոյեան կայծակ ամպրոպ է լինում ու անձրեւ սկսում: Յուշագիրը գրում է. «Մենք սկսանք լեցնել մեր ամանները, այնչափ օրերէ ի վեր երեսնիս ջուր չէր տե սեր լաւ մը լուացինք ու խմեցինք մինչեւ որ կշտացանք, սկսանք հրճուիլ: Եւ սկսանք փառաբանել մեր Աստուածը, որ մեզ անջուր չձգեց»¹⁷⁶:

Տեղասպանութեան տարիների ունեցած յուշերից եւ դրանց հետեւանքներին մասին խօսելիս ծնունդով կեսարացի Արամ Աֆարեանը, պատմում է իր անցած ճանապարհը, ծնողների կորուստը, Նահր Իպրահիմի որբանոցում յայտնուելը, որտեղ փորձում է համակերպուել իրողութեանը. «Նահր Իպրահիմի որբանոցին մէջ ես առաջին անգամ ճանչցայ իմ որբութիւնը, ճաշակեցի մեր գրականութեան սերը, եւ առաջին անգամ հոն էր, որ խարսխուեցաւ հայրենիքիս սերը»¹⁷⁷:

Աբրահամ Կանիմեանը, վերյիշելով գաղթի ժամանակ մօր մահը, ցաւով է արձանագրում իր երբեմն կոպիտ վերաբերմունքով մօրը ցաւեցնելու հանգամանքը եւ գրում. «Թող քու անկենդան մարմնիդ աճիւնները ու Եփրատի հոսանքներուն յանձնուած անքիժ արեանդ վճիտ կաթիլները դժբախտ ուղիիդ գալարուող սրտին ներում շնորհեն: Քու էութեանդ սուրբ յարգը եւ անկեղծ մայրաւ-

¹⁷⁶ Նոյն տեղում, էջ 17:

¹⁷⁷ Աֆարեան Արամ, «Իմ չենսագրականը», «Տուն», Ճըպէյլ, 1924. Սեպտեմբեր, թիւ 25, էջ 31:

կան գուրգուրանքը, հիմա նոր կը ճանչնամ»¹⁷⁸:

Պէտք է արձանագրել, որ որքանոցում ցեղասպանութեան զոհերի յիշատակման սպրիլքսանշորսեան միջոցառումներ, սգահանդէսներ նոյնպէս կազմակերպուել են: Արմէն Յակոբեանի «Յարգանքի խօսք մը» յօդուածը Ցեղասպանութեանն ականատես եղած փոքր սերնդի ունեցած տրաւմայի արտայայտութիւնն է, որտեղ կարդում ենք. «Ով իմ մանկական վշտալի սրտիս եւ խորունկ ցաւերուն թախծոտ թարգմաններ, յարգանք Ձեզ, ... Դուք ինքնակամօրէն զոհուեցաք, դուք զոհուեցաք, որովհետեւ ամբողջ հայութիւնը ազատուի ձեր թափած անմեղ արեան գինովը»¹⁷⁹:

1925 թ. Ապրիլին նոյնպէս անդրադարձ կայ Եղեռնի նահատակներին. «Յարգանք Նահատակներուն» յօդուածում նոյն հեղինակը՝ Արմէն Յակոբեանը գրում է, որ Մեծ պատերազմը բոլոր ազգերի տօների շարքում նոր տօն աւելացրեց՝ Նահատակաց կամ անձանօթ զինուորի տօն, հայ ժողովրդի համար էլ այդ եղաւ նահատակներին նուիրուած Ապրիլի 24-ը եւ շարունակելով գրում է. «Այսօր, ով մեր քաջարի ծնողներ ու եղբայրներ, ես կու գամ ոգեկոչելու Ձեր սրբազան յիշատակը: Դուք նահատակուեցաք Ձեր անսասան անխորտակելի հաւատքին, Ձեր

¹⁷⁸ Կանխմեան Աբրահամ, «Մօրս յիշատակին», «Տուն», Ճըպէյլ, 1923, Յուլիս, թիւ 11, էջ 7:

¹⁷⁹ Յակոբեան Արմէն, «Յարգանքի խօսք մը», «Տուն», Ճըպէյլ, 1924, Ապրիլ, թիւ 20, էջ 6:

ամենանուիրական գաղափարին փարուած ... Դուք, հայ նահատակներ ... Ռահվիրան ու Ջահակիրը եղաք ազատութեան գաղափարին, եւ Ձեր նահատակութեամբ աւելի սրբագործեցիք զայն: Յարգա նք Ձեր ծանօթ եւ անծանօթ շիրիմներուն: Յարգա նք Ձեր պաշտելի գաղափարին»¹⁸⁰:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ուղիղ անդրադարձ ցեղասպանութեանը, աքսորի ճանապարհին, ունեցած կորուստներին, ամսագրի համարներում աւելի քիչ ենք հանդիպում:

Կարեւորելով ազգային տօները, միջոցառումները

Ճըպէլլի որբանոցում աշակերտները հայոց պատմութեան, լեզուի, գրականութեան մասին յօդուածները գրում էին մեծ ոգեւորութեամբ՝ միաժամանակ չանտեսելով նաեւ համաշխարհային պատմութեան կարեւոր իրադարձութիւնները: Նրանք յօդուածներով անդրադարձել են նաեւ Ղրիմի/Արեւելեան պատերազմին, փորձել գնահատականներ տալ ֆրանսիական յեղափոխութեանը:

1924 թ. Յուլիսի համարում յօդուածները հիմնականում անդրադառնում են համաշխարհային պատմութեանը: Եւ պէտք է փաստել, որ աշակերտները գրում էին նաեւ անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, որը ցուցիչ էր, որ որբանոցում կրթական մակարդակը բաւականին բարձ է եղել:

¹⁸⁰ Նոյն տեղում:

Պէտք է նկատել, որ ամսագրի հեղինակները ԱՄՆ անկախութեան տօնի կապակցութեամբ գրել են “The Greatest Day of a Great Nation” եւ “July Fourth” յօդուածները: Ամսագրի հեղինակները չեն «նեղացրել» Լիբանանում մանղատը հաստատած ֆրանսիական կողմին եւ նոյն համարում զետեղուել են նաեւ Սիրիայում ֆրանսիական կոմիսար Վեյգանի նկարը, ֆրանսերէնով գրուած “La Syrie Nouvelle,” “La France” յօդուածները: «Երկու մեծ տօները»¹⁸¹ յօդուածում նշում է, որ Յուլիս ամսին աշխարհը տօնում է երկու մեծ տօն՝ ասպետական Ֆրանսիայի եւ Միացեալ Նահանգների անկախութեան տօները: Իրենք նոյնպէս այդ կապակցութեամբ որբանոցում միջոցառումներ են կազմակերպել¹⁸²:

Լաւատեսական մտքերով, ցանկութիւններով ու մաղթանքներով հարուստ են ամսագրի Ամանորեայ համարները: Նոր յոյսերով, շնորհաւորանքներով լի է 1923 թ. տարեմուտի համարը, երբ նշում են, որ Եղեռնի օրերը սկսել են թաղուել, նկատուում է «ապագայի տարտամ ճակատագիրն ու ազատութեան ջահակիրը»¹⁸³: Հեղինակը յիշատակել է նաեւ այն մարդկանց, ովքեր նահատակուել են՝ միաժամանակ յոյս յայտնելով. «Թող այսուհետեւ տա-

¹⁸¹ Մաճաբեան Հայկ, «Երկու մեծ տօները», «Տուն», Ճըպլէյ, 1924, Յուլիս, թիւ 23, էջ 44-45:

¹⁸² Մեղրունի Յովհաննէս, «Մեծ Յեղափոխութիւնը եւ Մենք», «Տուն», Ճըպլէյ, 1924, Յուլիս, թիւ 23, էջ 50:

¹⁸³ Մանթուրեան Մինաս, «Նոր Տարի», «Տուն», Ճըպլէյ, 1923, Յունուար, թիւ 5, էջ 5:

մուկ աչքերէն ցաւի դառն արտասուքի շիթերը սրբուին, թող ուրախութեան եւ ցնծութեան երգերը արձանագրուին»¹⁸⁴։ «Կաղանդ Պապուկը», «Յիսուս Մանուկը» բանաստեղծութիւնները, «Կաղանդ պապա», «Ծնունդի իրիկուն մը», «Հուրբա, Կաղանդ Պապա» պատմութիւններն ամանորեայ տրամադրութիւն են հաղորդում համարին։

Որբերին համախմբող, միասնական գաղափարի համար պայքարի ձեւերից էին որբանոցի տարեվերջեան դաշտահանդէսները։ Այն իրական հանդիսութիւն էր որբերի համար։ Այդ առթիւ նրանք շատ ոգեւորուած յօդուածներ գրում, ներկայացնում տարբեր մրցաշարերում առաջին տեղերը զբաղեցրած աշակերտների անուն, ազգանունները¹⁸⁵։ Նշենք, որ 1924 թ. Հոկտեմբերի 25-ի որբանոցի դաշտահանդէսին մասնակցել է Կիլիկիոյ վեհափառ Սահակ կաթողիկոսը, օտարերկրեայ եւ հայ շրջանակներից ներկայացուցիչներ։

Որբանոցում մշտապէս լինում էին զրական-երաժշտական հանդէսներ։ Յունիսի 25-ին տեղի ունեցած հանդէսին, որին նոյն օրն անդրադարձել է «Փիւնիկ»ը, անցել է տօնական զարդարուած սրահում, ազգային մթնոլորտում, միջոցառման աւարտին յանձնուել են աւարտական վկայականներ եւ ինչել ոգեւորիչ կոչեր. «Կեցցէ՛ մանուկ Հայաստանը եւ անոր վերջին Խլեակնե-

¹⁸⁴ Նոյն տեղում։

¹⁸⁵ «Որբանոցին Տաբեմուտի դաշտահանդէսը», «Տուն», Ճըպէյլ, 1924, Հոկտ.-Նոյմ.- Դեկտ., թիւ 26-27-28, էջ 58-59։

ըլ»:¹⁸⁶:

Ամսագրում հանդիպում ենք յօդուածների, որտեղ գնահատականի խօսքեր կան միսիոներների հայասիրական գործունեութեան վերաբերեալ. դանիացի միսիոներ՝ Քարեն Մարիա Պետերսէնին¹⁸⁷, դանիացի հայախօս օրիորդ Մարիա Եակոբսէնին¹⁸⁸: 1924 թ. Մարտի համարում անդրադարձ կայ որբանոցի տնօրէն Ռէ Թրէվիսի գրծունեութեանը: Նրա դիմանկարի տակ կարդում ենք, որ նա հինգ տարի եղել է որբանոցի տնօրէնը¹⁸⁹: Խօսքն ուղղելով տնօրէնին՝ Սարգիս Փիլիկեանը գրում է. «դու եկար ի լուր քարսիրտ աշխարհի հաղորդելու մարդկային անգոթութիւնները ... Դու հաւատարիմ սուրբ կոչումիդ... հայրի՛կ...»¹⁹⁰: Գառնիկ Բանեանը¹⁹¹ նոյնպէս անդրադարձել է Թրէվիսի մարդկային արժանիքներին ու

¹⁸⁶ Յակոբեան Արմէն, «Որբանոցիս ամսավերջի հանդեսը», «Տուն», Ճըպէյլ, 1924, Յունիս, թիւ 22, էջ 37-38:

¹⁸⁷ Սիւս Բիթիքսըն. դիմանկար եւ կից գրութիւն, «Տուն», Ճըպէյլ, 1924, Օգոստոս, թիւ 24, էջ 1:

¹⁸⁸ Միս Ճէքրպսըն. դիմանկար եւ կից գրութիւն, «Տուն», Ճըպէյլ, 1924, Օգոստոս, թիւ 24, էջ 2:

¹⁸⁹ Մըստըր Բէյ Թրէվիս. դիմանկար եւ կից գրութիւն, «Տուն», Ճըպէյլ, 1924, Մարտ, թիւ 19, էջ 3:

¹⁹⁰ Փիլիկեան Սարգիս, "Mr. Travis," «Տուն», Ճըպէյլ, 1924, Մարտ, թիւ 14 էջ 3:

¹⁹¹ Գառնիկ Բանեանը որբանոցային երկար ճանապարհ է անցել շուրջ երեքուկէս տարի մնալով Անթուրայի թուրքական որբանոցում. յետոյ տեղափոխուել է Այնթապ. իսկ Կիլիկիայի հայաթափումից յետոյ՝ Ճըպէյլ: Նա իր թուրքական որբանոցի յուշերը տպագրել է 1992 թ.: Եղել է գրող, խմբագիր եւ որբանոցի Յուշամատենի գլխաւոր խմբագիրներից:

նրա վերաբերմունքին հայ որբերի ու որբանոցային խնդիրները լուծելու համար¹⁹²: Թրեվիսի մասին *Յուշամատեն*-ում կարդում ենք, որ նրա հայակեղորն դիրքորոշում ունէր ու նախանձախնդրօրէն էր նայում որբանոցի կարգուկանոնին, կրթութեանն ու հաւատին: Նրան երբեմն բնորոշում են որպէս հայացած ամերիկացի: Հետաքրքրական է, որ Թալեաթ փաշայի սպանութեան լուրը որբանոց հասնելու օրը թոյլատրել է մեծ հայրենասիրական երթ անցկացնել որբանոցում: Նա անձամբ է հայկական եռագոյն դրօշը, իսկ մեծ որբերից մէկ ամերիկեան դրօշը բռնած առաջնորդել են որբերին, ովքեր ժամեր շարունակ ազգային-հայրենասիրական երգերով պտոյտներ են կատարել որբանոցի շուրջը¹⁹³:

Որբանոցում կազմակերպուած միջոցառումներից է եղել նաեւ Դեկտեմբերի 7-ի Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց կազմակերպութեան նախաձեռնած «Ոսկեղէն կանոն»ի ճաշկերոյթը¹⁹⁴: Վերջինիս հոգեւոր խորհրդի

¹⁹² Բանեան Գառնիկ, «Անկիւնաքար», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունուար-Մայիս, թիւ 29-33, էջ 8-9:

¹⁹³ Յուշամատեն, էջ 142:

¹⁹⁴ «Ոսկի կանոնի» կիրակի կազմակերպելու գաղափարը եղել է Ամերիկեան նպաստամատոյցի հոգաբարձուների խորհրդի աւոյում Չարլզ Վիքրիինը: Այն շատ կարճ ժամանակում դարձել է Նպաստամատոյցի ամենաարդիւնաւէտ նախաձեռնութիւններից մէկը: Ոսկի կանոնի կիրակին հիմնականում կազմակերպուում էր ճաշկերոյթի ձեւաչափով, երբ աշխարհի տարբեր քաղաքների լաւագոյն հիւրանոցների ամենամեծ ընդունելութիւնների սրահներում յայտնի մադիկ օգտուում էին որբանոցներում ընդունուած ճաշացուցակների

մասին կարդում ենք. «Ճաշասեղանին մասնակցող իւրաքանչիւր հիւր, տղոց հետ կողք կողքի նստած ճաշեց եւ սլահ մը ապրեցաւ այդ ճաշին խորհուրդը, որուն կենդանի յրինակն է նոյն ինքը որքը»¹⁹⁵: Միջոցառման շրջանակներում որբանոցի նուագախումբը մի քանի ազգային երգեր է նուագել, հիւրերը ճաշից յետոյ կտամաւոր նուէրներ են յանձնել: Ամսագրում կարդում ենք, որ մօտաւորապէս 110 սիրիական ոսկի է հաւաքուել¹⁹⁶:

Այսպիսով, Տուն ամսագրի միջոցով երեխաները իրենց հասակակիցների իրազեկում էին աշխարհում տեղի ունեցող իրադարձութիւնների, դէպքերի, միջոցառումների ու տօների մասին, ինչն անխօս կարելու էր յատկապէս արեւլի կրտսեր սերնդի համար:

Գնահատելով սեփական աշխատանքը

Իրենց կատարած գործի մասին իրական գնահատական են տուել հենց իրենք՝ խմբագրական անդամները. «Տուն-ը իր անցած շրջանին մէջ ընթերցասէր որբերու, սիրալիր ընդունելութեան արժանացած ըլլալով, աշխա-

այդ ընթացքում խրախուսում էր հանգանակութիւնների ու մարդասիրական նմանատիպ միջոցառումների մասնակցութիւնը: S. u Ch. V. Vickrey, "Golden Rule Sunday: Earthquakes and Orphans in Armenia; A Thanksgiving Season in America," *The American Review of Reviews* 74 (1926): 590-592:

¹⁹⁵ «Ոսկեղէն կանոնի ճաշը որբանոցիս մէջ», «Տուն», Ճրպէլ, 1924, Հոկտ.-Նոյմ.-Դեկտ., թիւ 26-27-28, էջ 61-62:

¹⁹⁶ Նոյն տեղում, էջ 62:

տած է ճշմարիտ թարգմանը ըլլալ մեր սրտի հատորներու իրական ապրումներուն եւ յոյսերուն: Տուն-ը աշխատած է պարզ հայելի մը ըլլալ, որուն մէջ որոշապէս կը տեսնուի մեր այս ապրող նոր սերունդին երազները՝ հանդէպ մեր հայրենական տունին: Մենք աշխատած ենք մեր թուղթէ Տուն-ին մէջ տեսնել ու գտնել մեր հայրենի բոյնը»¹⁹⁷:

Յակոբ Իտիրեանը գրում է, որ իրենք անթերի ու կատարեալ լինելու խնդիր չեն ունեցել եւ ամսագիրը գրուել է որբերի ուրոյն բարբառով եւ հարազատ զգացումներով¹⁹⁸: «Տուն»ի երկրորդ տարելիցի առթիւ գրում են. «Տուն-ը դարձած է անխտիր բոլորին սեփականութիւնը»¹⁹⁹:

Վահան Արծրունին գնահատում է ամսագրի անցած ճանապարհին ու ոլորտում գրանցած առաջադիմութիւնը: Նա երեխաներին դիմում է տնագուրկ թոչնիկներ անուանումով եւ նկատում. «Ձեր պարբերականից աւելի թախիժ եւ մելամաղձոտութիւն կը բուրէ: Իրաւ, դուք որբերու, վշտի մէջ էք մեծացել, որոնք ուժգին տպատրութիւններ են գործել ձեր մատաղ հոգիներու վրայ, բայց պէտք է արհամարհել տառապանքի ապարդիւն կսկիծ-

¹⁹⁷ Իտիրեան Յակոբ, «Մեր նպատակը», «Տուն», Ճըպէլ, 1924, Սեպտեմբեր, թիւ 25, էջ 6-7:

¹⁹⁸ Նոյն տեղում:

¹⁹⁹ Մաճարեան Հայկ, «Տուն»ի երկրորդ Տարելիցին առթիւ, «Տուն», Ճըպէլ, 1924, Սեպտեմբեր, թիւ 25, էջ 11:

ները եւ դէմքը դարձնել դէպի գուարթութեան ծաղկաւետ ուղին»²⁰⁰.

Այսպիսով, որբանոցը, հայրենի տունն ու Տունը կարծես միաձուլուած էին որբերի համար, այն ապահով միջավայր էր, չնայած «Յուշատետր» բաժնում 1925 թ. Փետրուարի 15-ին թուագրուած տողում կարդում ենք. «Մեր տունը պիտի պարպուի, տղաներու կէտը Սայտա եւ միւս կէտը Անթիլիաս պիտի երթան»²⁰¹: Արդէն Ապրիլի 7-ին Թրեվիսը մեկնում է Ամերիկա, իսկ նրան փոխարինում է Չարլզ Ֆաուլը:

1925 թ. Յունիսի 27-ին տեղի է ունեցել վերջին դաշտահանդէսը, հնչել են արաբերէն, ֆրանսերէն, անգլերէն բանաստեղծութիւններ նուագախմբի եւ երգչախմբի մասնակցութեամբ: Միջոցառման վերջում խօսել է նորանշանակ տնօրէն Չարլզ Ֆաուլը, որ գնահատել է արուած աշխատանքը, նշելով, որ դեռ երկու տարի առաջ Սիրիայում տասը հազար որբ կար, հիմա այդ թիւը չորս հազարի է իջել եւ յոյս յայտնել, որ աւելի պիտի իջնի²⁰²:

Չնայած որբանոցային ակտիւ կեանքին, որբանոցը չփակելու խնդրանքով Կիլիկիոյ կաթողիկոսի, Պատրիարքական փոխանորդի, Ազգային վարժարանի տնօրէ-

²⁰⁰ Արծրունի Վահան, «Տուն»ի բնակիչներուն», «Տուն», Ճըպէյլ, 1924, Սեպտեմբեր, թիւ 25, էջ 36-37:

²⁰ «Յուշատետր», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունուար-Մայիս, թիւ 29-33, էջ 35:

²⁰² Սարգիսեան Սուրէն Մ., «Որբանոցի ամենավերջին հանդէսը», «Տուն», Ճըպէյլ, 1925, Յունիս, թիւ 34, էջ 22-23:

նութեան, Կարմիր խաչի Չարլզ Ֆաուլին ուղղուած նամակ-խնդրանքներին, որբանոցը փակուում է²⁰³, դադարում է լոյս տեսնել նաեւ «Տուն» ամսագիրը:

Այսպիսով, Ճըպէյլի որբանոցի աշակերտական-որբանոցային «Տուն» ամսագիրը ցեղասպանութիւնը վերապրած որբերի ինքնագիտակցութեան, կեանքը վերարժեւորելու եւ դժուարութիւնները յաղթահարելու, վրէժխնդրութեան, կորուսեալ հայրենիքի ու պայքարի, եւ մի շարք այլ արժեքների ու գաղափարների արտայայտութիւնն էր:

Աշակերտական ամսագրի նիւթերն իրենց զգայական, հոգեբանական, վերլուծական կողմերով 13-16 տարեկան որբերի համար ունեն իւրայատուկ խորութիւն: Ամսագրի էջերում կենցաղային եւ երգիծական դրուագները սակաւաթիւ են, որոնք հիմնականում ներկայացուած են աւելի թեթեւ *Ձուարճալիք* բաժնում: Ամսագիրն ամբողջացնում է որբերի առօրեան, նրանց մտածելակերպն ու հոգեկերտուածքը: Այն իսկապէս ազգային վերակերտման կարելոր փորձ էր որբանոցի սաների համար, եւ պէտք է արձանագրել, որ ամսաթերթը՝ որպէս իրենց սերնդակիցների կողմից շարադրուած նիւթերի ժողովածու, անգամ կարող էր դառնալ դասագիրք այլ որբանոցներում ընթերցելու համար: Որբանոցային ամսա-

²⁰³ 1925 թ. որբերի թիւը նուազել էր՝ հասնելով 1000-ի, որոնցից 200-ը ազատ էին տեղաշարժման հարցում, 600-ը տեղափոխել են Սալտա, 200-ը՝ Նազարեթի եւ Անթիլիասի որբանոցներ:

գիրն իր որակի մէջ անմրցելի էր նաեւ գծանկարներով:

Բովանդակային վերլուծութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ որբերի մի մասն անգլիտակցօրէն պարփակուում էին, լռեցնում իրենց զգացմունքները, յուշերը, միւսը՝ այս կամ այն կերպ բացայայտում են դրանք իրենց առօրեայ յարաբերութիւններում: Աղէտից փրկուած երեխաների ուղեղն ու միտքը, անկարող լինելով ընկալելու եւ իմաստաւորելու ահաւոր պատահարների շարունակականութիւնը, ենթագիտակցօրէն արգելափակում էր զգացումներն ու յարմարում ծանր հոգեվիճակին²⁰⁴:

Հայոց ցեղասպանութիւնը վերապրած Ճըպէյլի որբանոցի սերունդը կարողացել է ինչ որ չափով յաղթահարել ցեղասպանութեան հոգեբանական հետեւանքներն ու դիմագրաւել ժամանակի մարտահրաւերներին: Ցեղասպանութեան հետեւանքով նրանք զրկուել են որակեալ կրթութիւն ստանալու հնարաւորութիւնից կամ իրենց կարողութիւնները լիովին դրսեւորելու միջոցներից, բայցեւայնպէս այս իրողութեանը զուգահեռ՝ որբանոցային սերունդը հնարաւորինս պահպանել է իր հայկական դիմագիծը եւ կարելորդերակատարում ունեցել նաեւ տարածաշրջանի կենսունակ հայ համայնքների վերաձեւաւորման գործում, եւ մանկութիւն չունեցող որբանոցային սերունդը կարողացել է կեանք տալ մանկութիւն ունեցող սերնդին:

²⁰⁴ Գեորգաշյան Մելինե, Ցեղասպանության հոգեցնցումն, էջ 72:

TUN PUPILS' MAGAZINE OF JBEIL ORPHANAGE: AN IMPETUS FOR THE PRESERVATION OF ARMENIANNES

Narine V. Margaryan

"Armenian Genocide Museum-Institute" foundation

PhD in History

Key words: Armenian Genocide, orphans, national conscience, Lebanon, the orphanage of Jbeil, pupils' magazine, orphanage press, education, national reconstruction.

The three-year issues of "Tun" [Home] pupils' magazine of the Near East Relief's Jbeil (Lebanon) orphanage have been researched and analyzed in this paper. The article has studied the papers written by orphans sometimes based on emotions, patriotism, and sometimes on realistic approaches. By analyzing and summarizing the papers this article aims at better understanding the nationalistic atmosphere in the orphanage, the feelings of the children and the steps undertaken to overcome the consequences and hardships of the Genocide. Summarizing the content of the papers published in 34 issues of the journal, the article concludes that Tun with its articles on literature and national feelings, pieces of evidence about homeland and the years of Genocide had a special meaning for the orphans. Through the articles the orphans of Jbeil made unique attempt of national reconstruction, which contributed to their efforts to overcome the trauma of Genocide. Among the papers were articles about the events of April 24 and dedicated to the memory of martyrs, articles on the Armenian language, literature and folklore, and the Armenian spiritual values sharing them with the younger generation through reading and reciting.

ՈՐԲԵՐՈՒ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ
«ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂ»
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՆ

Անի Ա. Ֆիշենկճեան
ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ
սլ.գ.թ

*Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանութիւն.
Մերձաւոր Արեւելքի Որբերու Միութիւն, Լիբանան
Ճըպէյլի որբանոց, որբանոցային մամուլ, կյանքութիւն,
ծաղիկներ, Թռչնոց բոյն.*

1924-ի թուականի առաջին ամիսներուն Ամերիկեան Նպաստամատոյցի որբանոցներէն արձակուած սան-սանուհիներու կողմէ կ'առաջադրուի միութիւն մը հիմնելու գաղափարը: Հայկական դիմագիծ ունեցող կազմակերպութիւնը կը կոչուի «Մերձաւոր Արեւելքի Որբերու Միութիւն Դաշնակցութիւն Ընկերակցութիւն Ընդհանուր Միութիւն». հետագային՝ «Մերձաւոր Արեւելքի Որբերու Ընկերակցութիւն»: 1925-ին կը մշակուի միութեան «Ծրագիր կանոնագիր»ը: Շուտով խորհրդատու մարմիններ կը ստեղծուին Պէյրութի, Դամասկոսի, Ջահլէի եւ Հալէպի մէջ: 1926-ին կը բացուին Միութեան Պէյրութի, Հալէպի եւ Ջահլէի ակումբները: Աւելի ուշ մասնաճիւղեր կը հիմնուին Ալեքսանտրէի, Անթիլիասի, Ղազիրի, Ճըպէյլի, Բայաքի, եւ Դամասկոսի մէջ:

Ընկերակցութեան նպատակն էր օգնել նիւթապէս, բարոյապէս եւ ֆիզիքապէս բոլոր այն որբ-որբուհներուն, որոնք Ամերիկեան նպաստամատոյցի որբանոցներէն դուրս գալով չէին կրցած անկախանալ: Բացի այդ, զործ հայթայթել անոնց, խրախուսել զանոնք եթէ յուսալքուած են, ձեռնտու ըլլալ հիւանդներուն, տկարներուն եւ թէ վատառողջ են: Նպաստամատոյց Ընկերակցութեան որդեգրած նպատակներէն էր նաեւ զօրացնել սան-սանուհիներու մտային, բարոյական եւ քաղաքացիական ըմբռնումները, առաջնորդել զանոնք դէպի նոր կեանք:

Ընկերակցութիւնը նպաստամատոյցի որբանոցներէն հանուած ինչպէս նաեւ դեռ որբանոց գտնուող երկսեռ որբերու միութիւնն էր²⁰⁵:

Յետցեղասպանութեան տարիներուն որբանոցի սերունդի նախաձեռնութեամբ սկիզբ առած էր որբանոցային մամուլը: Հայ որբերու միութիւնը կարիքը զգացած էր ունենալ անձնական Հայ մամուլ:

1924-ի Հոկտեմբերին Հալէպի մէջ հրատարակուած էր «Պայքար Կենաց»²⁰⁶ պարբերականը՝ միայն մէկ թիւ: Նոյն ժամանակամիջոցին Պէյրութի մէջ կը հրատարակուին «Աստղ»²⁰⁷ թղթիկները: 1925-ին Պէյրութի մէջ նոյն-

²⁰⁵ «Որբաշխարհի Աստղ» հանդէս Ամսօրեայ, Ա. տարի, թիւ 1, Մարտ 1925 Պէյրութ, էջ 11.

²⁰⁶ «Պայքար Կենաց» պարբերական Մերձաւոր Արեւելքի որբերու միութեան, Հալէպ, թիւ 1, Հոկտեմբեր 1924:

²⁰⁷ Հարպոյեան Կարպիս, Անթիլիասի որբանոցը ... եւ Աւստրալիա, <https://hairenikweekly.com/>

պէս կը սկսի լոյս տեսնել «Որբաշխարհի Աստղ» ամսագիրը. կը հրատարակուի մինչեւ 1931 թ., որ Մերձասօր Արեւելջի Եպիսկոպոսական կազմակերպութեան որբերի դաշնակցութեան /լիկայի/ համատեղ օրկանն էր՝ Պէյրութի մէջ լոյս կը տեսնէ «Ուլասիս»ը, ֆրանսայի մէջ՝ «Երկունք»ը, Յունաստանի մէջ՝ «Աստղ»ը եւ Գանատայի մէջ՝ «Արարատ»ը եւ այլն²⁰⁸: Այս թերթերուն եւ պարբերականներուն մէջ կը գրեն Հայ որբերէն շատերը, ինչպէս նաեւ հայ կղերականներ ու ազգայիններ:

«Որբաշխարհի Աստղ» ամսագիրը կը բովանդակէ զանազան նիւթեր. այնտեղ մենք կը հանդիպինք Միութեան հիմնադրման պատմութեան, ծրագիր-կանոնագիրին, ուրուագիծ հայ գրականութեան, թարգմանութիւններու, մասնաճիւղերու հիմնադրման պատմութեան եւ անոնց գործունէութեան մասին տեղեկութիւններու: Պարբերականը ունի նաեւ արաբերէն բաժին մը:

Սակայն ամէնէն ուշագրւան է պարբերականի համարներուն մէջ լոյս տեսած ծեղղագուրկ մանկահասակ եւ չափաւաս որբերու կողմէ արձանագրուած՝ երգերը, յուշերը, բանաստեղծութիւնները, որոնցմով սկիզբ կ'առնէ Հայ որբերուն հայաշունչ զարթնումի շրջանը:

Նկատի ունենալով Թոշնոց Բոյնի 100 ամեակի հիմնադրման նուիրուած միջոցառման ծրագիրն ու ժա-

²⁰⁸ Հարպոյեան Կարպիս, Անթիլիասի որբանոցը ... եւ Առսորալիս, <https://hairenikweekly.com/>

մանակը մենք փորձած ենք ուսումնասիրել «ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂ» պարբերականի 1925-1927 համարները, որոնցմով կառուցած ենք մեր յօդուածը:

Որբանոցներէն նոր ելլող որբերու միութեան թերթին «Որբաշխարհի Աստղ» 1925-1927 թթ. համարներու ուսումնասիրութեամբ շնթերցողը կը նկատէ ընդվզում, սակայն ոչ բացայայտ. նեղացուցիչ, ընդվզեցուցիչ «փափկանկատութեամբ» մը կարծես 1925-ի որբերը կը լռեն հիմնական դէպքին՝ աղէտին խոցը, ահաւոր ցնցումը: Որբերու սերունդին կարծես արգիլուած էր խօսիլ իր ապրած մահը:

«Մի՛ հեկեկար.
Հերիք է հերիք
Ալ չկայ կարիք.
Այդպէս մի տխրիր,
Տես շուրջդ ամէն իր
Ուրախ է յար»²⁰⁹:

Հեղինակը դիմելով որբերուն կ'ուզէ անոնք մոռնան անցեալը, «որովհետեւ ցաւն ու տառապանք. աստոնք չեն մերը, անցեալն է տէրը», եւ կը դիմէ որ նոր ոգի առնեն.

«Թող խանդն, աշխատանք
Քեզ տան մի նոր կեանք
Յոյց տուր թէ ունիս ոյժ

²⁰⁹ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 7, Սեպտեմբեր, 1925. Ղեկավար, էջ 6:

Հայ որբ մ'ես աշխոյժ.

Մի տնտնար»,

կը գրէ ան «Հայ Որբին»²¹⁰ խորագրով բանաստեղծութեան մէջ:

Ս. Զաւէն, Ղազիրի որբանոցէն իր «Երգ Ուրախութեան» բանաստեղծութեամբ իր հասակակիցներուն յուզումն ու յուսահատութիւնը փարատելով՝ կը գրէ.

«Զի յուզուի թող հոգւոյդ եթէր,

Երբ որոտան հուր կայծակներ.

Փոթորիկէն վերջ գիտե՞ս որքան

Անուշ շողեր կու գան:

Աչերդ ի վար երբ սահին լուռ,

Կայլակներ արցունքի տխուր,

Անոնց մէջն իսկ դեռ պահուած կան,

Ծիածաններ գարնան»²¹¹:

«Որբաշխարհի Աստղ» ամսագիրի մէջ միայն մէկ տեղ կը հանդիպինք անապատի մղձաւանջային ոգեկոչումին, ծնողներու մահուան վերստացումին,

«Էւ կ'երերան

Հողմատատան,

Հեւաապառ

Երգն երգելով

²¹⁰ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 7, Սեպտեմբեր, 1925. Պէյրութ, էջ 6:

²¹¹ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 7, Սեպտեմբեր, 1925. Պէյրութ, էջ 4:

Մահուան խոռով ընդերկար:

Ու հոգիս հեզ

Պատկերն ի տես

Այս դժնե,

Տառապագին

Ցառով մ'ուժգին

Կ'արտասուե՞»²¹²:

Նոյնպէս մէկ տեղ կը հանդիպինք սերունդի յետ որբանոցային հիւղաւանային թշուառութեան նկարագրութեան:

Համարներու մէջ կը հանդիպինք որբի մը կողմէ իր վրայ գուր իրաւիրող գոհի կեցուածքին. «Գթա՛, ով Տէր, ա՛լ բաւ լինեն մեզ համար այսքան ցաւեր» կը պաղատի Օրջանեանը: Նոյն այս ուրբն է, որ ուրիշ գրութեան մէջ, քսան տողնոց պարբերութեան մը վրայ պիտի գործածէ հետեւեալ որակականները՝ «դժբախտ, տկար, խեղճ, անգիտակից, անմեղ, հրեշտակային, միամիտ, հրեշտակատիպ, առանձին. անտէր, անպաշտպան» եւ այլ բառեր:

Ամսագիրի տարբեր համարներուն մէջ կան տողեր, ուր կ'արտայայտուի անլռելի եւ անասելի պոռթկում: Ընդվզո՞ւմ թէ սոսկական դառնութիւն է. օրինակ՝ Ղ. Նաճարեանի հետեւեալ քառաստորը՝ (Անշէջ կրակ).

« Իմ որբ սրտիս մէջ,

²¹² «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 9-10, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 1925. Պէյրութ, էջ 8 / «Աշունս Գիշեր» :

Հրաբուխ մը կայ.
Որ գիշեր ցորեկ,
Անդուլ կը մխալ...

Քանի արդարութիւն
Չըլլայ մարդոց մէջ ...
Այն միշտ պիտ մըխալ
Մինչեւ կեանքիս վերջ ...»²¹³:

* Շ. Թագուորեանի «Ատելի Շիթեր» խորագիրով ուտանաւորէն կը կարդանք հետեւեալ տողերը.

«Անծայր յոգնութեան, այնչաւի քրտինքի,
Արեան ու ցաւոտ անդարձ տարիներ ...
Այն ստրկութեան մէջ մաշող կեանքի,
Լոկ վկաներ են արցունքի շիթեր»:

Բանաստեղծութեան վերջին համարին մէջ հեղինակը կը ձգտի ապրիլ եւ հոգին՝ թռչնիկի պէս սլանալ,

«Ուր հոգու վայելք շատ է ու պէս պէս,
Ինչպէս անհամար գարնան ծաղիկներ»²¹⁴:

Արցունքի դեմ իր ատելութիւնը պոռացող Շ. Թագուորեանի վաւերական այս ընդվզումը, սակայն ուրիշի մը պարագային կեղծ կը հնչէ «Գարուն է եկեր» բանաստեղծութեան մէջ:

²¹³ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 9-10, Նոյեմբեր-Դեկտեմբեր, 1925, Պէյրութ, էջ 15:

²¹⁴ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, Բիւ 6, Օգոստոս, 1925, Պէյրութ, էջ 11:

«Մեր խորունկ վշտերը ցնդեր են արդեն,
Ալ կոյտ-կոյտ ամպեր չեն ծածկեր երկինք

Անցեալը խաբխուլ հիւղակ մ'է տմոյն,
Ներկան պալատ մ'է բլուրի գագաթին»²¹⁵:

Կորսնցնելով իր ողջ ընտանիքին անդամները եւ
յայտնուելով Ճըպէյլի որբանոցը. որբերէն մի ոմն իր
գրած «Նոր եւ հին» խորագիրով բանաստեղծութեան մէջ
կ'ուզէ ձերբագատիլ հիւսէն, անցեալէն. հինի ու նորի բա-
խումբը իր մէջ ծնունդ կու տայ.

«Նոր իդէեր, Նոր յոյսեր
Իմ հոգւոյս մէջ կը ծլին,
Հին տարտեր, հին վշտեր
Հետզհետէ կ'անհետին»²¹⁶:

Ղազիրի որբանոցէն «Որբուհի» ստորագրութեամբ
մի ոմն իր «Յուսոյ Աստղ» բանաստեղծութեան մէջ, որ
միաժամանակ երգի վերածուած է, Միասնութեան կոչ
կ'ուղղէ, եւ կ'ապաւինի «Որբերու հայր» բարին Աստուծոյ:
Կը կարդանք.

«Տեսէ ք «Յուսոյ Աստղը» պայծառ,
Յոյց կու տայ մեզ կեանքի պայքար,
Զոր մենք պիտի մղենք յար:

²¹⁵ «Որբաշխարհի Աստղ», Բ. տարի, թիւ 15, Մայիս, 1926, Պէյրութ, էջ 3:

²¹⁶ «Որբաշխարհի Աստղ», Բ. տարի, թիւ 11, Նոյեմբեր, 1926, Պէյրութ, էջ 8:

Մենք չունինք եւ ոչ մի պաշտպան,
Բացի կամքէն մեր միաբան,
Որով կ'ըլլանք յաղթական»²¹⁷:

Շարունակելով, խօսքի աւարտին ան կրկին կոչ
կ'ուղղէ.

«Օ՛ն, տարածենք մեր գաղափար
Ու ընթանանք միասնաբար,
Որպէս բանակ փրկարար
Մէկ նպատակ ընտրած միայն,
Աւելի բեղուն կեանքն է այն,
Ծառայենք ընդհանրութեան»²¹⁸:

Ղեպի արեւին, նոր կեանքի ձգտող այս տողերու
կողքին մենք արձակ գրութեանց մէջ կը հանդիպինք յու-
սահատութեան դրսեւորման: Հեղինակը «Յուսահատու-
թիւն» վերնագրած իր գրութեան մէջ ընթերցողը չի տա-
նիր խոր հիասթափութեան, որովհետեւ ըստ հեղինակի
«Յուսահատութիւնը ամէն կերպով դէպի մահ ու քայքա-
յում կ'առաջնորդէ», «իսկ յոյսը կսմբ կը ստեղծէ ու զօրա-
ւոր կամքը դէպի յաջողութիւն կը տանի»²¹⁹: Ապա անկախ
ապրելու եւ ճշմարիտ անհատ ու հայ ըլլալու երկու ճա-
նապարհի կ'ուրուագծէ.

1-Միանալ ու հետաքրքրուիլ ձեր բաղդակիցներու
կեանքով ու դէմ դնել երկաթէ կամքով բոլոր դժուարու-

²¹⁷ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 1, Յունուար, 1925, Պէյրութ, էջ 7:

²¹⁸ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 1, Յունուար, 1925, Պէյրութ, էջ 7-8:

²¹⁹ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 1, Յունուար, 1925, Պէյրութ, էջ 16:

թեանց.

2-կամ յուսահատիլ, թուլանալ ու կորսուիլ որովհետեւ յուսահատները չեն կրնար ապրիլ այս աշխարհի մէջ»²²⁰:

Նոյն թեման շօշափող Մարս ծածկանունով Ղազի-րի որբանոցէն որբ մը իր «Երգէ՛» խորագիրով բանաստեղծութեան մէջ կը գրէ.

«Իսկ թէ մի օր վարդին թերթեր

Ո՛ հ, տեսնես որ են փրթեր

Ու լռած է սոխակն ալ հոն

Վերջալոյսի լուռ պահուն,

Չըլլաս երբեք յուսակտուր.

Լուռ ցաւերու անձէատուր.

Նոր յոյսերով մկրտուած, դուն՝

Երգէ՛ երգը նոր օրերուն»²²¹:

Ամենէն հետաքրքրականը, սակայն, «Անթիլիասի Մերձաւոր Արեւելքի դաշնակցութեան ընկերակցութեան երգն է, որ կարելի էր ընկերակցութեան քայլերգը համարել, ուր բառերու հեղինակը կը ներկայացնէ ընկերակցութեան նպատակը, միասնութեան, միմիանց օգնելու կոչով հանդէս կու գայ, որովհետեւ ան հաւատացած է, որ կեանքի քաղցրութիւնը մեր սրտին մէջ երբ բոյն դնէ, ան ծնունդ կու տայ վեհագոյն գաղափարներու հանդէպ խեղճին, թշուառին, որոնց աչքերը միշտ օգնութեան կը

²²⁰ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 1, Յունուար, 1925, Պէյրութ, 10 էջ:

²²¹ «Որբաշխարհի Աստղ», Ա. տարի, թիւ 3, Մարտ, 1925, Պէյրութ, էջ 5:

յարին:

Արդարեւ, «Որբաշխարհի աստղը» հանդէսի 1927-ի Ա. համարի խմբագրականը յստակօրէն կը ներկայացնէ այն ցան ու տառապանքը, որով ապրած ու կ'ապրի հայ մանուկը, որ յորջորջուած է որբ կոչուելուն. « ... զուլումներու ու թշուառութեանց ծնունդ հայ որբերը արդէն իբրեւ ամէն տեսակ գրկանքներու պատճառած սրտի ու մարմնի ցնցումները իր վրայ կրած փորձառու տարր մը. ու վարժ ի գին ամէն զոհողութեանց իր նմաններու ու աւելի թշուառներուն օգնելու, Կովկասէն մինչեւ Սուրիա, Յունաստան, Ֆրանսա, ու ամէնուրեք, անշուշտ բացառութիւններ յարգելի են, ապագայ տոկուն, շրջահայեաց ու պարտականութեանց գիտակից տարրի մը գոյութեան հաւատալիքները կը ներշնչէ»²²²:

Եզրակացութիւն

Որբաշխարհի որբերու մեզի ձգած գրական գոհարները, որոնք անկախ լեզուական եւ շարահիւսական շեղումներէ, կ'սարտացոլան այդ թուականներու մեր որբացած սերունդի մտահորիզոնը, հոգեւոր դաստիարակութեան դրսևորումը, ծնողներու հետ հանդիպելու բաղձանքը եւ վերջապէս ապագային հայ մարդը կերտելու ճամբուն վրայ իրենց առաքելութիւնը:

²²² «Որբաշխարհի Աստղ», Բ. տարի, թիւ 23, Յունուար, 1927. Պէյրութ, 49 է

**EXPRESSION OF THE INNER WORLD OF
ORPHANS IN THE PAGES
OF "ORPHANS'S STAR" OFFICIAL NEWSPAPER**

Ani A. Fishenkjian
Institute of History of NAS RA
PhD in History

Key words: Armenian Genocide, Orphans Association of Middle East, Lebanon, the orphanage of (Byblos) Jbeil, orphanage press, education, parentless, Bird's Nest.

The article examines the 1925-1927 issues of the "Orphan World Star" magazine published by the initiative of the Middle East Orphans Union. The work will be distinguished by the content of works written by orphans, which reflect the emotions of the orphans of the post- Genocide region, the longing to meet their parents, deprivation of the homeland, patriotism, the consequences of the genocide and the steps to overcome difficulties.

Songs, memories and poems written by children and adult orphans published in "Orphan World Star" magazines, apart from anger, they also talk about a bright new beginning, the longevity of life, in a new environment, the birth of a new life, which marks the beginning of a new literary awakening by Armenian orphans.

Կարօ Տէրունեան
Ազատ հետազօտող
Լիբանան

*Բանալի բռեր՝ Մերձաւոր Արեւելքի նպաստա-
մատոյց, հայ, որբեր, դաշնակիցներ, ուժեր, ստաջին
Համաշխարհային պատերազմ, ճըպէյլ, Որբանոց, Օտար
կազմակերպութիւններ, Այնթապ, Կոստան Պանտիկեան:*

Ներածական

Առաջին աշխարհամարտի աւարտէն ետք, Այնթա-
պը, շրջակայ քաղաքներն ու գիւղերը գրաւուած էին
Դաշնակից Ֆրանսական եւ Բրիտանական բանակներուն
կողմէ: Օսմանեան կայսրութիւնը պարտուած էր, իսկ ցե-
ղասպանութենէն վերապրած եւ տեղահանուած Այն-
թապցի հայերը սկսած էին վերադառնալ իրենց հայրենի
քաղաքը, նոր կեանք մը սկսելու, Դաշնակից Բանակնե-
րու հովանիին տակ:

Այս ժամանակաշրջանին է նաեւ, որ հայ որբ երե-
խաներ հաւաքելու եւ զանոնք հայկական որբանոցներու
մէջ տեղաւորելու լայնածիր աշխատանք մը սկիզբ կ'առ-
նէ, յատկապէս Օսմանեան կայսրութեան այն տարածք-
ներուն մէջ, որ գրաւուած էին Դաշնակից ուժերուն կողմէ:
Ասոնք այն որբերն էին, որոնք եղեռնի տարիներուն առե-
ւանգուած էին կամ ամեն պաշտպանութենէ զուրկ թա-
փառական կեանք մը վարէին:

Այնթապ, այդ ժամանակներուն շրջակայ այլ քաղաքներու օրինակով, կը դառնայ հայ որբերու ապաստան տուող կարեւոր կեդրոն մը: 1919 թ.-էն սկսեալ, այստեղ կը սկսի գործել Որբախնամ Միութեան (կեդրոնը Եգիպտոս) որբանոցը: Նոյն տարին կը հիմնուի նաև Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց (Near East Relief NER) որբանոցը²²³ Այնթապի մէջ:

Սոյն յօդուածի նպատակն է անդրադարձ կատարել ոչ միայն Այնթապի Նիր Իսթ Բիլիֆի Որբանոցին, այլև խօսիլ Պէյրութի Ճըպէլի Ամերիկեան Որբանոցի ծնունդի մասին: Թեման արդիական է, որովհետեւ մեր կողմէ առաջին անգամ շրջանառութեան մէջ կը դրուի Կոստան Պանտիկեանի Յուշերը²²⁴ Նիր Իսթ Բիլիֆի Ճըպէլի Որբանոցի վերաբերեալ: Մեր ուսումնասիրութեան համար բացի Պանտիկեանի յուշերէն օգտուած ենք նաև թեմային վերաբերող առկայ գրականութենէն²²⁵:

²²³ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոյց (1915-1930) Մարդասիրական կազմակերպութիւն:

²²⁴ Յուշեր Կոստան Պանտիկեանի, անտիպ, Կարօ Տէրունեան հաւաքածոյ, 45 էջ:

²²⁵ Տէր Պետրոսեան Ղեւոնդ, Որբին գիրքը, 118 էջ, Տպարան Ազատ, Պէյրութ 1932: Յուշամատեան Ճիպէլի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, Հրատարակութիւն նախկին սաներու, Տպարան Համագգային, 324 էջ, Պէյրութ 1969: Յուշամատեան Կայքէջ, <https://www.houshamadyan.org/>: Տես նաև Yates County History Center (Ռէյ Փ Թրէվիսի (Ray P. Travis), որ Այնթապ գտնուած է 1919-1920 տարիներուն: Սոյն անձին անձնական բոլոր թուղթերը հետազային տեղ կը գտնեն Նիւ Եորք նահանգի մէջ գտնուող Yates County History Center-ի մէջ:

1. «Նիր Իսթ Բիլիֆի» որբանոցը Այնթապի մեջ

1919 թ.-ի աշնան, Ամերիկացի Մր. Բեյ Փ. Թրեվիս²²⁶, որ Ա. աշխարհամարտին կամաւոր ծառայած էր ֆրանսական բանակին, առաջիններէն էր, որ պատասխաներ էր Նիր Իսթ Բիլիֆի Ամերիկայի Կեդրոնի կոչին²²⁷: Ձեռնարկեր էր որբահաւաքման գործին, քանի մը հարիւր որբերով, կարաւան կազմեր, փոխադրեր էր եւ բացեր էր իր որբանոցը Այնթապի մէջ. ասոնց մէջ կային նաեւ Լիբանանի Այնթուրայի որբանոցէն փոխադրուած ուրբեր: Որբերէն մէկ քանին կը տեղաւորուի թրքական թաղամասի՝ Միլլէթ իսանի մէջ եւ միւս մասն ալ Ալի Պէյի տունը: Այդ ատեն էր, որ Անգլիական ուժերը կը հեռանային եւ ֆրանսական ուժերը կը հաստատուէին Այնթապի մէջ: Այնթապի NER-ի որբերուն ներկայութիւնը երկար չի տեւեր: 1920 թ. առաջին ամիսներուն թրքական ազգայնական զօրքերը կը յարձակին Կիլիկիոյ եւ անոր արեւելքը գտնուող ֆրանսական գրաւեալ բանակներուն դէմ: Առճակատման ընթացքին, այս տարածքներու մէջ ապրող թուրքեր եւս կ'ապստամբին ֆրանսական բանակին դէմ: Թուրք ազգայնական ուժերը Յունուարէն մինչեւ Մայիս

²²⁶ Ռեյ Փ. Թրեվիս, ծնած է Նիւ Եորք նահանգին մէջ, 9 Օգոստոս 1889-ին: Նախկին ամերիկեան բանակի կամաւոր, միսիոնարական մարդասիրական կազմակերպութիւններու անդամ: Հիմնադիրներէն Այնթապի, վերջը Ճըպէյի Նիր Իսթ Բիլիֆի Ամերիկեան Որբանոցի:

²²⁷ Կոչ Նիր Իսթ Բիլիֆի կողմէ ամերիկացի եւ օտար հասարակութեան մաս կազմելու մարդասիրական լայնածիր աշխատանքին, փրկելու Հայոց ցեղասպանութենէն ճողոպրած բեկորները:

երկարող ժամանակահատուածին կը յաջողին պաշարել շարք մը քաղաքներ, ինչպէս՝ Մարաշ, Պոզանթի, Հաճըն, Միս, Էքպէս, Ուրֆա եւ Այնթապ: Կարգ մը վայրերու մէջ, մանաւանդ Մարաշի, թուրքերու ապստամբութեան օրերուն տեղի կ'ունենան հակահայ ջարդեր: Մարաշի մէջ Յունուարի վերջը բռնկած ապստամբութենէն ետք կը գոհուին քանի մը հազար հայեր:

2. Այնթապի անկայուն վիճակը

Այնթապի մէջ տիրող իրավիճակը առաւել մտահոգիչ կը դառնար: Այդ պահուն էր, որ Րէյ Փ. Թրեվիս առաւօտ կանուխ իր որբերը հաւաքած թրքական թաղամասերէն հայկական թաղամաս կ'անցնի՝ խոնուած թուրք բազմութիւններու թունաւոր եւ ատելավառ աչքերուն առջեւէն: Որբերը կը տեղաւորուէին նախ Ալի պէյ կոչուած շէնքը, որմէ ետք ալ բժ. Շեփըրտի հիւանդանոցի շրջափակին մէջ. Հալաճեան որբանոցին կողքը: Հիւանդանոցը կը գտնուէր բարձր դիրքի վրայ եւ դիւրաւ կրնար թրքական հարուածներուն թիրախ դառնալ: Րէյ Փ. Թրեվիսի հրահանգով անմիջապէս կը քակուին որբանոցին սալաքարերը՝ փակելու համար պատուհանները: Այդ աշխատանքներուն ընթացքին գնդակահար կը գոհուի որբերէն ատանացի Մանուկը: Հակառակ ձեռք առնուած նախագգուշական միջոցներուն, որբանոցի շէնքը անապահով էր. այդ իսկ պատճառով որբերը կը տեղաւորուէին Հալաճեան որբանոցի բակին մէկ անկիւնը գտնուող ընդար-

ձակ գետնափոր քարանձաւը, ուր պիտի մնային աւելի քան երկու ամիս, մինչեւ ֆրանսական ուժերու հեռանալը քաղաքէն:

Երկու ամիսէ աւելի տեւող այդ պատերազմի ընթացքին Բէ. Փ. Թրեվիս արագահարուածը ձեռքին՝ առտուընէ մինչեւ իրիկուն կը կրակէր թրքական դիրքերու վրայ, իսկ գիշերները կը հսկէր որբերը, միաժամանակ կը մտածէր անոնց սննդամթերքը ապահովելու միջոցներու մասին, որովհետեւ պարենաւորման տեսակետէն ոչ մէկ նախապատրաստութիւն տեսնուած էր եւ այդ օրերուն ալ անհնար էր կազմակերպել²²⁸:

3. Որբերուն Այնթապէն հեռացումը

Այնթապի պատերազմին հայութիւնը հերոսաբար կռուեցաւ, «ունեցաւ գերմարդկային խոյանքներ», արձանագրեց պանծալի էջեր. այդ հերոսական խոյանքներուն մէջ իր պատուաւոր բաժինը պիտի ունենար նաեւ Բէ. Փ. Թրեվիս:

Թուրքերու եւ ֆրանսացիներու միջեւ կնքուած զինադադարէն օգտուելով Բ. Փ. Թրեվիս իր որբերուն գլուխն անցած՝ ամերիկեան դրօշին պաշտպանութեան տակ եւ նահանջող զօրքերուն հետ, դուրս եկաւ Այնթապէն եւ Քիլիսի ու Հալէպի ճամբով Պէլքրութ հասաւ 10 Յու-

²²⁸ Յուշամատեն Ճիպլիյի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, Հրատարակութիւն Նախկին Սաներու, Համագգային 1969, էջ 138:

նիս 1920-ին²²⁹:

Պէյրուֆ հասնելով՝ որբերը կը տեղաւորուին ծովեզերքը Քարանթինա կոչուած վայրը, վրաններու տակ:

4. Դէպի Ճըպէլ

NER-ը նպատակ ունէր Լիբանան հասնող բոլոր որբերը տեղաւորել քարաշէն որբանոցներու մէջ: Այնպէս որ Թրէվիս փնտռութներ կատարելէ ետք, ի վերջոյ Ճըպէլի (Պիպլոսի) մէջ կը գտնէ յարմար վայր մը, որ կիսաւեր էր. ան շերամապահութեան նախկին գործարան մը եղած էր: 1920թ. Սեպտեմբերին որբերը այստեղ կը տեղափոխեն: Տարածքը կը դառնար որբերուն առաջին բնակարանը, որուն նորոգութիւնն ու պատշաճ բնակելի վայր դարձնելը հրամայական անհրաժեշտութիւն էր:

Սկզբնական շրջանին, հսկայ շէնքը կը դառնար թէ ննջարան, թէ ճաշարան, թէ դասարան եւ հանդիսարան:

Որբանոցը սկզբնական շրջանին կ'ունենայ 500-է աւելի որբեր. պարբերաբար նոր կարաւաններ կը հասնին եւ որբերու թիւը կը գերազանցէ 700-ը²³⁰: Որբերու քանակի հետզհետէ աճը անհնար պիտի դարձնէր անոնց

²²⁹ Ձեռագիր Յուշեր Կոստան Պանտիկեանի, Լջ 8: Տէս նաև, Յուշամատեան Ճիպէլի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, էջ 139:

²³⁰ Յուշամատեան Ճիպէլի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, նոյն տեղը:

տեղաւորումը որքանոցէն ներս, որովհետեւ սենեակները անբաւարար էին: Բարեբախտաբար որքանոցի ընդարձակ տարածքը պիտի լուծէր տեղաւորման խնդիրը: Այստեղ էր որ պիտի բացայայտուէր Րէյ Փ. Թրէվիսի եռանդն ու տկարութիւն չճանչցող կամքը: Ուստի ուսուցչական կազմի անվերապահ համագործակցութեան շնորհիւ, կարելի կ'ըլլայ պատրաստել խնամուած կրթական եւ շինարարական ծրագիր մը:

Գործող մեծ շէնքի կողքին կը վերանորոգուին մէկերկու տասնեակի հասնող, իրարու կից սենեակներ, իբրեւ դասարան: Կը պատրաստուին գրասեղաններ, գրատախտակներ, ամպիոններ, կ'ապահովուի անհրաժեշտ գրենական պիտոյքը, որով որբերը բարեյաջող կը մտնեն իրենց դասարանները:

5. Շինարարական աշխատանքներ

Կրթական գործի բարեյաջող ընթացքէն ետք, կը սկսին իրագործել շինարարական ծրագիրը, ծաւալուն աշխատանք մը՝ բաժնուած տարիներու վրայ: Սակայն ննջարան-ճաշարանի, դասարաններու չորս բոլորտիքը խոպան հողեր էին, քարքարոտներ, քարաբլուրներ, պանանի ծառերու անծայրածիր շարքեր, ամէն կարգի անխնամ աճած պտղատու եւ անպտուղ ծառեր, վայրի խոտեր, թուփեր, մէկ խօսքով՝ անհրապոյր եւ վախազու վայր մը, ուր օձերն ու կարիճները ազատօրէն կը թափառէին: Այդտեղ էր դէպի ծով երկարող զառիթափը, որ պի-

տի հարթուէր եւ պատրաստուած յատակագիծերու հիման վրայ տրամադրուէր նոր շինութիւններու: Որբերու ճակատի քրտինքով պիտի կառուցուէր Ուորտ Նոլը, ընդարձակ սրահ մը, մօտ 1000 հոգի ընդունելու յարմարութիւններով, յար եւ նման այն մեծ սրահին, որ Նիքըլ Նոլ անունը պիտի կրէր եւ պիտի գործածուէր թէ՛ իբրեւ ննջարան եւ թէ իբրեւ հանդիսասրահ, որովհետեւ մինչ այս շինութեանց աւարտը, որբերուն թիւը պիտի գերազանցէր հազար չորս հարիւրը: Պիտի կառուցուէր մինչեւ 1500 հոգի հիւրընկալող ճաշարան մը, պիտի շինուէին գրադարան, ընթերցասրահ, երաժշտանոց եւ գրասենեակ: Այս ծրագրին կարելոր մաս կը կազմէր արհեստանոցներու խիստ առկայութիւնը, չափահասներու աշխատանք հայթայթելու համար: Կը կառուցուի՝ փուռը, խոհանոցը, լուացարանը, դերձակատունն ու կօշկակարատունը, դարբնոցն ու ատաղձագործարանը, նաեւ ջուկհսկանոցը²³¹:

Շինարարական աշխատանքի երրորդ քաժինը կը կազմէր շէնքերու շուրջը գտնուող հողաբլուրներու յոկումը, մարգագաշտի կառուցումը, բազմաթիւ բակերու յարդարանքը, ճամբաներու շինութիւնը, ծառերու եւ ծաղիկների տնկումը:

²³¹ Յուշամատենան Ճիւլէյլի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, նւթն տեղը:

Առանց Ռէյ Փ. Թրեվիսի անձնական նախաձեռնության եւ անկոտրում կամքին, դժուար թէ որքանոցը ստանար բարեկարգ, գրաւիչ ուսումնական հաստատութեան մը պատկերը:

6. Ազգային գաղափարախօսութիւն

Յետպատերազմեան եւ յետցեղասպանութեան տարիներուն Միջին Արեւելքի հայկական նորահաստատ գաղթօճախներուն մէջ սկիզբ առած էր վերակառուցման, վերահաստատման եւ հայապահպանման գործընթաց, որ կը հովանաւորուէր ազգի պատասխանատուներու կողմէ. անոնք համոզուած էին, որ ետդարձի ճանապարհը անհնար է եւ հարկաւոր է յարմարուիլ տեղական պայմաններուն, իսկ «նոր հայ»ը պէտք էր տիրապետէր հայերէն լեզուին, աւանդապահը՝ հայ մշակոյթին. պէտք է կազմէր հայ ընտանիք եւ այս ձեւով կրնար իր մասնակցութիւնը ունենալ Մեծ Եղեռնէն ետք հայութեան վերընձիւղումին:

Ազգայնական գաղափարներով առաջնորդուող այս հոսանքը կը փորձէր Մեծ Եղեռնին յիշողութիւնն ու ցարը, ինչպէս նաեւ թուրքերուն նկատմամբ ատելութեան զգացումը դարձնել գլխաւոր շաղախը սկիզբ առած ազգային վերակառուցման գործընթացին: Սուրիոյ, Կիլիկիոյ, ապա՝ Լիբանանի, Եգիպտոսի ու Յունաստանի հայկական որքանոցներուն մէջ հաստատուած ծնողագուրկ մանկահասակներն ու չափահասները, իրենց դաստիա-

րակութեամբ եւ համագաղափարակից տարրեր դառնալու ճանապարհին ծնունդ պիտի տային նոր հայ մարդու գաղափարական միատարրացումին:

Հայկական որբանոցներէն շատեր կը կառավարուէին Ամերիկեան Միսիոնարական NER Կազմակերպութեան կողմէ: Անոնց մօտ տիրապետողը կրօնական-բողոքական դաստիարակութիւնն էր, այնպէս որ, յաճախ հակադրութիւններ կային, մէկ կողմէ այդ օրերուն տիրապետող հայկական ազգայնական եւ միւս կողմէ միսիոնարական դաստիարակութեան հետեւողներու միջեւ: Ռէյ Թրեվիս Ճըպէյլի մէջ իր տնօրինութեան տարիներուն հայամէտ եղաւ եւ հակադրութիւններէն հեռու պահեց իր հաստատութիւնը: Ան Ճըպէյլի որբանոցին մէջ աշխատանքի հրաւիրեց հայ ուսուցիչներ, որոնք ջատագովներն էին վերականգնումի եւ վերակառուցումի հայկական գաղափարախօսութեան: Ճըպէյլ հրաւիրուեցան այնպիսի անձնատրութիւններ, ինչպիսիքն են՝ Սահակ Բ. Կաթողիկոս, Երուանդ Օտեան, Վահան Թեքեան, Նիկոլ Աղբալեան, Երուանդ Խաթանասեան, Խոսրով Թիւթունճեան եւ ուրիշներ²³², որոնք դասախօսութիւններ կարդացին որբերուն: Հաստատութիւնը օժտուած էր հայերէն գիրքերու հարուստ գրադարանով մը, ունէր իր մարզական ու գրական ակումբները, թատերախումբը,

²³² Թաշճեան Վահէ, Այնթապ-Միսիոնարներ, Ռէյ Թրեվիս եւ հայկական իր ժառանգութիւնը: <https://www.houshamadyan.org/arm-mapottomanempire/vilayetaleppe/ayntab/religion/missionaries.html>.

փողերախումբը, ինչպես նաեւ հոս կը հրատարակուէր որբերու “Հոսանք”²³³ իսկ վերջը “Տուն”²³⁴ պաշտօնաթերթերը:

Այս բոլորը կ'ապացուցեն թէ ինչո՛ւ Լիբանանի տարածքին գտնուող բազմաթիւ հայկական որբանոցներու շարքին առաւել յայտնի էր Թրէվիսի ղեկավարած որբանոցը, որ իր հետքերը ձգած էր Լիբանանի եւ կարելի է ըսել ընդհանրապէս Սփիւռքի հայկական ընկերութեան վրայ: Այս որբանոցէն շրջանաւարտ հարիւրաւոր հայեր հետագային, իբրեւ մտաւորական կամ հասարակական գործիչ, իրենց մասնակցութիւնը ունեցան նոր սերունդի ազգային դաստիարակութեան գործընթացին²³⁵:

7. Ճըպէլի որբանոցին վախճանը

Այդ տարիներու, 1922-1923թթ., NER-ի Լիբանանի մասնաճիւղի տնօրէնութիւնը համաձայն չէր Թրէվիսի որդեգրած սկսգբունքներուն եւ հակադիր ու անհանդուրժող կեցուածք ցուցաբերեց անոր ծրագիրներուն դէմ: Ուսուցիչներ վտարուեցան Ճըպէլի որբանոցէն: Այս քայլը առիթ տուաւ որբերու ըմբոստութեան եւ հայկական մամուլին մէջ NER-ի դէմ բողոքի յօլուածներուն, որոնց յա-

²³³. Յուշամատեան Ճիպէլի Ամերիկեան Որբանոցի 1920-1925, նոյն տեղը, էջ 77:

²³⁴. Նոյն տեղը, 139:

²³⁵. Թաշճևան Վահէ, <https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetaleppe/ayntab/religion/missionaries.html>.

ջորդեց NER-ի 1925-ին առած որոշումը այն էր, վերջնականապես փակել Ճըպէյլի հաստատութիւնը: Այս ողջ ընթացքին Թրեվիս պաշտպան կանգնեցաւ: Դաւարուած ուսուցիչներուն եւ ըմբոստացած որբերուն: Ասոր ալ հետեւանքը այն եղաւ որ այնուհետեւ Թրեվիս չյրցաւ պաշտօն ստանձնել NER-ի ցանցէն ներս Լիբանան չամ այլուր²³⁶:

Ընդ Թրեվիս սիրելի եւ փայփայելի անուն մը մնաց Ճըպէյլէն շրջանաւարտ որբերուն յիշողութեան մէջ: Հետագային որբերէն շատեր իրենց գրաւոր յուշերուն մէջ դրական տպաւորութիւններով հանդէս եկան: Եթէ ընդունինք այն իրողութիւնը որ հայ որբանոցներէն (ասոնց շարքին յատկապէս Ճըպէյլէն) դուրս չկած որբերը նշանակելի դերակատարութիւն ունեցած են Լիբանանի եւ ընդհանրապէս Սփիւռքի հայկական կառոյցներէն ներս, ապա հաստատ կրնանք ըսել որ Թրեվիս առաջատար դեր խաղացած անձնաւորութիւն մըն է այս ընդհանուր գործընթացին մէջ:

Ճըպէյլի Ամերիկեան Ռոբանոցը կը փակուի 1925 թ.-ին: Դանիական Ք.Ս.Էյ կազմակերպութիւնը կը գնէ կալուածը 20.000 Ամերիկեան տոլարի եւ Մարիա Ճաքըպսընի տնօրէնութեամբ Թոշնոց Բոյն որբանոցը Սայտայէն կը փոխադրուի Ճըպէյլ 1928 թ.-ին:

²³⁶-Թաճեան Վահէ, նոյն տեղը:

Եզրակացութիւն

Հայութեան մնացորդացն էր, որ կիզիչ անապատի մէջով թափառական, սովահար, կիսամերկ կեանքի մը դառնութիւնները ճաշակած բարեբախտ օր մը ինքզինք պիտի գտներ Նիր Իսթ Բիլիֆի նորաբաց որբանոցներուն մէջ:

Որբանոցներու ցանցին մէջ իւրայատուկ տեղ յատկացուած էր Ճըպէյլի որբանոցին, իր իւրայատուկ կառոյցով ու հայաշունչ մթնոլորտով: Ան որբանոցային սովորական հասկացութենէն տարբեր էր, որովհետեւ հոնկէ դուրս եկող սերունդը կեանքի թոհուրոհին մէջ ասպարէզ կը փնտռէր իր անսահման եռանդն ու խանդավառութիւնը միախառնելու իր անցեալի ցաւին եւ կերտելու նորը, նոր յոյսով:

THE AMERICAN ORPHANAGE OF JEBAIL

Garo Derunian
Free Researcher
Beirut, Lebanon

Key words: Near East Relief, Armenian, Orphans, Allied, Powers, First World War, Jebail, Orphanage, Foreign Organizations, Aintab, Kostan Pantikian.

The present article shades light about the saving of orphans by foreign orphan organizations within the territories, which were under the patronage of the Allied Powers at the end of the First World War. In the article there is reference not only to the Near East Relief Orphanage in Aintab, but also to the establishment of the American Orphanage in Jebail, Beirut. In this regard upon researching the topic, we have used Kostan Pantikian's memoirs about the latter orphanage, which are being published by us for the first time for the scientific circles.

**«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ը ՄԷՎ ԴԱՐԷՆ
ԱԻԵԼԻ ՀԱԻԱՏԱՐԻՄ Է ԻՐ ԿՈՉՈՒՄԻՆ**

1000-ից ավելի հայ որբերի մայր դարձաւ Մարիա Եակոբսեն՝ Լիբանանի Ճըպէյլ թաղամասում 100 տարի առաջ հիմնելով «Թոչնոց բոյն» մանկատունը եւ մայր թոչունի պէս տասնամեակներ շարունակ կերակուր հայթայթեց այդ բոյնում խնամուող մանուկների համար: «Թոչնոց բոյն» հաստատութեան տնօրէն Տ. Տաճատ վարդապետ Աշըգեանը գրոյցում վստահեցրեց, որ մեծանալուց յետոյ նրանց մեծ մասը կապը չի խզել Եակոբսենի ու միւս խնամակալների հետ:

- Հայր սուրբ, Մարիա Եակոբսենի հիմնած որբանոցն ինչո՞ւ կոչուեց Թոչնոց բոյն:

- Մարիա Եակոբսեն ուզեց այդ տունը Թոչնոց բոյն կոչել, որովհետեւ, ինչպէս թոչուն մը իր գաւակները կը կերակրէ, այնպէս ալ ինք տարիներ շարունակ այդ տան կերակրողը եղաւ, այդ փոքրիկներուն մայրը դարձաւ: Իր բոլոր գրութիւններու մէջ արգիլած էր որբանոց բառը գործածել. տուն անունը կը գործածէր: Մենք 100 տարի առաջ վերածնունդ ապրեցանք Լիբանանի մէջ՝ շնորհիւ նաեւ մեր սիրելի Մարիա Եակոբսենի, որ, հակառակ իր հանգիստ կեանքին Տանիմարքի մէջ ձգեց ամէն ինչ, եկաւ Լիբանան եւ Ճըպէյլ շրջանէն ներս հաստատեց «Թոչնոց բոյն» որբանոցը:

- Ինչպէ՞ս էր նա գրանցում այն երեխաներին, որոնք անգամ խօսել չգիտէին:

- Երբ Լիբանան եկան այդ փոքրիկները անուն, ազգանուն չունէին: Սոոցած էին: Յայտնի չէին անոնց ծնողներն ալ: Այնքան գեղեցիկ կերպով ինք իրենց մասին արտայայտուած է եւ արխիւներուն մէջ արձանագրած է, որպէսզի երբեւիցէ, որեւէ օր ծնողք մը, մայր մը գայ եւ գաւակը փնտռէ, գտնէ:

- Նա կամ իր աշխատակիցներն ի՞նչ լեզուով էին շփում հայ մանուկների հետ:

- Մարիա Եակոբսէնը 100 տարի առաջ պայքարեցաւ, որ այդ փոքրիկները որքանոցին մէջ հայերէն լեզուն, հայկական մշակոյթը պահպանեն: Պայքարեցաւ տեղւոյն կառավարիչներուն դէմ, որ փոքրիկները ոչ միայն արաբերէն սորվին, ոչ միայն տեղւոյն օրէնքները յարգեն, այլ սորվին հայերէնը եւս: Այստեղ կը տեսնենք այն սերմը, որ Մարիա Եակոբսէն ցանեց փոքրիկներուն մէջ: Յատկանշական է, որ ինք եւս սորվեցաւ, ինք եւս գործածեց այդ լեզուն եւ աշակերտներուն հետ հայերէն խօսեցաւ:

- Մարիա Եակոբսէնից յետոյ ովքե՞ր էին զբաղում որբերի խնամքով եւ մանկատան ղեկավարման աշխատանքներով:

- Հակառակ բոլոր դժուարութիւններուն՝ մօտաւորապէս 40 տարի շարունակ Մարիա Եակոբսէն ծառայե մեր ժողովուրդին, ծառայեց մեր մանուկներուն, ծառա

շրջանի հայութեան: Մարիա Եակոբսեն լիբանանահայութեան արմատներուն ծիլ մըն էր: Եւ այդ ծիլը մեծցաւ, այսօր 100 տարի էտք, հպարտօրէն մենք կը նշենք «Թռչնոց բոյն»ի 100-ամեակը: «Թռչնոց բոյն» որքանոցի մէջ Մարիա Եակոբսենէն էտք ուրիշ Տանիմարքէն միսիոնարներ շարունակեցին աշխատանքը՝ մինչեւ 1970թ., որմէ էտք «Թռչնոց բոյնը» յանձնուեցաւ: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնամքին:

- Այսօր ուլքէ՞ր են դառնում մանկատան սաներ:

- Մենք այդտեղ ունինք փոքրիկներ, որոնք որբեր չեն, սակայն կարիքաւոր կամ ամուսնաւուծուած ընտանիքներու զաւակներ են, որոնց մէջ այսօր նոյնպէս կը փորձենք սերմանել սերը դէպի հայոց լեզուն ու մշակոյթը՝ օգտուելով Մարիա Եակոբսենի շունչէն, որ այդտեղ կը գտնուի: 2015 թուականին կառոյցը օծուեցաւ Արսամ Պեգիկեան թանգարանով: Մեր բոլոր փոքրիկներուն յիշատակները, իրենց կատարած գործերը այդտեղ պահպանուած են: Եւ այսօր մենք մեր աչքերը սեւեռած այդ թանգարանին՝ կը փորձենք թանգարանի յուշերով ստեղծել նոր յուշեր, որպէսզի պահենք ցեղասպանութենէն ճողոպրած մանուկներու յիշատակը:

- Մեծացած որբերը կարողացա՞ն կեանքում իրենց տեղը գտնել, եւ ընդհանրապէս նրանք միմեանց հետ կապ պահպանու՞մ են:

- Եղան փոքրիկներ, որոնք գտան իրենց ծնողները: Այսօր կան փաստաթուղթեր, որոնց մեջ յստակ կերպով արձանագրուած է. «Այսինչ մանուկը կապոյտ աչքերով, ձեռքը վիրաւորուած», վարը ծանօթութիւն գրուած է՝ մայրը եկաւ, տարաւ: Փոքրիկներ կային, որոնք իրենց կեանքը շարունակեցին այդտեղ: Կան փոքրիկներ, որոնք որդեգրուեցան եւ ուրիշ երկիրներ տեղափոխուեցան: Ոմանք այսօր ողջ են, մեզի հետ են, կը վկայեն, եւ իրենց աչքերը արցունքով կը լեցուին, հպարտութեամբ կ'արտայայտուին (մամայ)ի մասին: Կան փոքրեր, որոնք մամային օգտակար կը դառնային. անոնցմէ շատեր ինքնուրոյն դարձան եւ իրենց կեանքի ուղին ընտրեցին: Մեծամասնութիւնը այդ տան արժէքը գիտցաւ: Մանուկներէն շատեր դարձան դէկավարներ, ուսուցիչներ, «Թոչնոց բոյն»ի օգնականներ: Այսօր մենք ունինք «Թոչնոց բոյն»ի 1970-էն ետք եկող աւարտական աշակերտներու միութիւն: Ունինք նաեւ երիտասարդակերտ միութիւն, որ միշտ փոքրիկներուն օգտակար կը դառնայ:

Իր ողջ գիտակցական կեանքը Մարիա Եակոբսէնը նուիրեց ցեղասպանութենէն մազապուրծ եղած հայ մանուկներուն: Օգտակար եղաւ նաեւ լիբանանահայ համայնքին: Մեր ժողովուրդը երախտագիտօրէն գլուխ կը խոնարհի հազարաւոր որբուկներու սիրելի մայրիկի յիշատակի առջեւ:

**Հարցազրոյցը վարեց
Մարիամ Յովսէփեանը**

ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ
ԴՐԱՆՏ ԷՐ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ը



Լիբանանում հիմնուած «Թոշնոց բոյն» որբանոցը տարիների ընթացքում երկրորդ տուն է դառնում Մեծ եղեռնից փրկուած հազարաւոր հայ մանուկների համար: Դեռէս Ատանայի ջարդերի ժամանակ դանիացի միսիոներուի Մարիա Եակոբսէնը փորձում է օգտակար լինել որբացած հայ մանուկներին: Նա սովորում է հայերէն եւ շուտով իբրեւ բուժքոյր գալիս է Արեւմտեան Հայաստան: Խարբերդում հաւաքում է հայ որբերին: Օգնում է ոչ միայն նրանց, այլեւ հայ կանանց ու ծերերին: Նա նաեւ արեւմտահայութեան ջարդերի ականատեսն էր: Մարդասիրական գործունեութեան համար թուրք ոստիկանները մի քանի անգամ ձերբակալում են նրան: Մարիա Եակոբսէնն ու նրա գործընկերները մեծ ջանքեր են գործադրում հայ տարագիրներին սննդով եւ անհրաժեշտ պարագաներով ապահովելու համար: Դանիացի այդ միսիոներուիին շուտով Լիբանանում կարողանում է տարածք ու շինութիւն գնել, որտեղ հիմնում է «Թոշնոց բոյն» որբանոցը: Այն հայ որբերի համար մանկութեան

տարիների դրախտն էր, իսկ Մարիա Եակոբսենը՝ երեխաների երկրորդ մայրը: Այնտեղ անցկացրած տարիները յուզմունքով եւ անհուն գործով է յիշում յիշեալ հաստատութեան նախկին սան Արփինէ Յովսէփեան-Պաղտասարեանը:

- *Տիկին Արփինէ, ինչպէ՞ս յայտնուեցիք «Թռչնոց բոյն» մանուկների տանը:*

- Մայրս ջարդ չէ տեսած, որովհետեւ ջարդէն ետք ծնած է, բայց բազմիցս տեղահանուած (մինչեւ 1935 թ. 3 անգամ գաղթած է): Վերջին անգամ Լիբանան հաստատուած է: Իմ ծնունդէն ետք ծնողներս Դամասկոս տեղափոխուած են՝ գործ փնտռելու: Մայրս ֆրանսական *ամբասաղին* (ղեսպանատան) մէջ խոհարար եղած է: Այս իսկ պատճառով չէր կրնար երկու աղջիկներու հետ համատեղ աշխատանքի երթալ: Ուստի պատուելիին խորհուրդով մեզ Դամասկոսէն կը տեղափոխէ Պէյրութի որբանոց:

- *Ձեզ ինչպէ՞ս այնտեղ ընդունեցին, չէ՞ որ ծնողներ ունէիք:*

- Ես եւ քոյրս «Թռչնոց բոյն» տեղափոխուած ենք 2- Փետրուար 1947 թ.-ին: 4 տարեկան էի, քոյրս ինձմէ մէկ տարի մեծ էր: Նախ մեզ չընդունեցին, որովհետեւ ծնողագուրկ չէինք (հայր եւ մայր ունեցողին չէին ընդուներ): Երկրորդ անգամ պատուելիին կողմէ գրութիւն մը

կր դրկուի, ուր կը յայտնուի թէ այս փոքրերուն մայրը իրենց ապրուստը հոգալու համար տան դուռը կը փակէ եւ գործի կ'երթայ: Օր մը անոնք կերակուր եփելու համար տան մէջ օճախ վառեր են եւ այրեր: Այդ գրութենէն ետք երկուքս ալ ընդունուեցանք:

- *Յիշու՛մ էք Ձեր առաջին զգացողութիւններն ու սպաւորութիւնները:*

- Երբ հոն հասանք, մեզ փոքրերուն բաժինը դրկեցին: Մեր ուրախութիւնը անսահման էր: Այնքան երջանիկ, ուրախ խաղացող, խնդացող էին անոնք: Անոնց ոտքերը բոբիկ էր: Հարուստ չէին, բայց այդքանը մենք չէինք հասկնար, որովհետեւ մենք իրենցմէ լաւը չէինք: Սկսանք մենք ալ խաղալ:

- *Մարիա Եակոբսենի գործունէութեան մասին Ձեր ծնողները մինչ Ձեզ մանկատուն տանելը ի՞նչ էին լսել, որ իրենց երեխաներին վատ:սիւնցին օտարազգի այդ միսիոներու հիմնած հաստատութեան խնամքին:*

- Կը պատմէին, որ Մարիա Եակոբսենի մայրը միսիոներական տիկնանց միութեան անդամ եղած էր: Երբ կիներով ժողովէն դուրս նստած իրարու հետ կը իօսին, որ Ատանայի ջարդերէն ետք այսպիսի որբեր կան, Արեւմտահայաստանի մէջ ջարդերը կը շարունակուին. շատ վայրագ ոճիրներ կ'ըլլան: Ինքը՝ Մարիան, կը լսէ եւ շատ կը յուզուի. կ'ըսէ. «Մտմա, ես ի՞նչպէս կրնամ

օգնել այդ որբերուն: Ինծի դրամ տուր, ես ալ օգնեմ»: Մայրը կ'ըսէ. «Աղջիկս, եթէ ես քեզի դրամ տամ, ես օգնած կ'ըլլամ: Մտածէ, թէ ինչպէս կրնաս օգնել»: Առաւօտուն մօրը կ'ըսէ. «Ես մտածեցի: Մէկ տարի առանց շաքարի պիտի խմեմ թէյը, եւ այդ շաքարին դրամը որբերուն պիտի դրկեմ»: Ու այսպէս կը սկսի հայերուն օգնել: Երիտասարդուհի Մարիան ժամանակ մը անց ինք եւս մաս կը կազմէ միսիոներական կազմակերպութեան: Միաժամանակ բուժքոյր կ'ըլլայ: Հայերէն ալ կը սորվի, կ'երթայ Խարբերդ որբեր հաւաքելու: Մեծ ուրախութեամբ կը կատարէ այդ գործը: Այնքան կը սիրէ փոքրերը. ան հոգատար, գուրգուրալից աղջիկ մըն էր անոնց հանդէպ: (Հայը հային չ'ըներ ատիկա): Շրջան մը ետք, կը հիւանդանայ ու կը ստիպուի վերադառնալ: Առողջանալէն ետք, կրկին կը շարունակէ աշխատանքը: Ահաւոր բաներ տեսած է: Թուրքերու կողմէ անմարդկային արարքներուն ականատեսը եղած է (Կիները մերկացուցած, այրած են, ինքը տեսած է աչքով): Բայց չէ լռած, պռոթկացած է եւ ժարտարմայի հասցէին խօսքեր արտասանած, որուն պատճառով զինք տարած են ոստիկանատուն: Վերջը ազատ արձակած են իր ընկերութեան միջամտութեան շնորհիւ:

- *Իր հանդէպ ոստիկանական ձեռնարկներից նա վախեցն է եւ այլեւս չի փորձել պաշտպանել տեղահանուած հայերին:*

- Ո՛չ: Միսիոներուհին միայն փոքրեր չէր հաւաքեր, այլեւ՝ մեծեր: Ապահով տեղ չունեցողին իր քով սպաստան կու տար: Հետգիւտէն թիւի աճի պատճառով ուտելիք չէր կրնար հասցնել: Ժամանակ մը եղած է, որ օրական մէկ անգամ միայն սրմաւ տուած են, որ ողջ մնան (Պգտիկներուն 6 արմաւ տուած են, քիչ մը մեծերուն՝ 8, այր մարդոց՝ 10 հատ): Բանջարանոցը ամէն կը կողոպտէին ու կ'այրէին: Ո՛չ հաց, ո՛չ ցորեն, ո՛չ ուտելիք կար, որ որբերուն տային:

- *Յեղասպանութիւնից նաեւ Մարիա Եակոբսէնի շնորհիւ փրկուած հայ որբերի համար ի վերջոյ որբանոց է բացուում Լիբանանում, որտեղ ապաստանած փոքրիկները, Ձեր կարծիքով, անհրաժեշտ սնունդից, կենցաղային պայմաններից բացի, կարողացն չեն գտնել ընտանեկան ջերմութիւն:*

- Հայ որբերու մանկութեան տարիներու դրախտն էր «Թոշնոց բոյն»ը: Ան Պիպլոսի բերդին սրահներէն էր: 30 օսմանեան ոսկիի գնած էր Եակոբսէն: Ինք որբանոց բառէն կը բարկանար, Թոշնոց բոյն կ'ըսէր: Ինք կոչած էր Թոշնոց բոյն: Կառոյցի սրահներէն մէկը պաշտամունքի համար էր, միւսը՝ հանդիսութեան եւ այլ սրահ մըն ալ՝ դասախօսութեան: Սրահ մըն ալ, որպէս մանկապարտեզ: Անոր փոքրիկ դուռը միշտ բաց էր: Քովը բակ կար: Բակին մէջ քարէ նաւակ շինած էին: Մենք ատոր մէջ շատ կը խաղայինք:

Երբ «Թռչնոց բոյն» հասանք, ոչ լոյս, ոչ ալ ջուր կար: Աշակերտներուն հագուստները շատ հին էին: Մահճակալ շատ չկար: Անկողիները հարթ էին: Հարթերու վրայ կը պառկէին՝ մէկուն գլուխը այս կողմ, միւսինը՝ այն կողմ: Մէկ անկողինի մէջ գոյգ-գոյգ կը պառկէին, որ բաւէին: Լուացքի մեքենայ չկար: Մայրիկներ կու գային, ձեռքով լուացք կ'ընէին: Մեծ տղաքը ջրհորէն ջուրը կը կրէին, կը բերէին: Մանկապարտեզին պատին վրայ փոքրիկ տակառիկներ կային, ծայրը՝ ծորակ, աստոր տակը տաշտ (մետաղէ փոս աման, լագան) կը դնէին սեղանին վրայ, հոն կը լուացուէինք: Էշ ալ ունէինք: Իշապան ալ կար: Ան ալ կ'երթար քաղաքի կեդրոնէն, պուլպուլակէն, խմելու ջուր կը բերէր, կը լեցնէր մեծ տակառին մէջ: Դպրոցին մէջ հիւանդանոց ունէինք: Սրահին մէջ 10-12 անկողին կար: Առջեւի սենեակը դարմանատուն էր: Ատամնաբոյժ, աչքի բժիշկ կու գար շաբաթը մէկ անգամ: Ամիսը մէկ անգամ՝ ընդհանուր մարմինի բժիշկ, աշակերտներու առողջութիւնը կը ստուգէր: Մկիզըր ուտելիքը քիչ կը տրամադրուէր, որովհետեւ աղքատ էին, որոշ ժամանակ ետք, 2-3 տարուան ընթացքին ամէն ինչ ճոխացաւ: Մարիա Եակոբսկը քոյրը օգնութեան կանչեց: Եկաւ մեր մոստոն կամ մօրաքոյրը՝ տանեմարքերէն ըսած: Ան ալ իրեն պէս նուիրուած էր: Լաւ հայերէն գիտէին երկուքն ալ: Եւ ուրիշ միսիոնար մը եկաւ՝ Մարտա Սորենսնը: Վերջինը լաւ հայերէն չէր գիտէր, բայց շատ հայասէր էր: Պատուելին ալ դանիացի էր, կինն ալ եկաւ: Մեզի հետ սկսան մտեր-

մանայ: Կարծես թէ իրենք մեզմէ աւելի հայ էին: Ամէն կէսօր, ճաշի ժամուն, մամա Եսկոբսէնը կը միանար որբերու եւ ծիլ դասարանի սեղանը կը նստէր: Անոնք ինչ ուտէին, ինքն ալ կ'ուտէր: Մարութա Սորենսն ալ կոկոն դասարանին հետ կը նստէր: Մոստոն մեծ աղջիկներուն ճաշարանը կ'երթար, իսկ պատուելին ալ՝ սղոց ճաշարանը: Շատ կանոնաւոր օրակարգ ունէինք:

- *Նրանք իրենց սաների հետ խօսող էին Հայոց ցեղասպանութիւնից:*

- Ցեղասպանութեան մասին չէինք գիտեր, մեզի ոչինչ ըսած էին, բայց Ապրիլ 24-ի յիշատակի օրը կը նշէինք: Շատ փոքր էինք, մեր խելքը չէր հասներ: Երբ մեծցանք, 10-12 տարեկան եղանք այն ատեն իմացանք ու անդրադարձանք, որ դէպք մը պատահած էր, ուր մեծ թիւով հայեր գոհ գացած էին:

Օր մը մեր խոհարարին մատը պատռուած էր ու ցաւին չէր կրնար դիմանալ, հայերէն ալ լաւ չէր գիտեր: Մարիա Եսկոբսէն իրեն կ'ըսէ. «Դուն մոռցա՞ր, թէ մէկուկէս միլիոն հայեր ինչէ՞ր քաշեցին անապատին մէջ, դուն ասոր չե՞ս դիմանար»: Իսկ մեզի ալ կ'ըսէր. «Դուք հայ էք եւ հայ պիտի մեծնաք: Մեծ ջարդեր եղած են, որ հայերը վերանան: Դուք պիտի չձգէք, որ վերանան»: Լաւ ձեւով ուղեղնիս կը մտցնէին «հայ ենք» ըսելով:

- *Այդ առումով կարելոր էն հայեցի կրթութիւնն ու*

դաստիարակութիւնը: Ինչպէ՞ս էր կազմակերպուած ուսումնական գործընթացը:

- Մարիա Եակոբսէն կարդայու համար մեզի հայերէն աւելի շատ գիրքեր կու տար: Անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն դասաւանդութիւն ունէինք, բայց հայերէնը առաջնահերթ էր: Հայ մնալու պահանջքը առաւել շեշտուեցաւ, երբ Ճըպէլլի քաղաքապետ պարոն Ռիմոն Էտտէն այցելեց Թոշնոց բոյն: Քաղաքապետի՛ն երթալէն ետք Եակոբսէն ըսաւ. «Գիտէ՞ք, թէ ինչու Ռիմոն Էտտէն եկած էր: Ան ըսած էր, թէ պէտք է հայերէն գիրքերուն փոխարինէ արաբերէնը:

1952 թուականին Սուրիան արգելքներ դրած էր հայերէն լեզուով դասաւանդուող առարկաներուն համար: 1954-ին ալ մեր քով՝ Լիբանանի մէջ, եւս աշխատանք տարուեցաւ լեզուի օրէնքը հրապարակելու: Օրինակ՝ որբանոցէն սկսինք: «Բայց դուք հայ էք եւ հայ պիտի մեծնաք»: Ռիմոն Էտտէի Թոշնոց բոյն այցելելու պատճառը հայերէն լեզուի սահմանափակումն էր, բայց Եակոբսէն Էտտէին կ'ըսէ. «50 գիրք կ'ուզես դնեմ, կը դնեմ: Արաբերէնը պարտաւոր են սորվելու, բայց իրենք հայ են, հայութիւնը պիտի չկորսնցնեն»: Երեք ժամ ինք մեր տեղը Ռիմոն Էտտէին հետ վիճաբանած է եւ դասացուցակէն չէ հանած հայերէնը: Եթէ 11 արաբերէն գիրք եկաւ Թոշնոց բոյն, անոր փոխարէն Եակոբսէն 11 գիրք հայերէն բերաւ:

- Կեանք մտնելու համար մանկատան դպրոցում ստացած գիտելիքը բաւարար համարու՞մ էր Մարիա Եակոբսենը, եւ արդեօք կարողացա՞ն սաներն իրենց տնոյր գտնել:

- Եակոբսեն ամիսը անգամ մը վիճակացոյցները կը ստուգէր, ինչպէս դուն կը բերես ծնողքիդ կը ցուցնես նիշերդ: Իբրեւ մայր մենք ալ իրեն կը ցուցնէինք: Ձեռագործի դաս կ'առնէինք, այդ ձեռագործները մէկ-մէկ կը ստուգէր: Ուսուցիչներուն կը ստիպէր, որ շիտակ նստինք: Նիստուկացին, կենցաղավարութեան շատ ուշադիր էր: Տնտեսագիտութիւնը ճիշդ պիտի սորվէինք: Լուացք ընելու, ծալելու, շտկելու, մաքրելու ձեւերուն կը հետեւէին: Նոյն կրթութեամբ ու սիստեմով եւ իմ զաւակներս կրթած եմ: Շրջապատիս փոքրերը՝ ըլլան ընտանեկան, ըլլան դրացիներուս. տունս մանկապարտէզի պէս միշտ լեցուն կ'ըլլար: Բոլորին օրինակ եղեր է Ճըպէյի «Թոչնոց բոյն»ին դաստիարակութիւնը: Եւ բոլորն ալ նոյն ձեւով կը շարունակեն իրենց զաւակներուն հետ:

- *Յատկապէս Մարիա Եակոբսենի ո՞ր խօսքերն են տպաւորուել Ձեր յիշողութեան մէջ:*

- Ինչպէս մէկը մայրը կը կորսնցնէ եւ օրական կը յիշէ զայն, մեր քովը միշտ Մարիա Եակոբսենի մասին խօսք կայ: Բացառիկ աշակերտները բարձրագոյն դպրոց կ'ուղարկէին: Իմ դասընկերս շատ բացառիկ էր: Զայն ուղարկեցին «Նշան Փալանճեան» ճեմարան, ուր Սիմոն

Վրացեանք կը տնօրինէր: Խնդրեցին, որ ընդունուի: Տեղ
կար: «Մեղք է, այս չոճուխին փողոց մի՞ ձգէք», - աղաչե-
ր է Մարիա Եակոբսենը: Վրացեանը ուղղակի ամչցեր է ու
դառնալով Գառնիկ Բանեանին ըսած է. «Մեզի համար
ամօթ է. օտարը եկեր է եւ կ'աղաչէ, որ հայ փոքրիկը
ընդունինք մեր դպրոցէն ներս. ընդունեցէ՛ք զայն»:
Եակոբսենը ամէն գնով հայ մեծցնելու մասին կը մտածէր:
Կ'ըսէր, թէ պիտի չկորսուի հայը: Որքանոց բառը բնաւ
չենք լսած իրմէ: Չէինք գիտեր, որ որքանոց է: Ամրան
օղափախութեան կ'երթայինք: Քաղաքին մէջ, երբ որ
յայտնի ֆիլմ կու գար, մեզի կը տանէին: Տօնական օրերը
ձեռնարկներ կ'ընէինք: Տարին անգամ մը մարգահանդէս
կ'ըլլար: Այսօր ալ մենք իրար կը գտնենք իբրեւ հարա-
գատ ընտանիք: Չհանդիպեցանք «Թռչնոց բոյն»էն ելող
անձ մը, որ ամուսնալուծուած է: Մեզ այնպէս կը մար-
գէին, որ կտրիճ ըլլանք: Պայքար կայ: Կը պայքարիս, վեր-
ջը կը վայելէս ազատութիւն:

«Թռչնոց բոյն» որքանոցի հիմնադիր Մարիա
Եակոբսենը յաճախ կ'ըսէր, որ անկարելի էր մոռնալ Հա-
յոց ցեղասպանութեան տարիներուն հայերու հետ կա-
ռարուածը: Ան սրտացաւութեամբ հոգ կը տանէր իր սա-
ներու մասին: Կը գտնէր հովանաւորներ եւ կը բարոքէր
հաստատութեան պայմանները: Հաշուի կ'առնէր երեխա-
ներու դիտողութիւնները: Ամէն ինչ կ'ընէր, որ հայ
երեխաները չկորցնէին ազգային դիմագիծը: «Թռչնոց
բոյն» մանկատանը հայ երեխաներու ստացած դաս-

տիարակութիւնը առ այսօր օրինակելի կը համարուի շատերուն համար: Անոնք բոլորին կը պատմէին հայ ժողովուրդի նկատմամբ իրենց երկրորդ մայրիկ Մարիա Եակոբսէնի անսահման սիրոյ մասին եւ կը ցաւէին, որ Հայաստանի մէջ չկայ անոր արձանը:

Հարցազրոյցը վարեց
Մարիամ Յովսէփեանը
Պատմութեան ինստիտուտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1-ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ	
ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ	4
2-ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ	
ԵՐԿՈՒ ԽՍՔ	6
3- ԱՐՄԷՆ ՄԱՐՈՒՔԵԱՆ	
ՀԱՅ ՈՐԲԵՐՆ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՄՐՈՒԹԵԱՆ ՑԵՂԱՍՊԱ- ՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԻՐԱԽՈՒՄ.....	9
4- ԱՐՓԻՆԷ ԲԱԲԼՈՒՄԵԱՆ	
ՄԱՐԻԱ ԵԱԿՈԲՍԵՆ (ՃԵՅՔԸՊՍԸՆ) «ՕՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ՈՐՊԷՍ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՍՈՒԹԵԱՆ ՍԿՋԲՆԱՂԲԻՐ	22
5- ՍՈՒՍԱՆՆԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ	
ՈՐԲԵՐԻ ՀԱՅՐԻԿԸ	41
6- ՆԱՐԻՆԷ ՄԱՐԳԱՐԵԱՆ	
ՃԸՊԷՅԼԻ ՈՐԲԱՆՈՑԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ «ՏՈՒՆ» ԱՄՍԱԳԻՐԸ ԱԶԴԱԿ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹԵԱՆ	67
7- ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ	
ՈՐԲԵՐՈՒ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՈՐԲԱՇԽԱՐՀԻ ԱՍՏՂ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԷՋԵՐՈՒՆ	107
8- ԿԱՐՕ ՏԷՐՈՒՆԵԱՆ	
ՃԸՊԷՅԼԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԲԱՆՈՑԸ	119
9- ՄԱՐԻԱՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ (Հարցազրույց)	
«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ը ՄԷԿ ԴԱՐԷՆ ԱԻԵԼԻ ՀԱԻԱՏԱՐԻՄ Է ԻՐ ԿՈՉՈՒՄԻՆ	133
10- ՄԱՐԻԱՄ ՅՈՎՍԷՓԵԱՆ (Հարցազրույց)	
ՀԱՅ ՈՐԲԵՐԻ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ԴՐԱԽՏՆ ԷՐ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ը	137

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՈՐԲԵՐԸ
ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ -(15.11.2022)**

**ՆԻԹԵՐՈՒ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ
«ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ» ՈՐԲԱՆՈՑԻ
ՍՏԵՂԾՄԱՆ 100 ԱՄԵԱԿԻՆ**

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY**

**ARMENIAN GENOCIDE AND ORPHANS
ROUNDTABLE DISCUSSION-(15.11.2022)**

**COLLECTION OF PAPERS PRESENTED DURING
ROUNDTABLE DISCUSSIONS DEDICATED TO THE
100TH ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT
OF THE «BIRD'S NEST» ORPHANAGE**


(2500 m.)

ԳԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0682107

A π
111708



ISBN 978-9939-892-31-3



9 789939 892313